



Ռուբեն Գալչյանի հայերեն այլ գրքերը

Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ
 (1-ին հրատարակություն, ռուսերեն և հայերեն, 2005, 2-րդ հրատարակություն, ռուսերեն-հայերեն-անգլերեն, 2015)

Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում
 Հայաստան, Վրաստան և Ադրբեջան (հայերեն և ռուսերեն, 2007)

Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան
 Կեղծիքներ ու փաստեր (հայերեն և ռուսերեն, 2010)

Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները
 Պատմամշակութային և քարտեզագիտական ուսումնասիրություն (անգլերեն, 2012, ռուսերեն, 2013, պարսկերեն, 2015, հայերեն, 2017)

ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 1918 ԹՎԱԿԱՆԸ

Ռուբեն Գալչյան





5.36. Հայաստան և դրացի երկիրները. Պոսթըրն, 1917 թ.

**ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՆՉԵՎ 1918 ԹՎԱԿԱՆԸ**

*Հայ քարտեզագրության ծնունդը
և զարգացումը*

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ



ՁԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2017

ՀՏԴ 528.9(091)
ԳՄԴ 26.17դ
Գ 197

Գալչյան Ռուբեն
Գ 197 Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թվականը/ Ռ. Գալչյան. — Եր.:
«Զանգակ» հրատ., 2017. — 168 էջ:

«Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թվականը» աշխատությունն առաջինն է իր տեսակի մեջ և ընդգրկում է բոլոր հայերեն այն քարտեզները, որոնք գրվել կամ հրատարակվել են մինչև 1918 թ.: Հրատարակությունը հնարավորություն է ընձեռում հետաքրքրվողներին ու քարտեզ հետազոտողներին ծանոթանալու հայ քարտեզագրության ժառանգության նմուշներին:

Այստեղ ներկայացված են XX դ. պատրաստված հետաքրքրական և արժեքավոր ձեռագիր քարտեզներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը:

Գրքի անգլերեն տարբերակը (History of Armenian Cartography: Up to the Year 1918) 2017 թ. համատեղությամբ հրատարակվել է Երևանի «Զանգակ» և Լոնդոնի «Բենեթ ընդ Բլում» հրատարակչությունների կողմից:

ՀՏԴ 528.9(091)
ԳՄԴ 26.17դ

ISBN 978–9939–68–580–9

© Ռուբեն Գալչյան, 2017
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2017

Բովանդակություն

<i>Ներածական և խոսք գնահատանքի</i>	<i>5</i>
<i>Քարտեզները և նրանց սկզբնաղբյուրները</i>	<i>7</i>
<i>Նախաբան</i>	<i>11</i>
<i>Գլուխ 1. Ձեռագիր քարտեզներ</i>	<i>14</i>
<i>Գլուխ 2. Հայերեն առաջին տպագիր քարտեզը. 1695 թ.</i>	<i>26</i>
<i>Գլուխ 3. Տասնութերորդ դար</i>	<i>38</i>
<i>Գլուխ 4. Տասնիններորդ դար</i>	<i>55</i>
<i>Գլուխ 5. 1901–ից մինչև 1918 թ.</i>	<i>85</i>
<i>Գլուխ 6. Հավելյալ հետաքրքրաշարժ և ձեռագիր քարտեզներ. 19–20–րդ դդ.</i>	<i>127</i>
<i>Գրականության ցանկ</i>	<i>155</i>
<i>Ծանոթագրություններ</i>	<i>158</i>
<i>Անվանացանկ</i>	<i>160</i>

Ներածական և խոսք գնահատանքի

Քարտեզագիտության պատմությունը ներկայացնող միակ հայերեն աշխատությունը հրատարակվել է համարյա 60 տարի առաջ: Գիրքն անվանված էր Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695–1955), որի հեղինակն էր խորհրդային շրջանի հետազոտող Հովհաննես Ստեփանյանը (Հայկական ՄՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1957): Նշված աշխատանքը, սակայն, ունի մի քանի թերություն: Առաջինն այն է, որ այնտեղ բացակայում են բոլոր ձեռագիր քարտեզները, պակասում են նաև այն քարտեզները, որոնք ժամանակին հասանելի չեն եղել խորհրդային գիտաշխատողներին՝ պարզապես տարբեր երկրներ ճամփորդելու և եղած բոլոր քարտեզներն ուսումնասիրելու հնարավորություն չունենալու պատճառով: Կան նաև սխալներ, որոնք ներկա աշխատության մեջ փորձ է արվել լրացնելու ու սրբագրելու: Առկա է նաև մի կարևոր հանգամանք. Հ. Ստեփանյանի գիրքը պարունակում է միայն մեկ քարտեզի պատկեր, որն Ամստերդամի Համալսարանի աշխարհագրոյցն է, այն էլ՝ սպառնալից շատ անտրակ: Ներկա աշխատությունը պարունակում է բոլոր հրատարակված քարտեզները, նաև ատլասներից մեկ կամ մի քանի քարտեզի օրինակ, այսինքն՝ ավելի քան 90 քարտեզ: Բացառություն են կազմում այն քարտեզները, որոնց օրինակներն ընդհանրապես կորած են կամ անհասանելի, որոնք առկա չեն հանրային գրադարաններում կամ պահպանվում են միայն մասնավոր և անձնական հավաքածուներում:

Քարտեզագրության պատմությանը վերաբերող հաջորդ աշխատությունը Վենետիկի «Բազմավեպ» հայագիտական մատենադարանի հրատարակած Սահակ ձեմձեմեանի Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԼ դարուն. 1981 աշխատությունն է: Սակայն, ինչպես պարզ է խորագրից, այս աշխատությունը սահմանափակված է ժամանակով և հրատարակության վայրով:

2015 թվականին անգլերենով և հայերենով հրատարակել ենք երկու համառոտ հոդված՝ նվիրված հայ քարտեզագրությանը, բայց, կարծում ենք, արդեն իսկ ժամանակն է մի ամբողջական գիրք նվիրելու այս կարևոր նյութին: Հնարավորության սահմաններում գտել և քննարկել ենք գոյություն ունեցող բոլոր հայերեն քարտեզները և ատլասները՝ հրատարակված մինչև 1918 թ., աշխատելով նաև ներկայացնել դրանց արտատպությունները, որպեսզի ընթերցողը դրանք ևս տեսնի և կարողանա մեկ առ մեկ զննել՝:

Երկարատև փնտրտուքի ընթացքում ինձ օգտակար են եղել մեծ թվով ընկերներ և մասնագետներ, որոնցից ուզում եմ հատկապես նշել հետևյալ անհատներին. Տիգրան Զարգարյան՝ Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն, և նրա աշխատակազմից՝ Ալիս և Աիդա Ադամյաններ ու Հասմիկ Առաքելյան, Նանսի Կանդոյան՝ Նյու Յորքի քաղաքային գրադարանի քարտեզագրության մասի տնօրեն, Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինություն ու աշխատակիցներ, Կարապետ Մինասյան՝ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի գրադարանի փոխտնօրեն, Նունե Շահումյան, Անելկա Գրիգորյան՝ Հայաստանի պատմության թանգարան, Մարկ Մամիկոնյան՝ ԱՄՆ Ոսթերթիթոնի ՆԱԱՄԲ գրադարան, Գարի Լինդ-Սինանյան՝ ԱՄՆ Ոսթերթիթոնի Հայկական թանգարան, Բորիս Աձեմյան՝ Փարիզի Նոբարեան գրադարանի տնօրեն, Արա Ղազարյան՝ Ադինգտոնի Հայ մշակութային հիմնարկություն, Մաթյու Քարանյան՝ Փասադենա, ԱՄՆ, Հ. Վահան Հովակիմյան՝

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւն, Անուշ Ամսեյան՝ Երևանի ՀՅԴ-ի թանգարան, Բորիս Տեր-Պետրոսյան՝ Վիեննա, քարտեզագետ Համլետ Սարգսյան՝ Երևան, և դոկտոր Հարություն Մարության՝ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ով մեծապես օժանդակել է ինձ՝ նաև խմբագրելով աշխատանքիս ամբողջական տեքստը:

Շնորհակալ եմ Ազատուհի Սահակյանին՝ աշխատութեանս ուշադիր և մանրակարկիտ սրբագրելու համար: Իսկ հատուկ գնահատանքի խոսք ունեմ ասելու «Գառնի ինվեստ» կազմակերպութեան տնօրեն Բագրատ Ասատրյանին՝ գրքիս տպագրութեանը հնարավոր դարձնելու համար:

Աշխատութեան մեջ նշված տեղանունները ժամանակին օգտագործվածներն են, ինչպիսիք են, օրինակ՝ Թիֆլիս, Կոստանդնուպոլիս և այլն:

Տեքստում շեղագիր տրված են քարտեզների ու գրքերի վերնագրերն ու անվանումները, ինչպես նաև քարտեզներում նշված տեղանունները:

Տեքստի մեջ հայերենում ընդհանրացած գերմաներեն «մասշտաբ» բառի փոխարեն գործածել եմ «չափանիշ» բառը, իսկ քարտեզների անունը պարունակող «կարտուշի» փոխարեն գործածել եմ «ցուցատախտակ» բառը:

Աշխատութեանս մեջ անհատների անուններն ու ազգանունները նշել եմ այնպես, ինչպես որ իրենք են ժամանակին շարագրել:

Ռուբեն Գալչյան
Երևան, 2017

Քարտեզները և դրանց սկզբնաղբյուրները

- 1.1 Հայերեն առաջին աշխարհացույց քարտեզը. Մաստենադարան, ձեռագիր 1242, Կաֆա, 13–14-րդ դդ. (Մ)
- 1.2 Մոլորակների ծիրերը Ապիանոսի *Կոսմոգրաֆիայից*. Կիլիկիա, 1617 թ. (Մ)
- 1.3 Արևելյան կիսագունդը Ապիանոսի *Կոսմոգրաֆիայից*. Կիլիկիա, 1617 թ. (Մ)
- 1.4 Երկրագունդը իր 5 եղանակային գոտիներով. Ապիանոս, *Կոսմոգրաֆիա*, Կիլիկիա, 1617 թ. (Մ)
- 1.5 Երկրագունդը իր 2x9 եղանակային գոտիներով. Ապիանոս, *Կոսմոգրաֆիա*, Կիլիկիա, 1617 թ. (Մ)
- 1.6 Քեոմուրձեանի հայկական վանքերի ու եկեղեցիների քարտեզը. Կոստանդնուպոլիս, 1691 թ. (Մ)
- 1.7 Էջմիածնի մանրանկարը Քեոմուրձեանի քարտեզից. Կոստանդնուպոլիս, 1691 թ. (ԲՀ)
- 1.8 Սաղմոսավանքին կից դաշտը (ՌԳ)
- 1.9 Սաղմոսավանքի վերաբերյալ արձանագրությունը քարտեզի վրա (ԲՀ)
- 2.1 Վանանդեցու առաջին հայերեն քարտեզը՝ *Համատարած աշխարհացույցը*. Ամստերդամ, 1695 թ. (Մ)
- 2.2 Սեյլերգի *Նորագույն աշխարհացույցը*. Լոնդոն, 1675 թ. (ԲԳ)
- 2.3 Համատարած աշխարհացույցից. *Գարնանայինը*
- 2.4 Համատարած աշխարհացույցից. *Ամառնայինը*
- 2.5 Համատարած աշխարհացույցից. *Աշնանայինը*
- 2.6 Համատարած աշխարհացույցից. *Ձմեռնայինը*
- 2.7 Համատարած աշխարհացույցից աստղային բոլորակներ
- 2.8 Համատարած աշխարհացույցից բևեռային շրջաններ
- 2.9 Համատարած աշխարհացույցից մոլորակների ծիրերը
- 2.10 Համատարած աշխարհացույցի ցուցատախտակը
- 2.11 Համատարած աշխարհացույցից *Ջահան նյունա* անվանումը
- 2.12 Համատարած աշխարհացույցից Հայաստանի տարածաշրջանը
- 2.13 Երկու էջ *Բանալի Համատարածի աշխարհացույցին* գրքից. Ամստերդամ, 1696 թ. (Մ)
- 2.14 *Համատարած աշխարհացույց*. Վենետիկ, մոտ 1754 թ. (ՀԳ)
- 3.1 *Երկիր Անտենաց* քարտեզը. Վենետիկ, 1746 թ. (ԲԳ)
- 3.2 *Համատարած աշխարհացույց*, փոքրադիր. Վենետիկ, 1751 թ. (ԲԳ)
- 3.3 *Ատտեղայից երկինք*. Վենետիկ, 1747 թ. (ՌԳ)
- 3.4 *Աշխարհացույց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց*. Վենետիկ, 1751 թ. (ԲԳ)
- 3.5 *Գաւառք Հայաստանի*. Վենետիկ, նախքան 1784 թ. (ՌԳ)
- 3.6 *Աշխարհացույց Հայաստանեայց*. Վենետիկ, 1778 թ. (ԲԳ)
- 3.7 *Հայաստան*, Չամչեանի «Պատմութիւն հայոց» գրքից. Վենետիկ, 1784 թ. (ՌԳ)
- 3.8 *Համատարած աշխարհացույց քառակուսի*. Վենետիկ, Սբ Ղազար, 1784 թ. (ԿԱՄ)
- 3.9 *Աֆրիկա*, 67 x 48 սմ. Վենետիկ, Սբ Ղազար, 1786 թ. (ԿԱՄ)
- 3.10 *Ասիա*, 71 x 48 սմ. Վենետիկ, Սբ Ղազար, 1786 թ. (ԿԱՄ)
- 3.11 *Եւրոպիա*, 68 x 48 սմ. Վենետիկ, Սբ Ղազար, 1786 թ. (ԿԱՄ)
- 3.12 *Ամերիկա*, 66 x 47 սմ. Վենետիկ, Սբ Ղազար, 1787 թ. (ԿԱՄ)
- 3.13 *Լայնածաւայ տէրութիւն օսմանցոցն*. Վենետիկ, Սբ Ղազար, 1787 թ. (ԿԱՄ)
- 3.14 *Աշխարհացույց օսմանեան տէրութեան որ ՚ի յԵւրոպայ*. Վենետիկ, 1791 թ.
- 3.15 *Նեղոց Կոստանդնուպոլսոյ այն է պողոպ իջի: Ի նախնունն Վոսփորոն Թրակիոյ*. Վենետիկ, Սբ Ղազար, 1791 թ. (ՀԳ)
- 4.1 *Աշխարհացույց Մարմարա ծովուն*. Վենետիկ, 1805 թ. (ՀԳ)
- 4.2 *Պոնտոսի* քարտեզը. Վենետիկ, 1805 թ. (ՀԳ)

- 4.3 *Դարիա Խրիմի* քարտեզը. Վենետիկ, 1830 թ. (ԿԱՄ)
- 4.4 *Տաճկաստան Երոսյայ*. Վենետիկ, մոտ 1840 թ. (ԲԳ)
- 4.5 *Տաճկաստան Ասիայ*. Վենետիկ, մոտ 1840 թ. (ԲԳ)
- 4.6 *Հարթագունդք*. Վիեննա, 1850 թ. (ՀԳ)
- 4.7 Տատեանի ատլասի տիտղոսաթերթը (ԲԳ)
- 4.8 *Հայաստան աշխարհ* քարտեզն ատլասից. Վենետիկ, 1849 թ. (ԲԳ)
- 4.9 *Աշխարհագրնտ մակարդակ*. Վենետիկ, 1853 թ. (ՌԳ)
- 4.10 *Մասն Ասիոյ ըստ գրոց սրբոց*. Վենետիկ, 1853 թ. (ՌԳ)
- 4.11 Փոքր *Երկրագունտ*. Վիեննա, 1838 թ. (ՄՎ)
- 4.12 Մեծ *Երկրագունդը*՝ իր պատվանդանով. Վիեննա, 18?? թ. (ՄՎ)
- 4.13 Մեծ երկրագնդի զարդատախտակը (ՄՎ)
- 4.14 *Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց* քարտեզը Քաջունու դասագրքից. Վենետիկ, 1857 թ. (ՌԳ)
- 4.15 *Հայաստան* քարտեզը Աագեանի ատլասի Բ հրատարակությունից. Վիեննա, 1860 թ. (ՌԳ–Մ)
- 4.16 *Ոլորտք ծովուն Վանայ*. Բեռլին, 1864 թ.
- 4.17 *Միացեալ Նահանգք Ամերիկայի*. Կոստանդնուպոլիս, 1881 թ. (ՌԳ–Մ)
- 4.18 *Բրիտանական կղզիք*. Կոստանդնուպոլիս, 1881 թ. (ՌԳ–Մ)
- 4.19 *Քարտեզ նախկին Հայաստանի*. Թիֆլիս, 1882 թ. (ՀԳ)
- 4.20 *Շիրակ*. Վենետիկ, 1881 թ. (ՀԳ)
- 4.21 *Սիսուան. Կիլիկիա հին և նոր, Հայկական գաւառք, ԺԲ–ԺԴ դդ.* Վենետիկ, 1885 թ. (ՀԳ)
- 4.22 *Այրարատ, Աշխարհ հայոց մեծաց*. Վենետիկ, 1890 թ. (ՀԳ)
- 4.23 *Սիսական*. Վենետիկ, 1893 թ. (ՀԳ)
- 4.24 *Ադրանից երկիր*. Թիֆլիս, 1893 թ.
- 4.25 *Սասուն*. Թիֆլիս, 1895 թ. (ՌԳ)
- 4.26 *Գանձակի գաւառը*. Թիֆլիս, 1899 թ. (ՀԳ)
- 4.27 *Բուրանըխ կամ Հարք*. Թիֆլիս, 1899 թ. (ՌԳ)
- 4.28 *Արեւելեան Կիլիկիա*. Թիֆլիս, 1900 թ. (ՌԳ)
- 5.1 Մերկատորյան *Աշխարհագրնտ մակարդակը* «Գրպանի ատլաս»-ից. Վենետիկ, Սբ Ղազար, 1901 թ. (ՀԳ)
- 5.2 *Բորչալուի գաւառ*. Թիֆլիս, 1902 թ. (ՀԳ)
- 5.3 *Հիսիսային Ամերիկա*, «Ընդարձակ պատկերազարդ աշխարհագրութիւն» գրքից. Կոստանդնուպոլիս, 1902 թ. (ՀԳ)
- 5.4 *Սիւեմատիկ քարտեզ Հիմնարկութեանց Հայոց քարեգործ. ընկ.* Թիֆլիս, 1903 թ. (ՀԳ)
- 5.5 *Հայաստան եւ հարեան երկիրները*. Ժնև, 1904 թ. (ՌԳ–Մ)
- 5.6 *Մուշ–Սասուն*. Ժնև, 1904 թ. (ՌԳ–Մ)
- 5.7 *Չազալճա — Կ. Պոլիս — Գաճա էլի* քարտեզը Խաչկոնցի «Աշխարհագրութիւն» դասագրքից. Կոստանդնուպոլիս, 1904 թ. (ՌԳ–Մ)
- 5.8 Մայրցամաքների քարտեզները Խաչկոնցի դասագրքերից. Կոստանդնուպոլիս, 1904, 1910, 1912, 1914 թթ. (ՀԳ)
- 5.9 *Հայաստան*. Գահիրե, 1905–1906 թթ. (ՀԳ)
- 5.10 *Արեւելք*. Վենետիկ, Սբ Ղազար, 1906 թ.
- 5.11 *Հին Հայաստան*, Լէօ. Թիֆլիս, 1906 թ. (ՀԳ)
- 5.12 *Երեանեան նահանգի Շարուր–Դարալագեսզի եւ Նախիջեանի գաւառներ* քարտեզը. Թիֆլիս, 1906 թ. (ՀԳ)
- 5.13 *Երեանեան նահանգի Նոր–Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք* քարտեզը. Թիֆլիս, 1908 թ. (ՀԳ, Մ)
- 5.14 *Հին Հայաստանը եւ հարեան երկրներ*. Թիֆլիս, 1909 թ. (ՀԳ)

- 5.15 Հատված հայ բնակչության խտության քարտեզից. Բաքու, 1908 թ. (ՀԳԱԱ)
- 5.15ա Հայերի վիճակագրությունը նշող գույների աղյուսակը (ՀԳԱԱ)
- 5.16 Պատմական Հայաստան և հարեան երկիրները. Թիֆլիս, 1910 թ. (ՌԳ–Մ)
- 5.17 Հին Հայաստան և շրջակայ երկիրները. Կոստանդնուպոլիս, 1910 թ. (ՀԳ)
- 5.18 Փոքր Ասիա — Կովկաս քարտեզը «Առձեռն ատլաս»–ից. Վենետիկ, 1901 թ. (ՀԳ)
- 5.19 Հին Հայաստան և հարեան երկիրներ. Թիֆլիս, 1911 թ. (ՀԳ)
- 5.20 Հայաստանի մէջէն Քսենոփոնի արշաւանքը մինչև Սև ծով. Կոստանդնուպոլիս, 1913 թ. (ՌԳ)
- 5.21 Ընդարձակ քարտէս Օսմանեան պետութեան. Կոստանդնուպոլիս, 1913 թ. (ՀԳ)
- 5.22 Նորագոյն ընդարձակ քարտէս Պայքանեան պետութեանց. Կոստանդնուպոլիս, 1913 թ. (ՀԳ)
- 5.23 Հաղորդակցութեան մեծ ձամքաներու քարտեզը «Գրպանի ատլաս»–ից. Կոստանդնուպոլիս, 1914 թ. (ՀԳ)
- 5.24 Ասիա քարտեզը «Գրպանի ատլաս»–ից. Կոստանդնուպոլիս, 1914 թ. (ՆԳ)
- 5.25 Հայկական Կիլիկիա քարտեզը Տէր–Յակոբեանի «Ֆիզիքական, ազգագրական և քաղաքական աշխարհագրութիւն. ատլաս Հայաստանի»–ից դասագրքից. Թիֆլիս, 1904 թ. (ՀԳ)
- 5.26 Կովկաս քարտեզը Էլիբեկեանի «Դասագիրք աշխարհագրութեան»–ից. Թիֆլիս, 1914 թ. (ՀԳ)
- 5.27 Աբեղեանի Կովկաս քարտեզը «Աշխարհագրութեան դասագիրք»–ից. Թիֆլիս, 1914 թ. (ՌԳ)
- 5.28 Աբեղեանի Տաճկա–Հայաստան և հարեան երկրներ քարտեզը «Աշխարհագրութեան դասագիրք»–ից. Թիֆլիս, 1914 թ. (ՌԳ)
- 5.29 Հին Հայաստան, ըստ Կ. Յ. Բասմաջեանի. Թիֆլիս, 1914 թ. (ՌԳ)
- 5.30 Լինչի և Օսվալդի Հայաստան և հարեան երկիրներ քարտեզը. Թիֆլիս, 1913 թ. (ՌԳ–Մ)
- 5.31 Հին Հայաստան և իր դրացի երկրները քարտեզը. Թիֆլիս, 1914–1916 թթ. (ՀԳ)
- 5.32 Ռուս–թիւրքական ռազմաբեմ, Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներ. Թիֆլիս, 1916 թ. (ՀԳ)
- 5.33 Ռուս–թիւրքական ռազմաբեմ, Ալաշկերտի, Վանի և Ատրպատականի շրջաններ. Թիֆլիս, 1916 թ. (ՀԳ)
- 5.34 Ռուս–թիւրքական ռազմաբեմ. Հայաստան և հարեան երկիրներ. Թիֆլիս, 1917 թ. (ՀԳ)
- 5.35 Վասպուրականը քարտեզը Ա. Դոյի «Մեծ դեպքերը Վասպուրականում» գրքից. Երևան, 1917 թ. (ՌԳ)
- 5.36 «Երան» գրատան Հայաստան և դրացի երկիրները քարտեզը. Պօսթըն, 1917 թ. (ՀԳ)
- 5.36ա «Երանի» հրատարակած քարտեզի ցուցատախտակը. Բոստոն, 1917 թ. (ՀԳ)
- 5.37 Ժնևում պատրաստված քարտեզի բնօրինակի ցուցատախտակը. 1904 թ. (ՌԳ–Մ)
- 5.38 Թիֆլիսում տպագրված քարտեզի ցուցատախտակը. Թիֆլիս, 1917 թ. (ՀԱԱ)
- 5.39 Աշոտեանի հրատարակած քարտեզի ցուցատախտակը. Բոստոն, 1917 թ. (ՀԳ)
- 5.40 Աբեղեանի ատլասից Կիսազնդեր քարտեզը. Թիֆլիս, 1917 թ. (ՀԳԱԱ)
- 5.41 Աբեղեանի ատլասից Ելրոպա քարտեզը. Թիֆլիս, 1917 թ. (ՀԳԱԱ)
- 5.42 Խարաձեանի Հանքեր Հայաստանի քարտեզը. Նյու Յորք, 1915–1918 թթ. (ՀԳ)
- 6.1 Հայաստանի և Պարսկաստանի քարտեզը 5–րդ դ. Թիֆլիս, 1853 թ. (Մ)
- 6.2 Հայաստանի և նրան կից այլ երկրների քարտեզը. Սանկտ Պետերբուրգ, 1858 թ. (Մ)
- 6.3 Հնագույն Հայաստանի քարտեզը ոռուերենով. Սանկտ Պետերբուրգ, 1858 թ. (Մ)
- 6.4 Մակու քարտեզը. Ատրպատական, 1895 թ. (ՀԱԱ)
- 6.5 Սալմաստ քարտեզը. Ատրպատական, 1898 թ. (ՀԱԱ)
- 6.6 Սալմաստ քարտեզը. Ատրպատական, 1905–1915 թթ. (ՀՅԴ–Թ)
- 6.7 Հարթագունը, ըստ Չիթձեանի. Վան, 1899 թ. (ՀՊԹ)
- 6.8 Նախիջևանի շրջանի ձեռագիր քարտեզ. Էջմիածին, 1900–ական թվականներ (ՀԱԱ)
- 6.9 Բրուտեանի Հայաստան ու հարեան երկիրները քարտեզը. Ադեքսանդրիա, 1907 թ. (ՄՎ)
- 6.10 Ծալձեանի Պատմական Հայաստան և հարեան երկիրներ քարտեզը. Գիւլագարակ, Լոռի, 1916 թ.

- 6.10ա Շալձեանի քարտեզից Վանի շրջանի մանրամասը. Գիլագարակ, Լոռի, 1916 թ.
- 6.11 Խերանենանի Վան ձեռագիր քարտեզը. Վան, 1913 թ. (ՀՊԹ)
- 6.12 Խերանենանի Վանի ինքնապաշտպանութիւնը քարտեզը. Թավրիզ, 1928 թ. (ՀՊԹ)
- 6.13 Խերանենանի Անկախ Հայաստան և հարեւան երկիրներ քարտեզը. Բաքուբա, Իրաք, 1919 թ. (ՀՅԴ-Թ)
- 6.13ա Խերանենանի Անկախ Հայաստան և հարեւան երկրներ, 1919 թ. քարտեզի ցուցատախտակը
- 6.13բ Խերանենանի Անկախ Հայաստան և հարեւան երկրներ, 1919 թ. քարտեզից հատված
- 6.14 Խերանենանի Հայաստան, Ուիլսոնի որոշած սահմաններով քարտեզի ցուցատախտակը. Բասրա, 1922 թ. (ՀՅԴ-Հայրենիք, Ուաթերթաուն, Բոստոն)
- 6.15 Խերանենանի Հայաստան, Ուիլսոնի զծած սահմաններով քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, օգոստոս, 1926 թ. (ALMA, Ուաթերթաուն, Բոստոն)
- 6.16 Խերանենանի Հայաստան, Ուիլսոնի զծած սահմաններով քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, նոյեմբեր, 1926 թ. (ՍՊԹ)
- 6.17 Խերանենանի Հայաստան, Ուիլսոնի որոշած սահմաններով քարտեզի ցուցատախտակը, լուսանկարը՝ Հրայր Բազէ Խաչերեանի. Բասրա, 1922 թ. (ԷՎ)
- 6.17ա Քարտեզից Երևանի շրջանի մանրամասը
- 6.18 Խերանենանի Հայաստան և դրացի երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, 1928 թ. (ANCA, Դետրոյտ)
- 6.19 Խերանենանի Հայաստան և հարեւան երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, հունիս-օգոստոս, 1926 թ. (ԱԹ)
- 6.20 Խերանենանի Հայաստան և դրացի երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, 1928 թ. (Մ. Քարանյանի անձնական հավաքածու, Փասադենա)
- 6.21 Ասիոյ Թուրքիա քարտեզը աշխարհագրության դասագրքից. Կոստանդնուպոլիս, 1881 թ. (ՌԳ-Մ)
- 6.22 Խանզաղեանի ընդօրինակած Ասիոյ Թուրքիա քարտեզը շրջանակով. Փարիզ, 1950-ական թթ. (ՌԳ)
- 6.23 Երզնկայի կամ Եկեղեց գաւառ. Կահիրե, 1974 թ. (Հ. Նառանյանի անձնական հավաքածու, Կանադա)
- 6.24 Հյուսիսարեւմտյան Իրանի հայաբնակ շրջանները. Թեհրան, 1968 թ. (ՌԳ-Մ)
- 6.25 Կենտրոնական Իրանի հայաբնակ շրջանները. Թեհրան, 1968 թ. (ՌԳ-Մ)

Քարտեզների աղբյուրների համառոտագրությունը

- ԱԹ Անթիլիասի թանգարան, Բեյրութ
- ԱԼՄԱ Հայկական թանգարան և գրադարան, Ուաթերթաուն
- ԲԳ Բրիտանական գրադարան, Լոնդոն
- ԷՎ Էջմիածնի Վեհարան
- ԿԱՄ Կյոդ Արմեն Մութաֆեանի հավաքածու, Փարիզ
- ՀԱԱ Հայաստանի ազգային արխիվ, Երևան
- ՀԳ Հայաստանի ազգային գրադարան, Երևան
- ՀԳԱԱ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ֆունդամենտալ գրադարան, Երևան
- ՀՅԴ-Թ Հայ յեղափոխական դաշնակցութեան թանգարան, Երևան
- ՀՊԹ Հայաստանի պատմության թանգարան, Երևան
- Մ Մատենադարան, Երևան
- ՄՎ Մխիթարեան միաբանութեան գրադարան, Վիեննա
- ՆԳ Նուբարեան գրադարան, Փարիզ
- ՌԳ Ռուբեն Գալչյանի անձնական հավաքածու, Երևան
- ՌԳ-Մ Ռուբեն Գալչյանի ֆոնդ, Մատենադարան, Երևան
- ՍՊԹ Ստեփանակերտի պատմության թանգարան, Ստեփանակերտ

Նախաբան

Աշխատության մեջ «հայերեն քարտեզ» բառերը գործածված է հայոց լեզվով տպագրված քարտեզների համար: Հայ մասնագետների պատրաստած օտարալեզու քարտեզներն այստեղ ներառված չեն: Մեր քարտեզագրությունն ավելի ուշ է երևան եկել, քան մեր պատմագրությունը, որի հիմնադիրն է համարվում Մովսես Խորենացին, ում աշխատանքն այսօր կարևորագույն աղբյուրն է Հայաստանի և մեր տարածաշրջանի վերաբերյալ հետազոտություններ կատարող հայ և օտարերկրյա պատմաբանների համար:

Հայերեն աշխարհագրություն-քարտեզագրությունն իր հիմքում ունի Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց» աշխատությունը, որում բացատրված են երկրներն ու դրանց քաղաքները՝ հատկապես շեշտը դնելով Հայաստանի և հարակից շրջանների վրա: Սակայն աշխատության տեքստի հետ մեզ չի հասել որևէ քարտեզ, եթե նույնիսկ այդպիսին ժամանակին գոյություն ունեցել է: Այստեղ կա միայն մղոնաչափ, այսինքն՝ քաղաքների և դրանց միացնող ճանապարհների հեռավորությունների ցանկը, որով հնարավոր է կազմել տեքստի մեջ բացատրված երկրամասի մոտավոր քարտեզը, և որն առաջին անգամ արվել է հայերենով 1751 թվականին Վենետիկում (տե՛ս քարտեզ 3.4):

Գրքում նշված ժամանակաշրջաններում հայ քարտեզագետներից շատերը պատրաստել են քարտեզներ նաև այլ լեզուներով, օրինակ՝ իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն, օսմանյան թուրքերեն և այլն, որոնք, սակայն, այստեղ ընդգրկված չեն:

Այստեղ արտատպված քարտեզներից շատերն օգտագործվել են նաև որպես տարբեր գրքերի, բառարանների ու դասագրքերի ներդիրներ՝ տպագրված ավելի բարակ թղթի վրա, երբեմն էլ՝ նույնիսկ տարբեր չափանիշներով (մասշտաբներով) ու չափերով: Մանր գծագրերն ու պարզ քարտեզները, որոնք հաճախ հանդիպում ենք դասագրքերում ու գրականության մեջ, և որոնք ծառայում են որպես ուղեցույց, ներկա աշխատությունում ներառված չեն, բացառությամբ այն դասագրքային քարտեզների, որոնք, որպես առանձին քարտեզներ, ունեն կարևորություն և քարտեզագրական արժեք (տե՛ս քարտեզ 3.7):

Որպես աղբյուր՝ այստեղ օգտագործված են Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների գրքերի ցանկերը, «Հայ գիրքը» անվանված՝ տարբեր տարիների ընթացքում պատրաստված հատորները՝ հրատարակված Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության և Հայաստանի մշակույթի նախարարության կողմից, ինչպես նաև Գարեգին Զարբհանալեանի և այլ մատենագիտական ցուցակներ²:

Աշխատության մեջ փորձել ենք արտատպել քննարկվող քարտեզի հնարավորինս բարձրորակ պատճենը, որպեսզի հետաքրքրված ընթերցողը հնարավորություն ունենա ծանոթանալու բուն քարտեզին և դրա բովանդակությանը: Սակայն ոչ բոլոր քարտեզների օրինակներն են պահպանվել: Կան քարտեզներ, որոնք ընդհանրապես կորած են կամ պահվում են անհատական հավաքածուներում, հետևաբար հասանելի չեն հանրությանը և նույնիսկ մասնագետներին: Կարող ենք վստահաբար հայտարարել, որ արտատպված քարտեզների մեծամասնությունն ընդհանրապես որևէ այլ գրքում կամ

գրականության մեջ չի հանդիպել, և որ առաջին անգամ է, որ այսօրվան մեծաքանակ հայերեն քարտեզներ, հավաքված մեկ հատորի մեջ, հասանելի են դառնում հանրությանը:

Այնուամենայնիվ, պետք է նաև նկատել, որ հավանաբար ոչ բոլոր հայերեն քարտեզներն են ներառված մեր աշխատությունում: Բացառված չէ, որ կարող են լինել անհատներ, որոնք ունեն հազվագյուտ կամ նույնիսկ եզակի ձեռագիր քարտեզներ, որոնք հասանելի չեն եղել մասնագետներին: Եթե նման քարտեզներ կան, ապա օգտակար կլինի ստանալ նրանց պատճեններն ու տվյալները, որպեսզի ապագայում ներկայացվող ցանկը լրանա և կատարելագործվի:

Մեր աշխատությունում ներառված չեն նաև հատուկ նպատակով պատրաստված, օրինակ՝ զինվորական դիրքերի քարտեզներ, որոնք ամեն դեպքում ունեն ոչ հանրային շրջանառություն և պատրաստված են եղել ծառայելու միայն հատուկ նպատակների³:

Աշխատությունն ընդգրկում է հայերեն քարտեզագրական աշխատանքները սկզբից մինչև 1918 թվականը, երբ հիմնադրվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Երբ 1915 թվականին Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվեց Հայոց ցեղասպանությունը, Արևմտահայաստանի տարածքում միանգամայն դադարեց բոլոր մշակույթի ու արվեստի ոլորտներին առնչվող ամեն տեսակի գործունեությունը, և արևմտահայ մշակույթն ու դրա հսկայական ժառանգության մեծ մասն ընդմիջտ ոչնչացան իրենց բնօրրանում: Չնայած նման պայմաններին ու բազմահազար փախստականների Կովկաս ներխուժմանը՝ հայկական մշակույթի արևելյան կենտրոն Թիֆլիսում, որտեղ գործում էին բազմաթիվ հայկական դպրոցներ, թատրոններ, թերթեր ու պարբերականներ, ինչպես նաև մշակութային միություններ ու կազմակերպություններ, մշակութային կյանքը որոշ չափով գոյատևեց մինչև այն պահը, երբ կարմիր բանակի զորամասերը գրավեցին Կովկասի հարավային տարածքը և՛ այնտեղ հիմք դնելով կոմունիստական կարգերին:

Արևմտյան Եվրոպայի, Միջին Արևելքի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի հայ համայնքները, հեռու լինելով գանգվածային կոտորածների ու տեղահանումների վայրերից, սկզբնական շրջանին բնորոշ հուզումներից ու վրդովմունքից հետո վերականգնվելով՝ աստիճանաբար վերսկսեցին մշակութային գործունեություն՝ ի մասնավորի շարունակելով գրքերի հրատարակումն ու քարտեզների տպագրությունը: Այս շրջանում նման ձեռնարկումները հաճախ նպատակ էին հետապնդում հանրութանը հիշեցնելու իրենց հսկայական ժառանգության կորստի իրողությունը: Սրանց շարքում էին նաև Վենետիկի և Վիեննայի մշակույթի ժրջան մշակները, Մխիթարեան միաբանության հայրերը, որոնց ներդրումն այս ասպարեզում անգնահատելի է:

«Հայաստանի», «Պատմական Հայաստանի», «Մեծ Հայքի», «Ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» տեսլականը միշտ էլ հուզել է դարեր շարունակ պետականությունից զրկված հայերին: Դրա դրսևորումներից մեկն էլ այն էր, որ Խորհրդային Հայաստանի հայերը գնահատում էին այն հին, նոր ու նորագույն հայերեն ու օտարալեզու քարտեզները, որոնք ներկայացնում էին Պատմական Հայաստանը, կամ որոնց վրա, օրինակ՝ Օսմանյան կայսրության, ապա և Թուրքիայի տարածքում գրված էր լինում «Հայաստան» կամ «Հայկական լեռնաշխարհ»: Դրանք երկար տարիներ այն միակ, թեև վիրտուալ, հնարավորությունն էին, որ թույլ էին տալիս «ճամփորդել» դեպի այն վայրերը, որտեղ ծնվել ու մեծացել էին իրենց պապերը: Ու պատահական չէ, որ շատ հայ մարդկանց տներում՝ Հայաստանում թե Սփյուռքում, կարելի է տեսնել Պատմական Հայաստանի այս կամ այն ժամանակաշրջանի քարտեզներ՝ փակցված պատին կամ գիրք-ալբոմի ձևով: Այսինքն՝ միշտ էլ գնահատվել է հայկական հողերը

միացած, միասնական տեսնելու պատկերագրական լուծումը, ինչն էլ առաջարկում էին քարտեզները: Դրանք թույլ էին տալիս նաև ինչ-որ չափով ամօքել այն ցավը, որը մինչև վերջին ժամանակներս առկա էր «մոռացված Ցեղասպանություն» ձևակերպմամբ, քանի որ ցուցադրում էին, որ աշխարհի համար Հայաստանը, համենայն դեպս մարդկությունը հայտնի առաջին կավասալիկային քարտեզից ի վեր՝ առնվազն 2500 տարի, առկա էր քարտեզներում, այսինքն՝ բնավ մոռացություն մեջ չէր⁴:

Այս երևույթն ակնբախ է սույն աշխատության վերջին գլխի քարտեզներում (բացատրությամբ առաջին երեքի), որոնց հեղինակները հիմնականում նոր տարագրված և հայրենիքը կորցրած հայ մարդիկ էին, որոնք նպատակ ունեին վառ պահել իրենց հայրենիքի անցյալն ու հիշողությունը: Սրանց ցայտուն օրինակներն են վանեցի տարագիր Մարտիրոս Խերանյանի՝ Հայաստանի բազմաթիվ մեծածավալ քարտեզները՝ պահպանված գրադարաններում ու անհատների մոտ: Երևանաբնակ Ժիրայր Փխրիկյանն իր հորից՝ Արտաշեսից, ժառանգել է Խերանյանի՝ Վանի ինքնապաշտպանության մանրակրկիտ քարտեզներից մեկը՝ 139x84 սմ չափերով, գծված կտորի վրա և պատրաստված 1920-ականներին: Այսօր էլ 93-ամյա պրն Ժիրայրի տանը քարտեզը պահպանվում է որպես մասունք: Բնութագրական է, որ այս քարտեզում՝ Վանի քաղաքամեջի հատվածում, աշխատության հեղինակը հայտնաբերեց 1915 թ. լքված իր ընտանիքի պապենական տան տարածքը, որի վրա Խերանյանը նշել է նրանց ազգանունը:

Խորհրդայնացումից հետո հայ քարտեզագետներն ու աշխարհագրագետները 1923 թվականից վերսկսեցին քարտեզների և ատլասների հրատարակումը, որի հետևանքով երևան եկան մեծ քանակությամբ շրջանին վերաբերող նոր քարտեզներ, որոնց մեծամասնությունը, սակայն, ռուսերենով էր հրատարակվում:

Անկախությունից հետո սկսվեց քարտեզագիտության վերելքը Հայաստանում, և սկսեցին հրատարակվել Հայաստանին և տարածաշրջանին վերաբերող բարձրորակ քարտեզներ և ատլասներ: Սրանք, լինելով արդի քարտեզներ, մեր աշխատության մեջ չեն ներառվել:

Ռուբեն Գալչյան
Երևան, 2017 թ.

Գլուխ 1. Ձեռագիր քարտեզներ

Հայերեն հնագույն աշխարհագրական գիրքը 7-րդ դարի Աշխարհացոյցն է, որը հավանաբար պատկանում է փիլիսոփա, մաթեմատիկոս ու տիեզերագետ Անանիա Շիրակացու գրչին: Նախկինում այս գործը վերագրում էին Խորենացուն, բայց մեծ հավանականությամբ դա Շիրակացու աշխատանքն է: Այդտեղ կան մի քանի հղումներ 2-րդ դարի Պտղոմեոսի Գեոգրաֆիա երկին, ինչպես նաև նրա հետևորդ Պապուս Աղեքսանդրացու աշխատանքին: Ուշադրության արժանի է այն պարագան, որ ձեռագրում հեղինակն անդրադառնում է նաև 6-րդ դարի ճանապարհորդ և կղերական Կոստանդինոս Անտիոքցու (ճանաչված որպես Կոզմա «Հնդկաչու») Քրիստոնեական տեղագրութիւն աշխատութեանը⁵: Ինչպես ասվեց նախաբանում, Շիրակացու այս աշխատանքը աշխարհագրական մի երկ է, որը, սակայն, մեզ է հասել առանց որևէ քարտեզի:

Խորենացու Պատմություն Հայոց-ը և Շիրակացու Աշխարհացոյց-ը դիտարկվում են որպես հայոց պատմագրության և աշխարհագրության կարևորագույն հիմնաքարեր, որոնք անգլիացի Ուիլյամ Էդմունդ Թոմսոնը թարգմանել են լատիներեն և հրատարակել Լոնդոնում 1736 թ., որտեղ, սակայն, Աշխարհացոյցը նույնպես վերագրված է Խորենացուն, որ այդ ժամանակ ընդունված վարկածն էր⁶: Աշխարհացոյցը հետագայում թարգմանվել է նաև աշխարհաբար հայերեն, ֆրանսերեն և գերմաներեն⁷:

Հետագայում բազմաթիվ քարտեզագետներ պատրաստել են Հնագույն Հայաստանի և Մեծ Հայքի քարտեզներ՝ հիմնվելով Շիրակացու տված բացատրությունների ու մղոնաչափի տեղեկությունների վրա:

Մատենդարանի ձեռագրերում առկա է մի փոքր հավաքածու՝ թիվ 1242, որը պարունակում է 18 հոդված՝ կրոնական, բարոյագիտական, թվաբանական և աստղագիտական նյութերով, որոնք գրված են 13-ից մինչև 15-րդ դդ. Կաֆայում (ներկայիս Թեոդոսիան Ղրիմում): Ձեռագրի 132ա էջում՝ Արեգակի ծիրի գծագրության և թվաբանական հանելուկների էջերի միջև, տեղադրված է մի աշխարհացոյց քարտեզ, որը ոչ մի առնչություն չունի ձեռագրի մյուս նյութերի հետ (տե՛ս քարտեզ 1.1):

Այս քարտեզը պատկանում է եվրոպական T-O տեսակի քարտեզներին և հավանաբար այդ տեսակի առաջին և միակ հայերեն քարտեզն է՝ գծագրված եվրոպական քրիստոնեական կրոնական քարտեզագրության հիմունքներով: Քարտեզի եզակիությունը առիթ դարձավ, որպեսզի տողերիս հեղինակը դրան նվիրված հոդված պատրաստի և հրատարակի քարտեզագրական միջազգային ամենակարևոր պարբերականի մեջ, և որը ժամանակին Արևմուտքի քարտեզագետների մեջ մեծ հետաքրքրություն առաջացրեց⁸:

Այս քարտեզը հավանաբար պատրաստված է 13-րդ դարի վերջի կամ 14-րդ դարի առաջին քառորդի ընթացքում: Սա քարտեզի տեսք ունեցող հայոց լեզվով հնագույն փաստաթուղթն է, որն արտատպված է քարտեզ 1.1-ում: Քարտեզը բոլորակ է և ունի 125 միլիմետր տրամագծով արտաքին մի շրջան, որի ներսում պատկերված է 113 միլիմետր տրամագծով աշխարհի ցամաքամասերը ներկայացնող սկավառակը: Երկու բոլորակների միջև ներկայացված է ցամաքամասեր շրջապատող օվկիանոսը:

Ինչպես նշվեց, այս քարտեզը եվրոպական քարտեզագրության T-O տեսակի մի աշխատություն է, որի կառուցվածքը, սակայն, ինչ-որ չափով փոփոխված է: O տառը կազմված է երկու բոլորակներից, որոնցից արտաքինի չափը թեկադրված է գրքի էջի չափով: T տառի ձախ հորիզոնական՝ դեպի հյուսիս տարածված թևն ընդհանրապես նշում է Էգեյան ծովը, որը ուղիղ գծով հասնում է Սև ծովին ու



1.1. Հայերն առաջին աշխարհագրոյց քարտեզը. Մատենադարան, ձեռագիր 1242, ԿաՖա, 13-14-րդ դդ.

Տանայիս-Դոն գետին: Սակայն այս քարտեզում Էգեյան ծովը սկսվում է Կիպրոսից, որը քարտեզի կենտրոնից ավելի ներքև է և սկիզբ է առնում սև գծի տեսքով: Այս գծի վերջում Սև ծովն է՝ Կոստանդնուպոլսից ձգված դեպի վեր՝ հյուսիս, որտեղ այն միանում է կարմիրով գծված Տանայիս-Դոն գետին:

Քարտեզի կենտրոնից դեպի ներքև (արևմուտք) գծված զուգահեռ երկու գծերը ներկայացնում են Միջերկրական ծովը, որը Եվրոպան բաժանում է Աֆրիկայից: Ինչպես ավանդական T-O տեսակի քարտեզները, այս քարտեզն էլ ուղղորդված է արևելքով դեպի վեր, իսկ աշխարհի կենտրոնում տեղադրված է քրիստոնեության կենտրոն սուրբ քաղաք Երուսաղեմն՝ իր վեց դարպասներով՝ մակագրված դրանց հայերեն անվանումներով: Հայտնի է համար Երուսաղեմի կարևորությունն այն է, որ վաղ դարերից սկսած՝ այստեղ առկա են հայկական թաղամասը և Ս. Հակոբ եկեղեցին՝ իր պատկան կալվածքներով: Ընդ որում՝ Երուսաղեմի հայկական եկեղեցին մինչ այսօր տեղի քրիստոնեական սրբությունների չորս խնամակալներից մեկն է:

Քարտեզում հնագույն՝ բիբլիական նշանակություն ունեցող Կարմիր ծովը գծված է կարմիր թանաքով: Այս բոլոր հոգևոր հատկանիշները հատուկ են հայերենում «Սաղմոսային քարտեզ» կոչված՝ արևմտյան կրոնական դոգմաների թեղադրանքի ոճով և հիմունքներով գծված միջնադարյան շրջանաձև աշխարհացույց քարտեզներին, որտեղ երկիրը ցուցադրված է որպես մի սկավառակ՝ շրջապատված դառը ջրերով լցված օվկիանոսով: Այս տեսակի քարտեզներն են կոչվում T-O քարտեզներ:

Քարտեզը պարունակում է 27 հավելյալ տեղանուն, ինչպես նաև բացատրական մակագրություններ՝ տեղադրված քարտեզի տարածքում կամ դրանից դուրս: Բոլորակների դրսում նշված են չորս աշխարհագրական կողմերը: Երկիրը շրջապատող օվկիանոսը բացատրված է որպես Հանաուսրած ծովն որ պատէ գերկիրս այս կերպիսս է:

Քարտեզում ակնհայտ է Եվրոպան Աֆրիկայից բաժանող Միջերկրական ծովը, որն ինչպես նշվեց, ներկայացված է զուգահեռ ուղղահայաց գծերով՝ տարածված Երուսաղեմից մինչև շրջապատի օվկիանոսը, երեք անգամ նշված որպես ծով: Սրա մեջ և շուրջը տեղադրված են երեք շրջանաձև կղզիներ, որոնցից վերինը կոչված է Կիպրոս, իսկ մյուս երկուսը, որոնք տեղադրված են ծովից դուրս, անանուն են:

Միջերկրականից ձախ ընկած տարածքում՝ Եվրոպայում, նշված է Այս կողմն Էրոպա, և մակագրված են Վենեժիա [Վենետիկ], Պուլդարք, Ալանանք [Գերմանիա], ցամաք, Ֆունքս [Ֆրանսիա] և Սպանիա տեղանունները: Կիպրոսից դեպի հյուսիս ձգված գծի վերջում՝ Սև ծովի անկյունում, նշված է Կոստանդնուպոլիսը, իսկ Սև ծովը անանուն է: Եվրոպական քաղաքների անունների ընտրությունը չի կարող պատահական լինել: Վենետիկը ժամանակին հայերի համար կարևոր առևտրական կենտրոն էր, իսկ Բյուզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, Երուսաղեմից հետո ամենակարևոր կրոնական և քաղաքական կենտրոնն էր, որոնք երկուսն էլ ներառված են այս քարտեզում:

Միջերկրականի աջում մակագրված է Այս կողմն Աֆրիկե և երեք տեղ էլ նշված է ծով, որոնք հավանաբար աֆրիկյան լճերն են: Սրանցից երկուսի միջև նշված է մի փոքր շրջանակ, որն անվանված է Այս ծովիս անուն տունան, որը հաստատում է դրա լիճ լինելը: Մակագրության ներքևում առկա են մեկ զուգահեռ անհայտ զուգահեռ գծեր՝ ծով մակագրությամբ: Դրա վերը կարմիր շրջանակի մեջ նշված է Փարաուն և զորքն Եգիպտոսի, իսկ դրա աջում նշված է Սքանդարիե [Ալեքսանդրիա] քաղաքը:

Կարմիր ծովը նշված է որպես մի մեծ կարմիր բոլորակ, որն ունի ճեղքվածքներ, որոնցից դեպի արևելք ընկածն ունի կիսով ջնջված մակագրություն՝ գծովն....., որը հավանաբար նշում է բիբլիական այն առասպելը, որ իսրայելցիներին դեպի Պաղեստին ճանապարհ տալու համար Աստված ճեղքեց ծովը: Կարմիր ծովից ներքև՝ արևմուտքում, նշված է Մար - Եգիպտոս և Հաբաշ, իսկ դրանցից հարավ՝ անապատ: Նեղոսի անունը գրված է Կարմիր ծովից բավական վեր՝ արևելքում, երկրորդ ծով

անվանման կողքին, որտեղ նշված է Այս ծովիս անունն նիլ ասեն: Պետք է հիշել, որ արաբերենում և պարսկերենում Նեղոս անունը «Նիլ» է հնչում:

Հնդհանրապես, T-O քարտեզներում Եվրոպան Ասիայից բաժանող Տանայիս գետը որպես ուղիղ գիծ է ցուցադրվում՝ ձգված Երուսաղեմից դեպի ձախ: Սակայն, ինչպես նախապես նշվեց, այս քարտեզում սրանք մատուցված են տարբեր ձևով: Էգեյան ծովը ներկայացնող սև գիծը հասնում է մինչև Կոստանդնուպոլիս՝ նշանակելով, որ այն ներկայացնում է նաև Դարդանեղի նեղուցը, Մարմարա ծովն ու Բոսֆորի նեղուցը: Կոստանդնուպոլսից դեպի արևելք՝ Սև ծովը ներկայացնող գիծը հասնում է մինչև կարմիր գծով նշված Ազովի ծովը, որն անվանված չէ, և ապա դեպի Տանայիս գետը: Գետի մոտակայքում առկա է երեք կղզի, որոնք անանուն են:

Այսպիսով՝ այս քարտեզը Էգեյան և դրան կից ծովերի ու նեղուցների տեսանկյունից ավելի ճշգրիտ է գծագրված, քան դրա ժամանակակից մյուս T-O տեսակի քարտեզները:

Ըստ ավանդույթյան՝ քարտեզի վերին կեսը հատկացված է Ասիային՝ նշելով Այս կողմն ասիա: Վերին ձախ կողմում՝ աշխարհը շրջապատող օվկիանոսի ափերին, կենտրոնի ներքևի կողմից շարված են հետևյալ անունները. Ըռուզք [Ռուսաստան], Կաֆայ, ցամաք, ազախ [Ազով], ցամաք, սարա [Սարայ]⁹, ցամաք, Խորազմ, Կանասյի, Իսկ դրանց վերևում՝ Խայթայք [Չինաստան] և Ջայթոն¹⁰: Քարտեզում «ցամաք» բառը գործածվում է միջանկյալ տարածությունը ցուցադրելու նպատակով:

Քարտեզի վերևում՝ արևելքում, նշված է Աշխարհ Հնդկաց և Հնդկաստան: Արժանահիշատակ է, որ միջին դարերում Պարսկաստանից արևելք՝ ընդհուպ մինչև Չինաստան ընկած երկրները կոչվում էին Հնդկաստան ընդհանուր անվամբ: Կենտրոնին մոտ՝ Երուսաղեմից ոչ հեռու, առկա են մի քանի կրոնական բովանդակովձյամբ մակագրություններ: Սրանց շարքում են Սինական լեռան, Եկին անապատն, Եկին Երուսաղեմ սակա: Երուսաղեմի շուրջը մակագրված է Քաղաքի էլացոց որ է Երուսաղեմ, բնակուի հինեն որ աուր ինաց: Քաղաքի դարպասների վրա գրված է Փողոցի, Ովսաբաթու, Պրոպատիկե, Սելովմայ աղբիւրն, Դալթի ձկան և Դատողական: Իսկ Երուսաղեմի մոտակայքում, այսինքն՝ Միջին Արևելքում, առկա են Բաղդատ և Դմրչիս [Դամասկոս] առևտրական կարևորություն ունեցող քաղաքների անունները:

Ասիայի ձախ կողմում՝ Եվրոպայից մինչև Չինաստան ընկած տարածքում տեղադրված տեղանուններից պարզ է քարտեզագրի համար այս քաղաքների և դրանք միացնող ցամաք կոչված տարածք-ճանապարհների կարևորությունը: Ուշադրություն ենք հրավիրում այն պարագային, որ Կաֆա, Ազով, Սարայ, Խորազմ, Կանասյի և Ջայթոն քաղաքներն այստեղ առաջին անգամ են հայտնվում T-O տեսակի քարտեզներում¹¹: Այս մասում տեղակայված քաղաքների անունները հաստատում են, որ քարտեզը պատրաստվել է ցուցադրելու նաև Մետաքսի ճանապարհի համար կարևորություն ունեցող առևտրական կենտրոնները:

Քարտեզի պատրաստման ժամանակը ճշտելը կարիք ունի մանրակրկիտ հետազոտությունների: Մեծ հավանականությամբ, Մկրտիչ Խաչատրյանի տեսությունը, որ քարտեզը հավանաբար պատրաստված է 1206 թվականին, իրականությունը չի համապատասխանում¹²:

Քարտեզի ձախում շարված քաղաքների մեջ Կաֆան տեղադրված է որպես վերջին արևմտյան քաղաք: 13-րդ դարի վերջերին այս քաղաքը Ջենովայի առևտրականները վարձակալել էին մոնղոլներից և քաղաքը դարձրել Մետաքսի ճանապարհի առևտրական եվրոպական մի կենտրոն, որի մյուս մրցակիցն էր վենետիկյան առևտրականների՝ Ազովի ծովի ափին հիմնադրված Տանայիս քաղաքը:

Հայ գրականության մեջ Կաֆա անվանումն առաջին անգամ հիշատակվում է 13-րդ դարում, իսկ 14-րդ դարում այնտեղ արդեն հիմնադրվել էին վանքեր ու ձեռագրատներ, և շուրջ 70 000 բնակչություն ունեցող քաղաքի մեծամասնությունը հայ էր¹³: Քարտեզի վրա այս քաղաքի անվան առկայությունը վկայում է, որ քարտեզը պատրաստվել է քաղաքի ծաղկուն օրերին, երբ քաղաքի դատական ու կառավարման համակարգերը վարում էին իտալացիները, այսինքն՝ 14-րդ դարի առաջին կեսին: Քաղաքի ուղղակի կապը եվրոպական առևտրական կենտրոնների հետ ամենալավ առիթն էր՝ մշակութային և առևտրական շփումները զարգացնելու համար, որից, հավանաբար, օգտվել է նաև հայ քարտեզագիրը՝ պատրաստելով եվրոպական քարտեզագրությունը հարազատ՝ T-O տեսակի հայերեն քարտեզ¹⁴:

* * *

Մատենադարանի թիվ 1780 ձեռագիրը թվագրված է 1617 և 1621 թթ., որը պատրաստված է Կիլիկիայում և պարունակում է միջազգային քարտեզագրության կարևորագույն գործերից Պտղոմեոսի Աշխարհագրություն երկի և Պետրոս Ապիանոսի (1495–1552 թթ.) Կոստոպոլիս գրքի թարգմանությունները: Ձեռագրում նաև տեղադրված են Ապիանոսի հայերենով վերագծված քարտեզները: Հավանաբար այս ձեռագիրը Մատենադարանի ամենահետաքրքրական աշխարհագրական հատորներից է¹⁵ (տե՛ս քարտեզներ 1.2 և 1.3):

Ապիանոսը գերմանացի մաթեմատիկոս, աստղագետ և աշխարհագրագետ էր, ում ամենակարևոր աշխատությունը 1524-ին տպագրված Կոստոպոլիսն է, որը բազմիցս վերահրատարակվել և թարգմանվել է մեկ տասնյակ լեզուներով: Քարտեզ 1.2-ը ներկայացնում է նրա գրքից վերցված՝ մեր երկրագնդի համակարգը, հենց «երկրագնդի», քանի որ այստեղ պատկերված է պտղոմեոսյան համակարգը, որի կենտրոնում երկրագունդն էր: Քարտեզի կենտրոնում առկա մեծ բոլորակը ներկայացնում է երկրագունդը, որի շուրջը նշված են տարբեր մոլորակների ծիրերը: Երևում է մեր մոլորակի արևելյան կիսագունդը: Մյուս երկնային մարմինները հերթականությամբ նշված են այսպես.

Լուսին	Արեգակ
Բայլածու — Մերկուրի	Հրատ — Մարս
Լուսաբեր — Վեներա	Լուսնթագ — Յուպիտեր
	Երևակ — Սատուռն

Քարտեզ 1.3-ի էջի վրա նշված է, որ երկրագնդի շրջագծի երկարությունը 5 400 գերմանական մղոն է, որը հավասար է 39 520 կիլոմետրի: Այսօր երկրագնդի ճշգրիտ շրջագծներից բևեռայինը 40 055 կիլոմետր է, իսկ հասարակածայինը՝ 40 253 կիլոմետր: Այսինքն՝ Ապիանոսի չափագրությունն իրականից տարբերվում է մոտ մեկուկես տոկոսով:

Ձեռագրերի նույն հավաքածուի մեջ առկա են նաև երկու այլ պարզ աշխարհացույց քարտեզներ: Սրանք 4-5-րդ դդ. հոմեացի պատմաբան Ամբրոզիոս Մակրոբիոսի երկրագնդի եղանակային գոտիների բաժանման քարտեզներն են՝ վերցված նրա 5-րդ դարի ձեռագրերից: Այս բաժանումներն օգտագործում էին հունա-հոմեացի աշխարհագրագետները, որոնք կատարելագործվեցին և մինչև 14-րդ դարը գործածվում էին իսլամական քարտեզագրության մեջ: Հույն բանաստեղծ Օվիդիոսը (մ.թ.ա. 43 – 17/18 թթ.) իր Մետամորֆոզ երկում գրում է հինգ եղանակային գոտիների մասին (Գիրք 1. 48–51):



1.3. Արևելյան կիսագունդը Ապիանոսի Կոսմոգրաֆիայից. Կիլիկիա, 1617 թ.

Հոտմեացի փիլիսոփա և գրող Ամբրոջիոս Թեոդոսիոս Մակրոբիոսը (ծաղկել է 398–423 թթ.), որը նույնպես գնդաձև երկրի և դրա եղանակային գոտիների բաժանված լինելու տեսություն հետևորդներից էր, հայտնի է իր Սատուրնայիա աշխատանքով: Այս ձեռագիրը պարունակում է նրա «Սկիպիոնի երազի լուսաբանումն ըստ Կիկերոնի» երկը: Նա գրում է, թե ինչպես Պուբլիոս Կոռնելիոս Սկիպիոն Ավագը (մ.թ.ա. 235–183 թթ.) իր թոռան՝ նույն անունը կրող Սկիպիոն կրտսերի հետ (մ.թ.ա. 185–129 թթ.), երազում բարձրանում է երկինք ու այնտեղից երկրագունդը դիտելով՝ թոռանը բացատրում տեսածը՝ ասելով.

Տես, տարբեր եղանակների գոտիները շերտավորում են երկրագունդը: Սրանցից երկու՝ միմյանցից ամենահեռուներին, որոնք երկրագնդի հսկառակ բևեռներում են, տրվել է սառնամանիք և ցուրտ եղանակ, մինչդեռ կենտրոնական գոտին կիզված է Արեգակի տաքությունից: Միայն բևեռային և կենտրոնական գոտիների միջև երկու գոտիներն են, որ բնակելի են.....¹⁶

Եղանակային հինգ գոտիների տեսությունն ընդհանրացած էր, և քարտեզ 1.4-ը ներկայացնում է այդ բաժանումները, որտեղ հարավը տեղադրված է քարտեզի վերևում: Եղանակային գոտիներն անվանված են.

- Ծոնայ սասդիկ
- Ծոնայ բարիխառն հարաւային
- Այրեցեալ գոտի. Ծոնայ տաք
- Ծոնայ բարիխառն հիւսիսային [որը ձանաչված աշխարհն էր]
- Ծոնայ ցրտեղեն

Այլքավոր գիծը ներկայացնում է մոլորակների ծիրերը երկնակամարում:

Ծոնայ նշանակում է գոնա՝ գոտի:

Հաջորդ քարտեզը (տես քարտեզ 1.5) ցույց է տալիս երկրագունդը՝ գծված հյուսիսով դեպի վեր, այս անգամ ամեն մի կիսագունդը՝ ինը եղանակային գոտիների բաժանումով, որոնք անվանված են իրենց մեջ գտնված տեղանունների անուններով և կրկնված մյուս կիսագնդում: Այսպիսով՝ հյուսիսից սկսած՝ եղանակային գոտիների անուններն են.

Հյուսիսային կլիմաներն

- 9 Իվերայ Դանիային
- 8 Իվերայ Բեֆեսուսին
- 7 Իվերայ Պորիսթենէսին
- 6 Իվերայ Պոնտոսու
- 5 Իվերայ Հռոմայ
- 4 Իվերայ Բոտոսու
- 3 Իվերայ Աղեքսանդրու
- 2 Իվերայ Սիէնէսի [Ասուան]
- 1 Իվերայ Մէրէոսին

Այրեցեալ գոտի

Գոտիների անունների կրկնությունը՝ 1-ից 9-ը հերթականությամբ

Հարաւային կլիմաներն



1.4. Երկրագունդը իր 5 եղանակային գոտիներով. Ապիանոս, Կոսմոգրաֆիա, Կիլիկիա, 1617 թ.



1.5. Երկրագունդը իր 2x9 եղանակային գոտիներով. Ապիանոս, Կոսմոգրաֆիա, Կիլիկիա, 1617 թ.

Իտալիայի Բոլոնիա քաղաքի համալսարանի նկուղային պահեստում 1990 թ. գտնվեց մի մեծ փաթեթ, որի վրա լատինատառ նշված էր «Արմենիա»: Բարեբախտաբար, այդ ժամանակ համալսարանում հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր Գաբրիելյա Ուուհոջեանը (1934–2016 թթ.), ում դիմեցին փաթեթը գտնողները: Ուուհոջեանը զարմանքով տեսավ, որ դա 1691 թ. Օսմանյան կայսրության գրաված Հայաստանի և այլ հայ համայնքների տարածքներում գոյություն ունեցած եկեղեցիների և վանքերի քարտեզ է, որի սահմանները տարածվում են Կոստանդնուպոլսից մինչև Արցախ և Լոռուց մինչև Երուսաղեմ: Չեռագիր քարտեզը պատրաստել և գծել էին հայ գիտնական, երաժիշտ, բժշկապետ և պատմաբան Երեմիա Չելբերի Քէոմուրճեանը (1637–1695 թթ.) և նրա որդին Պոլոտմ` ի մի բերելով մանրամասն տեղեկություններ բոլոր կարևոր կրոնական կենտրոնների և վանքերի մասին: Քարտեզի չափերն են` 1,2 x 3,58 մ` գծագրված մագաղաթի վրա (տե՛ս քարտեզ 1.6):



1.6. Քէոմուրճեանի հայկական վանքերի ու եկեղեցիների քարտեզը. Կոստանդնուպոլիս, 1691 թ.

Ըստ քարտեզի երկու մեծ ցուցանակների վրա նշված արձանագրությունների` քարտեզը պատրաստվել է իտալացի կոմս Լոդովիկո Ֆեռդինանդո Մարսիլիի պատվերով: Քարտեզը Բոլոնիայում թարգմանվել է գերմաներեն, իսկ բնագիրը լքվել է համալսարանի պահեստում մինչև նրա հայտնագործումը մոտ 300 տարի անց: Քարտեզում նշված յուրաքանչյուր կենտրոն ունի իրեն վերաբերող փոքրիկ ցուցատախտակ (կարտուշ), որտեղ առկա են պատկան բացատրություններ ու տեղեկանք վանքը տնօրինող հոգևորականի վերաբերյալ, ինչպես նաև այլ կարևոր տեղեկություններ վանքի կամ եկեղեցու մասին: Ուուհոջեանը քարտեզը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո իր հետազոտություններն ամփոփել է մի մեծագիր հատորում, որտեղ քարտեզի բոլոր նշումները նա գրառել է հայերեն` դրանք նաև թարգմանելով իտալերեն¹⁷:

Քարտեզի ձախ մասում կանաչ զանգվածը Մարմարա ծովն է, իսկ կենտրոնում առկա մեծ լիճը Վանա լիճն է` իր Ախթամար կղզով ու կաթողիկոսանիստ Սբ Խաչ եկեղեցով:

Քարտեզ 1.7-ը ցույց է տալիս քարտեզից Էջմիածնի շրջանի հատվածը, որի մանրանկարում պատկերված է պարսից Սարգարը, որին հյուրընկալում է Հայոց կաթողիկոսը: Այլ մանրանկարներում ցուցադրված են քաղաքի մյուս տաճարները: Էջմիածնի վերբերյալ ցուցատախտակում տրված է աշխարհաբար թարգմանված հետևյալ բացատրությունը.

Հայոց Լուսավորիչ Սուրբ Գրիգորին աստվածային լույսի տեսիլքով հայտնվեց Աստծո միածին Որդին և լույսի ուրվագծմամբ կառուցեց տաճարը, դարձի բերեց քաջ արքա Տրդատին, որի համար, ի դեմս Սուրբ առաքյալների, Աթոռը կոչվում է ոչ միայն առաքելական, այլև Աթոռ քրիստոսական, որը Սուրբ Գրիգորի ձեռամբ հիմնվեց Միածնի իջման ու ցույց տրված վայրում: Դրա համար Լուսավորչի փոխանորդները կոչվեցին կաթողիկոս, այսինքն՝ Ամենայն Հայոց եկեղեցական կարգը տնօրինելու (կապելու և արձակելու) հատուկ շնորհ ունեցող, ինչպես որ նաև պատմում է Ագաթանգեղոսը:



1.7. Էջմիածնի մանրանկարը Քեոմուրձեանի քարտեզից. Կոստանդնուպոլիս, 1691 թ.

Կից պատկերված են Արարատները, որոնց վրա առկա է հետևյալ գրառումը.

Այստեղ հանգեցեց Նոյյան տապանը, ուր լեռը և դաշտը կոչվեցին Արարատ:

Այստեղ հետաքրքրական է օրինակ բերել քարտեզի վրա եղած գրովթյունների մասին: 1990–ական թվականներին ընկերոջս՝ Արմեն Հախնազարյանի և մի խումբ երիտասարդ ուսանողների հետ աշխատում էինք Արտաշավանում տեղակայված Սաղմոսավանքի վերանորոգումների վրա: Կենտրոնական եկեղեցուց հյուսիս առկա էր մարդահասակ խոտով ծածկված մի մեծ տափարակ և բերրի դաշտ, որը, սակայն, չէր օգտագործվում: Մի երեկո Արմենը գյուղացիներից հարցրեց, թե ինչու են այդ դաշտը լքել ու չեն օգտագործում (տե՛ս պատկեր 1.8): Նրանցից մեկը պատասխանեց՝ ասելով, որ դաշտը լի է թունավոր օձերով, հետևաբար վտանգավոր է ու անօգտագործելի: Ապա ավելացրեց, որ հնում ամեն գարուն եկեղեցու քահանան գալիս էր դաշտ ու հատուկ աղոթք կարդում, որի հետևանքով օձերն իրենց գցում էին ձորը, և գյուղացիներն առանց վախի դաշտը հերկում–վարում էին: Սակայն խորհրդայնացումից ու եկեղեցու փակվելուց հետո օձերը բազմացան, ու դաշտը դարձավ անօգտագործելի:


Ջններով Սաղմոսավանքին վերաբերող ցուցատախտակը՝ այնտեղ կարդացինք աշխարհաբար թարգմանված հետևյալ գրովթյունը (տե՛ս քարտեզ 1.9).

Եպիսկոպոսանիատ Սաղմոսավանք. Արագած և Սբ Նշան, օձախալած և մասունքն արյունաներկ փայտից: Աստվածընկալ Սբ Նշան, Տերունական Սբ Նշան, Մծրինի Սբ Հակոբի աջը, Տիրոջ եղբայր Սբ Հակոբ առաքյալի մատը և ականատես Վարդապետ Գրիգորի գերեզմանը:

Փաստվում է, որ 1990–ականներին մեզ պատմված առասպելը նույնությամբ հիշատակվում է 300 տարի դրանից առաջ պատրաստված Քէմոմորճեանի քարտեզում: Այս իրողությունը փաստում է, որ քարտեզի վրա եղած գրությունները պետք է հավաստի համարել: Այնտեղ թերևս առկա են այլ տեղեկություններ և, որոնք կարող են հնագետ պատմաբաններին օգտակար հետազոտական նյութ տրամադրել:



1.8. Սաղմոսավանքին կից դաշտը



1.9. Սաղմոսավանքի վերաբերյալ արձանագրությունը քարտեզի վրա

Մի քանի խոսք Մարտիրի մասին: Կոմսը Բոլոնիայի հարուստ մի կղերական ընտանիքի անդամ էր, կապ էր պահպանում Գերմանիայի զինվորականության հետ և ուներ մի քանի աշխատություն՝ նվիրված Օսմանյան կայսրության զինված ուժերին և նրանց սպառազինությունը: Քէմոմորճեանին պատվիրված քարտեզը թերևս գալիս էր լրացնելու տեղեկություններն Օսմանյան կայսրության տարածքում բնակվող քրիստոնյաների մասին, որով նրանք կարող էին իմանալ, թե քրիստոնյա եվրոպացիները որտեղ կարող էին ապահով ապաստան գտնել: Այս տեղեկությունները հույժ կարևոր կլինեին Օսմանյան կայսրության հետ հավանական պատերազմ բռնկվելու դեպքում:

Գլուխ 2. Հայերեն առաջին տպագիր քարտեզը. 1695 թ.

Երբ խոսում ենք հայերեն առաջին տպագիր քարտեզի մասին, նախապես պետք է նկատի առնենալ հայ տպագրության պատմությունն Ամստերդամում, որտեղ և տպագրվել է այս հայերեն քարտեզը:

1614 թ. Իրանի Սպահան քաղաքի Նոր Զուղա թաղամասում ծնված Ոսկան Երևանցին ճամփորդել է Հոլանդիա և 1664 թ. հանձն է առել Ամստերդամի Սբ Էջմիածին և Սբ Սարգիս տպարանների տնօրինությունը, որտեղ և 1666 թ. հրատարակել է առաջին հայերեն Աստվածաշունչը: Ապա իր գործունեությունը շարունակել է մինչև 1670 թ.՝ տպագրելով 14 այլ գրքեր, ներառյալ Շարակնոց և Շիրակացու Աշխարհացոյցը: Ամստերդամից նա տեղափոխվել է Մարսել, որտեղ մահացել է 1674 թ.: Նրա մտերիմ և գործընկեր Մատթէոս Վանանդեցի Յովհաննիսեանը նրա հետ ճամփորդել էր Եվրոպա, սովորելով տպագրական արհեստը՝ աշխատել Ոսկանի հետ Մարսելում և Իտալիայում: 1683–1685 թթ. Ամստերդամում նա հիմնում է տպագրատուն և, ունենալով միայն երեք տառատեսակ, հրատարակում է երկու գիրք¹⁸: Թովմա Վանանդեցու կարգադրությամբ 1694 թ. նրան են միանում Մատթէոս Յովհաննիսեանի զարմիկները՝ Միքայել և Ղուկաս Նուրիջանեանները՝ տնօրինելու և աշխատելու Մատթէոսի հայկական տպարանում: Տասը տարվա ընթացքում տպարանը հրատարակում է 15 անուն գիրք, որոնց գրաշարն ու վարպետ տպագրիչն էր Մատթէոս Յովհաննիսեանը, իսկ խմբագիրն ու սրբագրիչն էին Ղուկաս և Միքայել Նուրիջանեանները¹⁹:

Սկզբնական տարիներին տպագրատունն աշխատում էր բարեհաջող, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով այն անանկացավ ու փակվեց, և 1717 թ. տպագրատան սարքավորումներն ու գույքը վաճառվեցին աճուրդով:

Մինչ այդ հայկական քարտեզագրությունը, ինչպիսին մենք անվանում ենք այսօր, գոյություն չուներ, և երբ Վանանդեցին 1695 թ. որոշեց մեծադիր աշխարհացույց քարտեզ տպագրել, դա եղավ հայ քարտեզագրության անդրանիկ շրջադարձային դեպքը:

Բարձրորակ քարտեզ պատրաստելու և պղնձյա սալիկները փորագրելու համար Վանանդեցին վարձեց հոլանդացի լավագույն վարպետներին՝ Ագրիանոս և Պետրոս Սխոնբեկ եղբայրներին: Նրանց կարգադրվեց պատրաստել ամենաարդիական տեղեկությունները պարունակող ժամանակակից բարձրորակ մի աշխարհացույց քարտեզ, որի տեղանուններն ու նշումները պետք է լինեին հայերեն: Քարտեզը, որը կոչվում է Հանատարած աշխարհացոյց, հրատարակվեց 1695 թ. 150x120 սմ չափերով, որը համարվում է տպագրված հայերեն առաջին աշխարհացույց քարտեզը (տե՛ս քարտեզ 2.1):

Վանանդեցի եպիսկոպոսը քարտեզից օգտվողների համար ասում է, որ սա խավարամիտ եկեղեցականների համար չէ, այլ արթուն և պայծառամիտ մարդկանց համար... Ինչպես նաև օգտակար կլինի հայ առևտրականներին, որոնք ճամփորդում են ասիական և արևելեան երկրներում, որտեղ նրանք ունեն լավ համբավ և բազմաթիվ երկրներում նաև սիրված ու հարգված են: Բուն տեքստի մեջ Վանանդեցին հետևյալն է գրում քարտեզից օգտվողների համար.

Եկեղեցականաց, ո՛չ քնափից՝ ասեմ, ոչ թուլամտից կամ ուսումնաստեից, այլ քաջամտաց, ուսումնասիրաց՝ արթուն եւ զուարթուն արանց, որքան օգուակար եւ ձեռնտու իցէ՝ ծանօթութիւն այսր ազնուական գիտութեան՝ վասն դիրահասութեան սուրբ եւ արտաքին գրոց, նոցին ինքեանց ուշիմութեանն

թողցուք դատել և դարակել: Բայց եւս քան զես առաւելապէս պիտանանայ վաճառականաց՝ մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ ասիական եւ արեւելեան ազգաց, այսու գոնես անուամբ փառաւորք եւ հնարագէտք երեւին. զի յանայն ազգաց ընդունելիք եւ յոչ ասկաւուց սիրելիք ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեւեկութիւն ունելով զամբողջ երկիր առ ոտն հարելով յաճախեն ²⁰:

Քարտեզը ներկայացնում է երկու կիսագնդերը, որոնց վրա Հյուսիսային Ամերիկայի և Ավստրալիայի (այստեղ՝ Նոր Հոլանդիա) քարտեզները պատկերված են ոչ ամբողջական, քանի որ դրանք դեռ լրիվ հետազոտված չէին: Էջին առկա են նաև երկու բևեռների և երկու աստեղային քարտեզ, ինչպես նաև մեր մոլորակային համակարգը՝ երկրակենտրոն կերպով: Քարտեզը շատ բանով նմանվում է հոլանդական և այլ ժամանակակից աշխարհացույց քարտեզներին, որոնցից մեկը կարող եք տեսնել քարտեզ 2.2-ում:



2.1. Վանանդեցու առաջին հայերեն քարտեզը՝ Համատարած աշխարհացույցը. Ամստերդամ, 1695 թ.

Քարտեզ 2.1-ի չորս անկյուններում գծված են հունական առասպելների և կենդանակերպի պատկերներ և խորհրդանշաններ, ինչպես նաև տարվա եղանակը ներկայացնող տեսարաններ: Քարտեզի տիտղոսը ներկայացնող ցուցատախտակը պարունակում է քարտեզում գործածված համառոտագրերի բացատրություններն ու այլ տեղեկություններ, որոնք կքննարկվեն հաջորդ էջերում:

Կարևոր խնդիրն այն է, որ բոլոր տեղանուններն ու բացատրությունները լատիներենից թարգմանված ու գրված են հայերեն, որի պատասխանատուն հավանաբար ինքը՝ Վանանդեցին, կամ նախիջևանցի Մատթէոս Յովհաննիսեանն ու նրա զարմիկներն են եղել, որոնք ղեկավարում էին Ամստերդամի հայկական տպարանը:

Քարտեզը նման է քարտեզ 2.2-ին՝ 1675 թ. Սելլերզի քարտեզին, և հավանաբար համարժեք է ժամանակի հոլանդական և եվրոպական այլ քարտեզներին, որոնցից կարելի է նշել Նիոկլաս դե Ֆերը (1694, Փարիզ), Յակոբ Ռոբինը (1696, Ամստերդամ), Ջոն Հարրիսը (1687, Լոնդոն) և Ռոբերտ Մորդենը (1699, Լոնդոն)²¹:



2.2. Սելլերզի Նորագույն աշխարհագրոյցը. Լոնդոն, 1675 թ.

Այս քարտեզները Համատարած աշխարհացոյցի հետ համեմատելիս կարելի է տեսնել դրանց բոլորի ընդհանուր աղբյուրները: Բոլոր քարտեզներում էլ Ավստրալիան և Ալյասկան պատկերված են անկատար: Սրանք նաև պարունակում են այլ աշխարհագրական ու աստղագիտական բոլորակներ, ինչպես նաև կենդանակերպին վերաբերող և այլ բոլորակներ: Էջի չորս անկյունների զարդանկարները և առասպելական կերպարներն ու եղանակները ներկայացնող պատկերները հետևյալ անուններն են նշում.

- Պատկեր 2.3. Վերին ձախ կողմում ներկայացված են՝ Գարնանայինք, Ֆայտոն, Լուսաբեր, Հրատ, Ֆեբոս, Պիտ, կենդանակերպից՝ Երկաուր:
- Պատկեր 2.4. Վերին աջ կողմում ներկայացված են՝ Ամառնայինք, Երևակ, Փայլածու Արուսեակ, Ծիածան, Հերայ, Երեկոյ, Արտեմեայ, կենդանակերպից՝ Առիւծ:
- Պատկեր 2.5. Ներքևի ձախ կողմում ներկայացված են՝ Աշնանայինք, Խլօրիս, Պոսիդոսայ, Պան, Կուրէ, Բաքոս, Բեղոն, կենդանակերպից՝ Կշիռ, Կարիճ:
- Պատկեր 2.6. Ներքևի աջ կողմում ներկայացված են՝ Ձմեռնայինք, Թէոխ, Պոսիդոն, Էօլոս, Բորեաս, կենդանակերպից՝ Չուկն, Ջրիոս, Այծեղջիւր:



2.3. Համատարած աշխարհացոյցից. Գարնանայինք



2.5. Համատարած աշխարհացոյցից. Աշնանայինք



2.4. Համատարած աշխարհացոյցից. Ամառնայինք




2.6. Համատարած աշխարհացոյցից. Ձմեռնայինք

Քարտեզի վերին կենտրոնում են հյուսիսային և հարավային կիսագնդերի աստեղային երկնքի բոլորակները: Այստեղ պատկերված ու անվանված են համաստեղովթյուններն ու կարևոր աստղերը: Այս բոլորակներն էլ նման են ժամանակակից մյուս աստեղացույց բոլորակ քարտեզներին, որոնք ընդհանրապես տեղադրվում էին եվրոպական աշխարհացույցներում (տես պատկեր 2.7): Սրանք կարելի է համեմատել համաշխարհային համբավ ունեցող քարտեզագիրների գործերի հետ, որոնցից պետք է նշել կարևորները՝ Ռոմոլո Մերկատոր (1594, Ամստերդամ), Յոզեֆու Հոնդիուս (1636, Փարիզ), Ջոն Սպիդ (1626, Լոնդոն), Ուիլյեմ Բլաու (1669, Ամստերդամ), Ժան Բոասսո (1636 և 1645, Փարիզ), Յանսսոն Վիսշեր (1638 և 1639, Ամստերդամ) և ուրիշներ:



2.7. Համատարած աշխարհացույցից աստեղային բոլորակներ

Քարտեզի ներքևի կենտրոնում տեղադրված են երկու բոլորակ, որոնք ներկայացնում են Հյուսիսային և Հարավային բևեռների քարտեզները: Հարավային բևեռը դեռ հետազոտված չէր, հետևաբար այնտեղ տեղանուններ և նշումներ չկան (տես քարտեզ 2.8):



2.8. Համատարած աշխարհացույցից բևեռային շրջաններ

Աստեղային երկինքների բոլորակների ներքևում առկա է մեր մոլորակային համակարգը, որը, հակառակ կոպեռնիկոսյան տեսության, պատկերված է երկրակենտրոն վարկածով, որը համապատասխանում էր քրիստոնեական դոգմաներին ու կրոնական հայրերի կարգադրություններին, ըստ որոնց՝ Արեգակը, Լուսինն ու բոլոր մոլորակները պտտվում են երկրագնդի շուրջը (տե՛ս քարտեզ 2.9): Սրանց ծիրերը, սկսած կենտրոնից, ունեն հետևյալ հերթականությունը.

- Երկրագունդը կենտրոնում
- Արեգակ
- Լուսին
- Հրատ — Մարս
- Փայլածու — Մերկուրի
- Լուսնթագ — Յուպիտեր
- Երևակ — Սատուրն



2.9. Համատարած աշխարհացոյցից մոլորակների ծիրերը



2.10. Համատարած աշխարհացոյցի ցուցատախտակը

Քարտեզի հիմնական ցուցատախտակը տեղադրված է կիսագնդերի միացման ներքևում և պարունակում է համառոտագրության բացատրությունը և չափաժող տեղեկանք քարտեզը պատրաստողների մասին (տե՛ս պատկեր 2.10): Ցուցանակի հիմնական գրությունն է.

Նորոք քանդակ գեղեցկավէպ հանրանշան
Փոխաբերեց Թօմայ յետնորդ ոսո Վանանդեան:

Պատուագիր Աշխարհացոյցիս
Փորագրութիւն յոյժ ցանկալի,
Ի ձեռն եղբարց հարագատի,
Արրիանու Ըսկօնքէկի,
Եւ Պետրոսի Քաջավարժի,
Ընդ Ղուկասու Հընտագունի,
Երկամբք բազմօք յայտածողի,
Եղբօր որդի իմ Անդրանկի,
Պահեսցէ էն յիրում ծոցի,
Յ Ամատերդամ
1695

Իսկ դրանց ներքևի փոքրիկ ցուցանակը պարունակում է լատիներեն գրված Սխոնբեկ եղբայրների անուններն ու պատրաստելու թվականը՝ MDCXCV:

Բևեռների բոլորակների ներքևում առկա է մի տարօրինակ անվանում, գծագրված խեցեկերպ ցուցատախտակի մեջ պարսկերենով գրված է «Ջահան-բին», որը թարգմանվում է որպես «աշխարհատես»: Պարսկերենով աշխարհացույց քարտեզները կոչվում են «Ջահան-նումա» կամ «Ջահան-նեմա»: Այս բառերը նաև օգտագործվում է թուրքերենում: Վանանդեցիները, լինելով Նախիջևանի Վանանդ գյուղից և ապա Նոր Զուղայից, հավանաբար գիտեին պարսկերեն և ցանկացել են քարտեզի վրա նաև տեղադրել աշխարհացույցի պարսկերեն անվանումը, սակայն ցանկանալով հեռու մնալ թուրքերենից՝ դա փոխարինել են մոտավոր և նման մի անվանումով, այսինքն՝ «Ջահան-նումա»-ն՝ «Ջահան-բին»-ով (տե՛ս պատկեր 2.11):



2.11. Համատարած աշխարհացոյցից *Ջահան նյումա* անվանումը

Ժամանակի քարտեզագրության մեջ զրոյական միջօրեականի տեղը ընտրում էր ինքը՝ քարտեզագիրը: Քանի որ քարտեզների մեծ մասը արտադրվում էին Արևմտյան Եվրոպայում, հետևաբար զրոյական միջօրեականը հատում էր հիմնականում Փարիզը, Լոնդոնը, Սյուտան, Օսլոն, Կանարյան կղզիները, նույնիսկ Սանկտ Պետերբուրգն ու Երուսաղեմը: Հայերեն այս քարտեզը, գծված լինելով հոլանդացի եղբայրների ձեռքով, զրոյական միջօրեականը որոշված է այն, որն անցնում է Երանելեաց, այսինքն՝ Կանարյան կղզիներով: Միայն 1884 թ. հոկտեմբերի 13-ին էր, որ Վաշինգտոնում միջազգային աշխարհագրական կոնգրեսը Բրիտանիայի Գրինուիչի աստղադիտարանով անցնողն ընտրեց որպես միջօրեական զրոյի աստիճանաչափը:

Քարտեզագրական տեսակետից Հայաստանի շրջանը Վանանդեցու համար պետք է լիներ հարավատ և հավանաբար ավելի կարևոր, սակայն քարտեզի վրա Փոքր Հայքն ու Մեծ Հայքը չեն արժանանում հատուկ ուշադրության, այլ ներկայացվում են այնպես, ինչպես քարտեզներից շատերի վրա (տե՛ս քարտեզ 2.12): Փոքր և Մեծ Հայքերը նշված են կարմիրով և կանաչով, մինչդեռ ընդհանուր Հայաստան անվանումը նշված է դեղինով: Հայաստանի քաղաքներից հիշատակվում են Վանը, Արզրումը, Արզնգան, Խլաթը, Բերկրին, Արջէշը, Գողթնը, Մալաթիան, Թոխաթն ու Խարբերդը: Վրաստանում (այստեղ՝ Գուշխտան) անվան է Գորի քաղաքը: Հայաստանից արևելք են ընկած պարսկական Մարաղա, Սալմաստ, Թավրիզ, Ռեշտ և Բաքու քաղաքները:



2.12. Համատարած աշխարհագրոյցից Հայաստանի տարածաշրջանը

Նույն քարտեզի վրա առկա Կասպից ծովը գծված է իր ավանդական ձևաձև կերպարանքով, որը գործածվում էր շուրջ 2000 տարի: Միայն վաղ 18-րդ դարում էր, որ ոտա կայսր Պետրոս Առաջինը կարգադրեց հետազոտել ծովի շրջակայքը և պատրաստել դրա ճշգրիտ քարտեզը: 1720-ականներից սկսած՝ սրանով Կասպից ծովի պատկերը դարձավ իրականին համապատասխան: Քանի որ Համառութաբան Աշխարհացոյցը հրատարակվել է նախքան այդ թվականը, հետևաբար դրանում դեռ երևում է ծովի՝ հնուց ընդունված կերպարանքը:

Վանանդեցու Համառութաբան Աշխարհացոյցը մեծ ազդեցություն ունեցավ հայ քարտեզագրության վրա՝ իրականում հիմնադրելով այդ գիտությունը և դրան հաջորդող տպագրված բոլոր քարտեզները, որոնցից շատերն աշխատում էին, նմանվելով Համառութաբան Աշխարհացոյցին, ունենալ բարձր որակ և ապահովել ճշգրտությունը: Իսկ օտար տեղանունների թարգմանությունը նույնպես հիմք դարձավ հայերենով տեղանունների ամրապնդման համար, որոնց թերություններն աստիճանաբար շտկվել են տարբեր մասնագետների կողմից:

Արձանագրված է, որ Համառութաբան Աշխարհացոյց-ի հրատարակվելուց հետո՝ 1696 թվականին, դրա փոքրադիր օրինակը և հրատարակվել է Ամստերդամում, սակայն դրանց օրինակներից մեզ չեն հասել²²:

* * *

Ինչպես նշվեց, Վանանդեցու տպարանը պարտքերի պատճառով 1717-ին դրվեց աճուրդի, և նրա բոլոր նամակները, արխիվն ու քարտեզների պղնձյա թիթեղներն անհետացան: 34 տարի անց Մխիթարեան միաբանության Հայր Զաքարիա Ալեքսանեանը Կոստանդնուպոլիս այցի ընթացքում Պողոս Բուրսաօղլուի այրու մոտ տեսնում է Համառութաբան Աշխարհացոյց-ի փորագրված պղնձյա ութ թիթեղները: Դրանք վաճառքի էին դրվել 500 ոսկով, սակայն երկար բանակցություններից հետո Հ. Զաքարիային հաջողվում է դրանք գնել 220 ոսկով և 1753 թ. տեղափոխել Սբ Ղազար²³:

Հաջորդ երկու տարիների ընթացքում թիթեղները նորոգվեցին, և քարտեզի օրինակները սկսեցին տպագրվել Վենետիկում: Սրանց կանդրադառնանք հաջորդ մասում: Քսաներորդ դարի կեսերին քարտեզի պղնձյա ութ թիթեղները կրկին անհետացան՝ այս անգամ հավանաբար զոհ գնալով Միաբանության շինությունների և աշտարակի մեջ տարվող նորոգողական աշխատանքներին:

Համառութաբան Աշխարհացոյց-ի՝ Ամստերդամում տպագրված քարտեզներից այժմ գոյություն ունի շուրջ 15 օրինակ: Սրանք պահպանվում են Մատենադարանում, Հայաստանի ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ աշխարհագրության ինստիտուտում, Էջմիածնում, Լոնդոնի Բրիտանական գրադարանում, Փարիզի ազգային գրադարանում, Երուսաղեմի Կիպլենկեան գրադարանում, Նոր Զուղայի թանգարանում, Վիեննայի և Վենետիկի Մխիթարեան միաբանություններում, Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժի գրադարանում, Լայդենի համալսարանի գրադարանում, երկու օրինակ էլ՝ Թբիլիսիում: Վերջին օրինակը, ըստ մեզ հասած տեղեկությունների, Զատիկ Խանգաղեանին էր (1886-1980), որի մասին ներկայում հավելյալ տեղեկություններ չկան:

* * *

Քարտեզը հրատարակելուց հետո՝ 1696 թ., Ամստերդամում հրատարակվեց մի փոքրիկ ուղեցույց գրքույկ, որի նպատակն էր քարտեզը դիտողին բացատրել և ուղղորդել նրանում եղած նյութերից օգտվելու եղանակը: Գրքույկը կոչվում է Բանալի Համառութաբանի աշխարհացոյցի մերոց նորածնի, որը

պարունակում է հավելյալ տեղեկությունները կարևոր առևտրական կենտրոնների մասին, որոնք կարող են օգտակար լինել ճամփորդող վաճառականներին: Գրքի գլուխների անվանումներն են.

Առ Հայկաստն Ընթերցողս
Նախերգութիսն

- Պրակ Ա — Յաղագս Հասարակածունին
- Պրակ Բ — Յաղագս Կենդանակերպարանին
- Պրակ Գ — Յաղագս Միջօրեայ Գծին
- Պրակ Դ — Յաղագս Երկուց Արևադարձիցն
- Պրակ Ե — Յաղագս Երկուց Բևեռականացն
- Պրակ Զ — Յաղագս Գօտեացն Երկրի
- Պրակ Է — Յաղագս Հանգիստարացեից Գծիցն եւ Կլիմայիցն

- Պրակ Ը — Յաղագս Աստիճանացն Շրջանակաց Համատարածի մերոյ Աշխարհացոյցի
- Պրակ Թ — Յաղագս Չարիաց, զորս Կիրարկանեն Աշխարհագետքն
- Պրակ Ժ — Աղիսակ Հանգիստարացեից, Կլիմայից՝ երկայնութեան աուր, և բարձրութեան Բևեռին՝ կամ լայնութեան առաջնոյ Միջօրեին

Պատկեր 2.13-ում ցուցադրված է պրակ 1-ից երկու էջ, որոնցում ներկայացված են տարբեր կլիմայական գոտիները, նրանց աշխարհագրական լայնությունները, ցերեկվա ժամերը և այլն:

Համար	Մաս	Սկզբնական ժամ	Միջին ժամ	Վերջնական ժամ	Մնացորդ	Մեծություն
0		12. 0	0. 0		0. 0	անշունչ
1	0	12. 15	4. 15		0. 0	տառաչել է
2		12. 30	8. 34		8. 34	Շատ քիչ
3	1	12. 45	12. 43			մեծ
4		13. 0	16. 43		7. 50	Շատ քիչ
5	2	13. 15	20. 33			մեծ
6		13. 30	23. 10		7. 3	Շատ քիչ
7	3	13. 45	27. 36			մեծ
8		14. 0	30. 47		6. 9	Շատ քիչ
9	4	14. 15	33. 45			մեծ
10		14. 30	36. 30		5. 17	Շատ քիչ
11	5	14. 45	39. 2			մեծ
12		15. 0	41. 22		4. 30	Շատ քիչ
13	6	15. 15	43. 32			մեծ
14		15. 30	45. 29		3. 48	Շատ քիչ
15	7	15. 45	47. 20			մեծ
16		16. 0	49. 1		3. 13	Շատ քիչ
17	8	16. 15	50. 33			մեծ
18		16. 30	51. 5		2. 44	Շատ քիչ
19	9	16. 45	53. 17			մեծ
20		17. 0	54. 29		2. 17	Շատ քիչ
21	10	17. 15	55. 34			մեծ

2.13. Երկու էջ Բանալի Համատարածի աշխարհացոյցին գրքից. Ամստերդամ, 1696 թ.

Քարտեզ 2.14. Այստեղ վերատպված քարտեզը Հանատարած աշխարհացոյց-ի՝ Վենետիկում տպագրված տարբերակի օրինակներից է: Բուն քարտեզը պատրաստվել էր 1690-ական թվականներին, երբ Կասպից ծովի ներկայացված կերպարանքն ավանդականն էր և չէր համապատասխանում իրականին: Չնայած այն պարագային, որ 1753-ից հետո քարտեզը վերանորոգվել է, Կասպից ծովի ցուցադրված կերպարանքը, որն այս ընթացքում արդեն ճշտվել էր, նույնովիցամբ պահպանվել է և չի փոխվել: Երկու տարբերակների տարբերությունը նկատելի է քարտեզի տիտղոսում, որն առաջինում քարտեզի ներքևում է, իսկ այստեղ՝ քարտեզի վերևի մասում:

Քարտեզի օրինակը տպագրված է հավանաբար մոտ 1754 թ. և պահպանվում է Հայաստանի ազգային գրադարանում:

2.14. Հանատարած աշխարհացոյց. Վենետիկ, մոտ 1754 թ.



ԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ



Գլուխ 3. Տասնութերորդ դար

Հակառակ Եվրոպայում հայ տպագրատների հանդիպած խնդիրներին ու խոչընդոտներին՝ 18-րդ դարը կարելի է համարել հայ քարտեզագիտության ոսկեդարը: Այս երևույթի համար պարտական ենք Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հայրերի ծավալուն և ժրաջան աշխատանքներին, որոնք դրեցին հայ քարտեզագրության իրական հիմքն ու դպրոցը:

1715 թ. ընթացքում մի խումբ հայ կաթողիկե վանականներ, Կոստանդնուպոլսի ճնշող մթնոլորտից հեռացած, աբբահայր Մխիթար Սեբաստացու (1676–1749) ղեկավարությամբ հաստատվել էին Վենետիկում: Ամստերդամի տպագրատան փակվելու տարում՝ 1717 թ., Վենետիկի Ծերակույտը նրանց շնորհեց Վենետիկի ավագանում գտնվող Սբ Ղազար կղզին, որտեղ նրանք հիմնեցին Հայկական Մխիթարեան միաբանութիւնը: Նրանց նպատակն էր քաջալերել և ամենուր տարածել հայ կրոնական ու գրական մշակույթի ժառանգությունը, որի համար այդտեղ հիմնեցին գրադարան, թանգարան և հետազոտական կենտրոն, ինչպես նաև 1789-ին՝ մի տպագրատուն: Մինչ Մխիթարեանների տպագրատան հիմնվելը իրենց պատրաստած գրականությունը հիմնականում տպագրում էին Վենետիկի Անտոնիո Բոտտոլի և մի քանի այլ տպարաններում: Գրական, կրոնական և արվեստագիտական գրքերից բացի՝ Մխիթարեանները Վենետիկում հրատարակել են աշխարհագրական ու գիտական աշխատություններ ու քարտեզներ: 18-րդ դ. ընթացքում հայերեն քարտեզները հրատարակվում էին միայն Վենետիկում²⁴: Այս մենաշնորհը վերջացավ, երբ մի քանի աբբահայրեր հիմնեցին միաբանության Տրիեստի մասնաճյուղը, որը 1811 թվականին տեղափոխվեց Վիեննա:

Ինչպես նախապես նշվեց, 1753 թվականին Հայր Զաքարիան Համատարած աշխարհացոյց-ի թիթեղները գտավ ու բերեց Վենետիկ, որտեղ դրանց նորոգումից հետո՝ մինչև 1782 թ., շուրջ 30 օրինակ տպագրվեց հատկապես Կոստանդնուպոլսի հայ համայնքի համար (տե՛ս քարտեզ 2.14):

Ամստերդամի հայերեն քարտեզի հրատարակությունից 50 տարի դադարից հետո հրատարակվեց երկրորդ հայերեն քարտեզը, որը Վենետիկում 1746 թ. տպագրված Երկիր Աեւտեաց քարտեզն էր՝ 49x38 սմ չափերով (տե՛ս քարտեզ 3.1): Քարտեզում ցուցադրված են Հյուսիսային Եգիպտոսը, Հյուսիսարևմտյան Արաբիան և Պաղեստինը: Ավետյաց երկիրը բաժանված է երեք մասի, որոնք անվանված են Հրեաստան, Սամարա և Գալիլեա: Քարտեզը փորագրել է Հայր Իգնատիոս Խաչատուրեանը: Նույն քարտեզը տեղադրվել է նաև Մխիթար Սեբաստացու 1749 թ. Բառզիք Հայկազեան Լեզուի բարանի երկրորդ հատորում՝ հետմահու հրատարակված 1769-ին²⁵:

Մի քանի տարի ընդմիջումից հետո՝ 1751 թ., Վենետիկում լույս տեսավ Համատարած Աշխարհացոյց-ի փոքրադիր տարբերակը (38x24 սմ), որն արտատպված է քարտեզ 3.2-ում: Քարտեզում առկա են երկու կիսագնդերը, որոնք, սակայն, պարունակում են շատ ավելի քիչ տեղանուններ: Քանի որ այդ ժամանակ Կասպից ծովի ափերն արդեն հետազոտված էին, հետևաբար քարտեզը ցուցադրում է դրա իրական կերպարանքը, որը տարբեր է 1695-ի Համատարած Աշխարհացոյց-ում ներկայացվածից:



3.1. Երկիր Անտուց քարտեզը. Վենետիկ, 1746 թ.

Սա նման է 1720-ական թթ. հետո պատրաստված եվրոպական քարտեզներին, որոնցում նույնպես Կասպից ծովի տեսքը ճշտված էր: Նույնիսկ այս քարտեզում Ավստրալիայի և Ալյասկայի շրջանները դեռ անկատար են գծված: Քարտեզը փորագրողն է Հայր Իգնատիոս Խաչատրեանը:



3.2. Համառարած աշխարհացոյց, փոքրադիր. Վենետիկ, 1751 թ.

Այս քարտեզը ևս օգտագործված է Մխիթար Սեբաստացու 1749 թ. Բառգիրք հայկազեան լեզուի բառարանի ավելի ուշ տպագրված առաջին հատորում, ինչպես նաև Ստեփաննոս Ազոնցի՝ 1817 թ. հրատարակված Հասարակախօսութիւն աշխարհագրութեան գրքում²⁶:

Այդ իսկ ընթացքում Վենետիկում տպագրվեց Աստեղալից երկինք կոչված աստեղացույցը, որն ուներ 39x26 սմ չափեր: Այս քարտեզը ևս օգտագործված է Մխիթար Սեբաստացու 1749 թ. Բառգիրք հայկազեան լեզուի ավելի ուշ տպագրված առաջին հատորի մեջ: Այստեղ պատկերված են երկու կիսագնդերի երկնակամարներում երևացող աստեղային քարտեզը՝ համաստեղովթյուններով, և դրանց պատկերներն ու անվանումները՝ ներկայացնելով կարևոր աստղերի անվանումները (տե՛ս քարտեզ 3.3):

Վերոհիշյալ հատորի մեջ առկա են քարտեզագրովթյանը վերաբերող երկու այլ քարտեզներ: Դրանք են Կենդանակերպ բոլորակը և մի Հողմնացոյց քարտեզ, որոնք իրականում քարտեզներ չեն:



3.3. Աստեղալից երկինք. Վենետիկ, 1747 թ.

Մբ Ղազարոս հրատարակված հաջորդ քարտեզը կոչվում է Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց, որը տպագրվել է 1751 թ.: Այն ցուցադրում է Հայաստանը՝ ըստ Շիրակացու Աշխարհացոյց աշխատության, այսինքն՝ 7-րդ դ. ժամանակաշրջանում: Քարտեզը գծված է՝ հիմքում ունենալով Աշխարհացոյց-ի բացատրությունները և նույն աշխատության մեջ ավելացված Միոնասպիոս տրված քաղաքների միջև ընկած հեռավորությունները և նրանց համեմատական տեղադրումը: Քարտեզի չափերն են 51x38 սմ, որ փորագրել է իտալացի Զուգեպպե Զուքքին (տե՛ս քարտեզ 3.4):

Այստեղ նաև ցուցադրված են Փոքր և Մեծ Հայքի 15 աշխարհները (նահանգները) և դրանց գավառները՝ իրենց անվանումներով: Մեծ Հայքը տարածված է Հայկական լեռնաշխարհի կամ բարձրավանդակի վրա՝ սկսվելով Մալաթիայից, Կամախից ու Խարբերդից մինչև Ատրպատական և Փայտակարան՝ Կուրի և Արաքսի խառնարանից արևելք: Քարտեզը տեղադրվել է նաև Մխիթար Սեբաստացու Բառգիրք հայկազեան լեզուի բառարանի երկրորդ հատրի մեջ՝ հրատարակված 1769 թ.:



3.4. Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ ինն և նոր աշխարհագրաց. Վենետիկ, 1751 թ.

Նախքան 1784 թվականը Մխիթարեանները Վենետիկում մի քարտեզ էին պատրաստել՝ նպատակ ունենալով ցույց տալու Հին Հայաստանի «աշխարհները»: Սա 41,5x20 սմ չափսի քարտեզ է՝ առանց հեղինակի անվանման և հրատարակման տարեթվի: Բայց քանի որ քարտեզը տեղադրված է Չամչեանի՝ 1784 թ. հրատարակված Պատմութիւն Հայոց եռհատորյակի երրորդ հատորում, ուրեմն պետք է որ պատրաստված լինի նախքան այդ²⁷: Քարտեզում տեղադրված աղյուսակը նշում է հայկական աշխարհները և նրանց գավառների անվանումները (տես քարտեզ 3.5):



3.5. Գաւառք Հայաստանի. Վենետիկ, նախքան 1784 թ.

18-րդ դարի վերջերին Սբ Ղազարոմ հրատարակված քարտեզները սկսեցին հետաքրքրություն առաջացնել Կոստանդնուպոլսի հայկական համայնքում, որի արդյունքը եղավ մեծ թվով քարտեզների հրատարակումը: Դրանցում հատուկ ուշադրություն էր դարձվում Օսմանյան կայսրության, Սև և Մարմարա ծովերի և դրանց շրջակայքի քարտեզներին: Սրանք պատրաստվում էին Կոստանդնուպոլսի հայ համայնքի պատվերներով, և տպաքանակի մեծ մասն ուղարկվում էր այնտեղ վաճառքի նպատակով:

Մխիթարեանների՝ Սբ Ղազարոմ հրատարակված հաջորդ մեծադիր քարտեզը կոչվում է Աշխարհացոյց Հայաստանեայց, որը տպագրվել է 1778 թ. հնդկաստանաբնակ Շամիր Շամիրեանի (նաև ճանաչված որպես Շահամիր Շահամիրեան, 1723–1797 թթ.) պատվերով: Քարտեզն ունի 83x83 սմ չափեր, որի զարդատախտակում առկա է հետևյալ հիշատակարանը.

Փորագրեալ արդեսամբբ՝ աղայ Շամիրի,
 Մեծի Շամիրեանց՝ տանըն պանծայի.
 Առ իյիշատակ՝ իւրում անդրանիկի,
 Յակոբոս անուն, որդոյ նազենի:
 Որ ինանկական՝ ծաղկեալ հասակի,
 Վախճանեալ փոխի՝ Հնդկաց աշխարհի,
 Թողեալ կաթոգին՝ զիրս ըզկնի,
 աշակերտութեանք գրրոց սոփեստի:
 Ի Վենետիկ, 1778: Ի թուին հայոց ունի:



3.6. Աշխարհացոյց Հայաստանեայց. Վենետիկ, 1778 թ.

Քարտեզի ցուցատախտակում առկա են զարդանկարներ, որոնք հայ քարտեզագիտության մեջ առաջին ճոխ զարդարանքներն են: Այստեղ պատկերված են փողեր, շեփորներ, նիզակներ ու մարտական դրոշներ, ինչպես նաև հայ դիցաբանական նախահայրերից Հայկն ու Արամը, իսկ թագավորներից՝ Մեծն Տիգրանն ու Մեծն Տրդատը: Քարտեզի ստորին ձախ անկյունում տեղադրված է մի շքեղ հողմացույց, որի վրա նշված են բոլոր հողմերի անվանումները:

Մեծադիր այս քարտեզի վրա հյուսիսում ներկայացված տարածքը Ղրիմն է, հարավում՝ Արաբական անապատը և Պարսից ծոցը, արևմուտքում՝ Էգեյան ծովն ու Կրետե կղզին, իսկ արևելքում՝ Կասպից ծովի արևելյան ափերը: Քարտեզում Հայաստանի տարածքը նշված է 1751 թ. Սբ Ղազարոս Մխիթարեանների հրատարակած Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց քարտեզի հիման վրա: Այստեղ շեշտը դրված է Արարատի և Նոյյան տապանի, ինչպես նաև Վաղարշապատի և Անիի վրա: Քանի որ Շամիրի նախահայրերը Նախիջևանից էին, նա ցանկացել է, որ քարտեզագիրը հատուկ ուշադրություն դարձնի Նախջուան քաղաքին, որը պատկերված է որպես մի ամրոց, ինչպես նաև Իրանի Սպահան քաղաքին և դրան կից հայաբնակ Նոր Ջուղային, որի բնակչությունը հիմնականում Նախիջևանից բռնագաղթված հայերն էին (տե՛ս քարտեզ 3.6):


Ծանոթագրություն

Պետք է նշել, որ Սբ Ղազարոս Մխիթարեանների հրատարակած քարտեզների ժամանակագրությունը հստակ չէ: Հաճախ տվյալ քարտեզի հրատարակումից մի քանի տարի անց նույնը հրատարակվել է առանց տարեթիվը փոխելու: Քարտեզներից շատերն առանց տարեթվի փոփոխության տպագրվել են բարակ թղթերի վրա կամ փոքրացված են ու տեղադրված Մխիթարեանների այլ հրատարակությունների մեջ՝ պահպանելով բնագրի վրա փորագրված տարեթիվը:

1784 թ. Վենետիկում պատրաստվել է մի փոքրադիր քարտեզ, որը նույնպես տեղադրված է Չամչեանի՝ 1784 թ. հրատարակված Պատմութիւն հայոց եռահատորյակի առաջին հատորի 566-րդ էջում: Քարտեզը գունավոր է և ունի 10x8,5 սմ չափեր: Այստեղ Հայաստանը պատկերված է երեք մասի բաժանված՝ Վերին Հայք [Արևելահայաստան], Ստորին Հայք [Արևմտահայաստան] և Փոքր Հայք (տե՛ս քարտեզ 3.7):



3.7. Հայաստան, Չամչեանի «Պատմութիւն հայոց» գրքից. Վենետիկ, 1784 թ.



3.8. Համաշխարհային Գնդադրամասի քառակուսի. Վենետիկ, Սր Ղազար, 1784 թ.

Նույն թվականին Մխիթարեանները հրատարակեցին մեկ այլ աշխարհացոյց քարտեզ, որը, առաջին անգամ լինելով, գծված և փորագրված է Վենետիկում՝ ըստ հոլանդացի հայտնի քարտեզագետ Մերկատորի պրոյեկցիայի, որտեղ աշխարհի բևեռային շրջանները ցուցադրվում են լայնացած, և որը ժամանակին մեծ գործածություն ուներ: Քարտեզն ունի 43x29 սմ չափեր, փորագրիչը վարպետ Եղիա Էնտազեանն է, որի փորագրած քարտեզներն ունեին բարձր որակ:

Քարտեզը կոչվում է Համաշխարհային Գնդադրամասի, և սրա ցուցատախտակը բավականին ճոխ է ու զարդարուն: Էջի վրա պատկերված է ամբողջ աշխարհը, որի ուղղահայաց երկայնությունները ճշգրիտ են, իսկ հորիզոնականներն ունեն աստիճանաբար փոփոխվող կշիռ: Այստեղ Ավստրալիան ներկայացված է համարյա հետազոտված, իսկ Ալյասկան ու Կանադայի հյուսիսը դեռ անկատար են ներկայացված: Հայաստանի տարածքում առկա է Արարատը՝ գագաթին Նոյյան տապանով, առկա են նաև հոգևոր կենտրոն Էջմիածնի ու հին մայրաքաղաք Տիգրանակերտի անվանումները: Զրույական միջօրեական այստեղ ընտրված է Երանելի կղզիներով անցնողը (տե՛ս քարտեզ 3.8):

Այս ժամանակաշրջանում Մխիթարեան հայրերը որոշեցին հրատարակել մայրցամաքների քարտեզները, որոնք Կոստանդնուպոլսում ունեին լավ պահանջարկ, հատկապես համայնքում, ինչպես նաև կրթական համակարգի մեջ: Հրատարակված քարտեզները համապատասխանում էին ժամանակակից աշխարհագրական հետազոտություններին ու քարտեզագրական նորմերին: Սրանք հրատար



3.9. Աֆրիկա, 67x48 սմ. Վենետիկ, Սք Ղազար, 1786 թ.

րակվում էին առանձին էջերի վրա, հետագայում մի քանի անգամ սրանք հավաքվել ու կազմվել են մեկ մեծադիր հատորի մեջ՝ ներկայացվելով որպես ատլաս, բայց առանց բացատրական տեքստերի և հավելյալ տեղեկությունների:

Քարտեզների մեծամասնությունը փորագրված է վարպետ Էնտազեանի ձեռքով, որոնք վկայում են նրա աշխատանքի բարձր որակի մասին: Յավոք, Էնտազեանը վախճանվեց՝ թողնելով միայն վեց փորագրված քարտեզ: Սրանք բոլորն էլ օժտված են մեծադիր ցուցատախտակներով, որտեղ առկա են տեսարաններ և քարտեզի վերաբերյալ համառոտ բացատրություններ: Բոլոր չորս մայրցամաքների քարտեզների հավելյալ վերնագիրն է Ըստ նոր աշխարհագրական գննություննց՝ շեշտելով դրանց արդիական լինելը:

Աֆրիկայի քարտեզում տեղանունները համեմատաբար նոսր են՝ հետազոտությունների բացակայության պատճառով: Կենտրոնական շրջանները և Նեղոսի ակունքներն անորոշ են, Հյուսիսային Աֆրիկան կոչված է Աշխարհ Բարբարոսաց [Բերբերներ], որտեղ նշված են Մարոզը, Ճեզայիրը [Ալժիրը], Թունուզը, Տրապուլուզը [Լիբիա], Եգիպտոսը և Նուպիան [Սուդանը]: Արևելքում է Արեշը [Հաբեշտանը], իսկ կենտրոնում Եթոպիան է: Հարավային շրջանում առկա է մի մեծ երկիր՝ Կապրաստան, որի շուրջը նշված են բնիկ տարբեր ցեղերի անուններ: Արևմտյան կենտրոնական շրջանի ծովափնյա շրջանը կոչված է Կուինեա (տես քարտեզ 3.9):

Ասիայի քարտեզն ավելի ճշգրիտ է, քան Ա.Ֆրիկայինը, քանի որ ասիական մայրցամաքն ավելի հետազոտված էր: Երկրների սահմանները նշված են, սակայն արևելյան ծայրամասի ափերի ու կղզիների մեջ առկա են անճշտություններ: Նոր Գվինեան գծված է անկատար, մինչդեռ Չինական ծովի Սունդա կղզիները տրված են մանրամասնություններով: Քարտեզագրության և մանրակրկիտ հետազոտությունների համար պարտական ենք իսպանացի, պորտուգալացի, անգլիացի և հոլանդացի առևտրական նավատորմերին, որոնք, Հեռավոր Արևելքում առևտրական նպատակների համար կարիք ունենալով ճշգրիտ քարտեզների, իրենց ունեցածներն անդադար վերանայում ու լրացնում էին՝ միշտ նորությունները գաղտնի պահելով իրենց մրցակից գաղութարարներից (տե՛ս քարտեզ 3.10):



3.10. Ասիա, 71 x 48 սմ. Վենետիկ, Սր Ղազար, 1786 թ.

Եվրոպայի քարտեզի վրա նույնպես նշված են սահմանները, և ներկայացված են հետևյալ երկրները՝ Իսպանիա, Կղզիք Բրիտանիոյ, Իռլանտա, Գաղղիա, Իսպանիա, Փորթուգալ, Իտալիա, Գերմանիա, Հոլանտա, Ֆրանտրա, Դանիք, Աստոիա, Մաճարք, Լեհաստան, Բուլղարք, Փոքր Թաթարք, Ռուսք Մոսկովաց, Նորւեգիա, Շվեդ: «Փոքր Թաթարք» անվանումն օգտագործված է Ուկրաինայի և Մոլդովայի համար: Հունաստանը, լինելով Օսմանյան կայսրության գրաված տարածք, նշված չէ որպես առանձին երկիր, իսկ Ֆինլանդիան Ռուսական կայսրության մաս է կազմում: Քարտեզի հարավարևելյան ծայրամասում առկա են Փոքր Հայքը և Մեծ Հայքը՝ տեղակայված Անատոլիայից արևելք: Ազովի ծովը նշված է որպես Ծով Ազախու (տե՛ս քարտեզ 3.11):



3.11. Եվրոպիա, 68x48 սմ. Վենետիկ, Սք Ղազար, 1786 թ.

Ամերիկայի քարտեզը (3.12) նմանվում է հոլանդական և արևմտյան այլ քարտեզներին: Հյուսիսային Ամերիկայի բևեռային շրջանները քանի որ դեռ հետազոտված չէին, առանձնացված են բուն քարտեզից և որպես ներդիր տրված են մի պարզ գծագրի տեսքով: Հյուսիսային Ամերիկայում են Կանադան, Մեկսիկոն, իսկ ներկայիս ԱՄՆ-ի տարածքում առկա են որոշ նահանգ-շրջաններ, ինչպես, օրինակ՝ Լուիսիա, Փլորիդա, Կառոլիա, Վիրջինիա, Կալիֆոռնիա, Նոր Մեկսիկո, Նոր Եորկ, Նոր Ինկլիդերա և Մերիլենդ նահանգները: Առկա են նաև մի քանի մեծ քաղաքներ:

Կենտրոնական Ամերիկան անվանված է Նոր Սպանիա, իսկ Հարավային Ամերիկայի տարածքում են Փանամա, Կոլանա, Բերու, Քիլի [Չիլի], Ուրուկվայ, Բարակվայ, Երկիր Մակելանեսա, իսկ կենտրոնում՝ Աշխարհ ամազոնեսաց (տե՛ս քարտեզ 3.12):



3.12. Ամերիկա, 66x47 սմ. Վենետիկ, Սր Ղազար, 1787 թ.

Պետք է նշել, որ քարտեզների նշված չափերը դրանց առաջին տպագրությանն են վերաբերում: Նույն քարտեզները հաճախ վերահրատարակվել են տարբեր չափերով:

Քարտեզ 3.13-ի Լայնատարած տերություն օսմանցոցն որ յԱսիայ, յԵւրոպայ և յԱֆրիկայ կոչված քարտեզը հրատարակվել է 1787 թվականին Սբ Ղազարոմ: Քարտեզն ունի 26x27 սմ չափեր, որի փորագրողն է Էնտազեանը: Քարտեզը, ինչպես տիտղոսն է նշում, ցույց է տալիս Օսմանյան կայսրության գրաված բոլոր տարածքները՝ սկսած Եգիպտոսից մինչև Աձեմի տերություն [Իրան], Ռումելիայից մինչև Վրաստան:



3.13. Լայնածաւալ տէրութիւն օսմանցոցն. Վենետիկ, Սբ Ղազար, 1787 թ.

Հայաստանը բաժանված է Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև: Հայաստանի քաղաքներից նշված են՝ Երևան, Նախիջևան, Էջմիածին, Վան, Բիթլիս, Խլաթ, Բայազետ, Էրզրոմ և ուրիշներ: Քարտեզի որոշ օրինակներ գտնավոր են: Նույն քարտեզն օգտագործվել է 1789 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված օրացույցի մեջ, ինչպես նաև 1804-ին Սբ Ղազարում հրատարակված Ղուկաս Ինճիճեանի Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի չորրորդ հատորում: Բարակ թղթի վրա տպագրված քարտեզը գրքում տեղադրված է որպես ներդիր²⁸:

Մոտ 1788 թ. Սբ Ղազարում պատրաստվել էին վեց փոքրադիր քարտեզներ՝ մոտավորապես 15,5x10 սմ չափերով, որտեղ պատկերված էին դասական Հունաստանի հանրահայտ ուղղաանկյունիքները: Սրանք հավանաբար պատրաստվել էին ինչ-որ հին շրջանին վերաբերող պատմության գրքում կամ դասագրքում տեղադրվելու նպատակով: Սրանց օրինակները հազվագյուտ են, որոնց անվանումներն են.

- Աթենքի հատակագիծը
- Մարաթոնի պատերազմը
- Աթենքն ու իր շրջապատը
- Պլատեայի պատերազմը
- Տերմոպիլայի պատերազմը

Սբ Ղազարի քարտեզագիր Ղուկաս Ինճիճեանը, որը որոշ ժամանակ Կոստանդնուպոլսում էր ապրել՝ մտածելով, որ հայ համայնքը կընդառաջի Սև ծովի ու նեղուցի մանրակրկիտ քարտեզների հրատարակությանը, 1791 թվականին Վենետիկի Սբ Ղազարի Մխիթարեան միաբանության կողմից Ալեքսանդրի անունով իտալացի մասնագետի փորագրել է տալիս երկու քարտեզ, որոնք և տպագրվում են Սբ Ղազարում (տե՛ս քարտեզ 3.14):




3.14. Աշխարհացոյց օսմանեան տերութեան որ'ի յԵրուպայ. Վենետիկ, 1791 թ.

Քարտեզը մանրակրկիտ ցույց է տալիս Փոքր Թաթարքի, Բուլղարիայի, Մակեդոնիայի, Հունգարիայի (Մաճարտան), Լեհաստանի, Մոսկովյան պետության և Հյուսիսային Անատոլիայի տարածքը: Քարտեզում, որի չափերն են 41x24 սմ, նշված են բազմաթիվ տեղանուններ՝ իրենց թուրքերեն տարբերակով, որոնք ծանոթ կլինենին կայսրությունում բնակվող և հավանաբար քարտեզը գնող հայերին: Սա օգտակար կարող էր լինել ճամփորդող այն հայ վաճառականների համար, որոնց գործունեությունը տարածվում էր Սև ծովի ավազանում և նրա շրջակայքում: Սակայն հակառակ Ինճիճեանի սպասածին՝ քարտեզի վաճառքը Կոստանդնուպոլսում անհաջող ընթացավ (տես քարտեզ 3.14):

1791-ին տպագրված քարտեզներից երկրորդը Կոստանդնուպոլսի նեղուցի և դրան շրջապատող նավահանգիստների, քաղաքների ու գյուղերի քարտեզն է (տես քարտեզ 3.15): Քարտեզի ամբողջական անվանումն է Նեղուց Կոստանդնուպոլսոյ այն է պողազ իչի: Ի նախնունն Վուսիորոն Թրակիոյ, որի վրա կարելի է տեսնել շուրջ 200 տեղանուն և 60 հետաքրքրական վայրերի անուններ: Այս քարտեզն էլ Ալեքսանդրիի պատրաստածն է և ունի 23x41սմ չափեր:

Այս քարտեզը նույնպես, ինչպես քարտեզ 3.14-ը, տպագրվել է բարակ թղթի վրա և տեղադրվել 1804 թ. հրատարակված Ինճիճեանի աշխարհագրության գրքում:



3.15. Նեղուց Կոստանդնուպոլսոյ այն է պողազ իչի: Ի նախնունն Վուսիորոն Թրակիոյ. Վենետիկ, Սբ Ղազար, 1791 թ.

Գլուխ 4. Տասնիններորդ դար

Տասնիններորդ դարի առաջին քսան տարվա ընթացքում Սբ Ղազարի Մխիթարեան միաբանությունը մի քանի կարևոր քարտեզ հրատարակեց, բայց նախքան դրանց դիտարկումն անդրադառնանք մեկ այլ կարևոր իրադարձության: 1773-ին Տրիեստոմ հիմնված Մխիթարեան միաբանության անդամները, ճողոպրելով ֆրանսիական բանակից, 1806-ին ապաստանեցին Վիեննայում, որտեղ 1810 թ. Ֆրանց կայսրը նրանց իրավունք տվեց հիմնադրելու վանք և միաբանություն: Այսպիսով նրանք հաստատվեցին Վիեննայում և ստացան մի մեծ շինությունից օգտվելու իրավունք, որի փողոցը հետագայում վերանվանվեց Մխիթարեանների փողոց՝ Mechitaristengasse: Ինչպես կտեսնենք ստորև, Վիեննայի միաբանության հիմնադրումն էլ ավելի զարկ տվեց հայ քարտեզագիտության և գլոբուսների կառուցման գործունեությանը:

Մինչ այդ Վենետիկում 1805 թ. տպագրվել էր դարի առաջին հայերեն քարտեզը: Դա Մարմարա ծովի մանրամասն քարտեզն է, որը կոչվում է Աշխարհացոյց Մարմարա ծովուն և նեղուցի Սպիրտակ ծովուն և նեղուցի Սեա ծովուն, որը, ինչպես նաև հաջորդ երկու քարտեզները, ընդգրկում էր հայատառ թուրքերենացված տեղանուններ: Քարտեզի չափերն են՝ 38x25 սմ (տես քարտեզ 4.1):

Քարտեզի վրա ցուցատախտակի գրությունները հայերեն են, մի քանի տեղանուններ գրված են հայերեն և հայատառ թուրքերեն, իսկ մնացածը՝ միայն հայատառ թուրքերեն:



4.1. Աշխարհացոյց Մարմարա ծովուն. Վենետիկ, 1805 թ.

Հաջորդ քարտեզը Սև ծով-Պոնտոսի քարտեզն է՝ տպագրված 1820 թ. 63,5x44,5 սմ չափերով: Սա իրականում ծովային-պորտոլան քարտեզ է, որտեղ հիմնականում ցույց են տրվում միայն ծովափնյա տարածքների մանրամասները՝ առանց նշելու ցամաքում՝ ափից հեռու վայրերն ու նրանց անունները: Ծովափնյա տեղանունները գրված են հայերենով և օսմանյան արաբատառ թուրքերենով: Այսպիսով՝ սա առաջին հայկական երկրագրա քարտեզն է ու նաև առաջին հայերեն պորտոլան ծովային քարտեզը: Քարտեզի ցուցատախտակի վրա միայն նշված է Գծագրեալ Ի Պոնտոս Փորագրեալ Ի Վենետիկ 1820 ՌՄԿԹ (տե՛ս քարտեզ 4.2):



4.2. Պոնտոսի քարտեզը. Վենետիկ, 1805 թ.

Ըստ երևույթին, 1827 թ. Վենետիկում հրատարակվել է Հելլոնտիա անվանված մի քարտեզ, որից ոչ մի օրինակ մեզ չի հասել:

Վենետիկում հրատարակված հաջորդ քարտեզը (տես քարտեզ 4.3) 1830-ին տպագրված Դարիա Խրիմ քարտեզն է, որն իրականում մանրակրկիտ տեղագրական մի փաստաթուղթ է: Տեղանունները հայատառ են, բայց մեծ մասամբ ներկայացնում են թուրքական անվանումները, որոնց մի մասը համարակալված է: Այս համարների դիմաց՝ քարտեզից աջ առկա անվանացանկում տրված են դրանց վերաբերող տեղանունների լատինատառ անվանումները: Տավրիդան Ղրիմի հին հունական անվանումն է, որը ներկայումս գործածական չէ: Քարտեզն ունի 45x32 սմ չափերը:



4.3. Դարիա Խրիմի քարտեզը. Վենետիկ, 1830 թ.

1840-ական թվականներին Վենետիկում հրատարակվեցին օսմանյան պետությանը վերաբերող և երկու քարտեզ, որոնք են Տաճկաստան — Երուսալյա և Տաճկաստան — Ասիայ քարտեզները: Երկու քարտեզներն էլ ունեն համարյա 25x19 սմ չափեր, բայց չկա ո՛չ քարտեզագրի անունը, ո՛չ էլ քարտեզի հրատարակման վայրն ու թվականը:

Առաջին՝ 4.4 քարտեզը ցույց է տալիս Օսմանյան կայսրության՝ Եվրոպայի տարածքում գրաված երկրները, որոնք ներառում են Ալբանիան, Բոզնիան, Բուլղարիան, Դարմատիան [Խորվաթիա], Հունաստանը, Մոլդովան, Ռումելիան [Եվրոպական Թուրքիա], Վալախիան [Ռումինիայի մի մասը], Սերբիան և Սլովենիան:



4.4. Տաճկաստան Եվրոպայ. Վենետիկ, մոտ 1840 թ.

Հաճորդ՝ 4.5 բարտեզը ցուցադրում է Օսմանյան կայսրության գրաված՝ ասիական և աֆրիկյան տարածքները, որոնք են Փոքր Ասիայի երկրները, Վրաստանը, Մեծ Հայքը, Քիւրտիստանը, ինչպես նաև Եգիպտոսի և Արաբիայի մի մասը:




4.5. Տաճկաստան Ասիայ. Վենետիկ, մոտ 1840 թ.

Քարտեզ 4.6-ի հիմնական նյութը մեկ էջի վրա գծված երկու կիսագնդերն են՝ պատրաստված 1850 թվականին Վիեննայում: Քարտեզն անվանված է Հարթագունդը, որի էջը, բացի բուն կիսագնդերը, պարունակում է նաև հետևյալ նյութերով բոլորակներ և գծագրեր.

- Հարավային և հյուսիսային աստեղային երկինք
- Մոլորակների կոպեռնիկյան կարգը, ներառյալ գիսավոր աստղերի ծիրերը
- Ջրային և ցամաքային տարածքների համեմատական համադրումը
- Եղանակային գոտիներ
- Լեռների պատկերներ
- Մեծագույն գետերի պատկերներ

Քարտեզը պատրաստել է Վիեննայի Սբ Աստվածածնի Մխիթարեան ուխտի Հայր Ալեքսանդր Պալճեանը, որի օրինակների մի մասը գունավոր է, իսկ չափերն են՝ 63x49 սմ: Հիմնական կիսագնդերի վրա աշխարհի քարտեզը բավականին ճշգրիտ է գծագրված, և բացի Հարավային բևեռից՝ ցամաքամասերը ներկայացված են համեմատաբար կատարյալ:



4.6. Հարթագունդը. Վիեննա, 1850 թ.

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մեծագոյն քարտեզագրական ծրագիրը 1849 թ. հրատարակած ատլասն էր, որը կոչվում է Ատլաս աշխարհացոյց քարտեզ ազ ըստ արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ և Ռուսաց, որը հրատարակվեց շնորհիվ Յովհաննէս Ամիրայ Տատեանի նյութական հովանավորութեան: Ատլասի առաջին էջը նվիրված է բարերարին՝ գովերգի չափածո ձևով (տե՛ս քարտեզ 4.7):

4.7. Տատեանի ատլասի տիտղոսաթերթը



Ատլասի չափերը 47x62 սմ են, պարունակում է 47 էջ գրավոր երկայունակ տեքստ, որտեղ տրված են բացատրություններ երկրագնդի, մոլորակային համակարգի, հինգ մայրցամաքների ու երկու երկրների՝ Օսմանյան կայսրության և Հայաստանի վերաբերյալ: Քարտեզները ծավաժ կրկնակի էջերի վրա են, և որակն ապահովելու համար դրանք պատրաստվել են մասնագետ փորագրողների՝ Հենրի Սյուտոյի և Հ.Դ. Լալի ձեռամբ Փարիզում: Ատլասը պատրաստված է ճաշակով և բարձր որակով՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հրատարակչության կողմից: Այստեղ տեղադրված քարտեզներն են.

- Տիեզերագրութիւն և դիրք մոլորակաց, 76x54 սմ
- Համատարած աշխարհացոյց բաժանեալ երկու կիսագունդս, 91 x62 սմ
- Եւրոպա, 77x55 սմ
- Ասիա, 77x55 սմ
- Ափրիկէ, 77x55 սմ
- Հիսպանային Ամերիկա, 77x56 սմ
- Հարաւային Ամերիկա, 77x56 սմ
- Ովկիանիա կամ հինգերորդ մասն աշխարհի, 77x55 սմ
- Պետութիւն Օսմանեան, 77x56 սմ
- Հայաստան աշխարհ ըստ նախնի աշխարհագրաց, 81 x57 սմ (տե՛ս քարտեզ 4.8)

Ատլասի վերջին քարտեզը հատկացված է Հայաստանին և ցույց է տալիս Պատմական Հայաստանը և նրա աշխարհները՝ ըստ Շիրակացու Աշխարհացոյցի: Այս քարտեզի համար քարտեզագիրը որոշել է ցույց տալ երկու տարբեր գրոյական միջօրեական. մեկն անցնում է Փարիզով, իսկ մյուսը՝ Արարատի գագաթով: Մեծ Հայքը ներկված է վարդագույն, Փոքր Հայքը՝ դեղին, իսկ Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ կապույտ: Ինչպես 1751 թ. վենետիկյան Հայաստանի 3.4 քարտեզում, այստեղ նույնպես առկա են Մեծ Հայքի աշխարհները և նրանց գավառները (տե՛ս քարտեզ 4.8):



4.8. Հայաստան աշխարհ քարտեզն ատլասից. Վենետիկ, 1849 թ.

1851 թվականին Մխիթարեանների մեծանուն Աբբահայր Ղետնդ Ալիշանը պատրաստեց մի մեծ հատոր, որը կոչվում է Աշխարհացոյց քաղաքական: Գիրքը հրատարակվեց Յովհաննէս Ամիրայ Տատեանի ֆինանսական օժանդակով թիամբ և պարունակում է 21x28,5 սմ չափսի 801 էջ, ունի ներդրված 10 քարտեզ, որոնք առանձին էջերով ներկայացնում են մայրցամաքները և կարևոր երկրները:

Քարտեզների փորագրողները նույն Տատեանի ատլասի փորագրողներն են Փարիզում: Հեղինակը նշում է, որ քարտեզների համար օգտագործված են գերմանական և ֆրանսիական լավագույն աղբյուրները: Գիրքը վերահրատարակվել է 1852 թվականին, սակայն 1851 և 1852 թվականներին հրատարակված հատորները հազվագյուտ են²⁹:

Ալիշանի այս գիրքը վերահրատարակվել է նաև 1853 թվակիր տիտղոսաթերթով, որն ավելի ճանաչված և մեզ հասած հրատարակությունն է: Գրքի անվանումն այժմ փոփոխված է Քաղաքական աշխարհագրություն, նկարացոյց պատկերօք: Այս հրատարակությունից մեզ հասած գրքերն ընդհանրապես բաղկացած են երեք մասից: Առաջին մասը 714-էջանոց բուն աշխարհագրական տեքստն է, այս անգամ՝ 12 քարտեզներով, որի նախաբանում նաև խոսք կա հավելվածների մասին: 1853 թվակիր հրատարակության նախաբանում նաև նշվում է, որ առաջին հավելվածը պատրաստվելու է 1854 թվականին: Այս գիրքն ունի նաև 105-էջանոց երրորդ մաս, որը կոչվում է Տեղագրություն հայոց մեծաց, որը պարունակում է նաև Հայաստանի քարտեզ և թվագրված է 1855:

1853 թվակիր հրատարակված գիրքը կազմված է երկու տարբերակով. առաջինը՝ մեկ ամբողջական հատորով, որն ունի 12 քարտեզ, իսկ երկրորդը նույն գրքի երկու հատորով կազմված տարբերակն է, որն ունի հավելյալ Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց քարտեզը՝ փորագրված Սյուտոյի ձեռքով Փարիզում: Ներքևի քարտեզների ցուցակում այս քարտեզը նշված է * նշանով: Այս հատորների մեծ մասը տպագրվել է 1855 թվականին, սակայն էջ 721-ի աղյուսակը կրում է 1854 թ., իսկ տիտղոսաթերթը նշում է 1853 թվականը:

Հատորն ընդհանրապես հանրագիտարանային բնույթի աշխարհագրական տեղեկություններ է պարունակում ամբողջ աշխարհի, երկրների, ինչպես նաև կարևոր քաղաքների վերաբերյալ: Հատկապես այն քաղաքների մասին, որտեղ առկա են հայկական համայնքներ: Գրքի 1853 թվակիր հրատարակությունը, որը հավանաբար տպագրվել է 1855-ին, պարունակում է հետևյալ ներդիր քարտեզները.

- Համատարած աշխարհացոյց, 38x24 սմ
- Աշխարհագրունտ մակարդակ [մերկատորյան պրոյեկցիայով], 31x24 սմ
- Եւրոպա, 32x24 սմ
- Աշխարհ ծանօթ առ նախնեօք, 40x24 սմ
- Գաղղիա բաժանեալ ի նահանգս, 31x24 սմ
- Ափրիկէ, 32x24 սմ
- Ասիա, 32x24 սմ
- Մասն Ասիոյ, ըստ գրոց Սրբոց և ըստ նախնի աշխարհագրաց, 24x20 սմ
- Երկիր Աեառաց, բաժանեալ ըստ ԺԲ ցեղիցն Իսրայելի, 24x20 սմ
- Հիսիսային Ամերիկա, 32x24 սմ
- Հարաւային Ամերիկա, 24x40 սմ
- Օվկիանիա, 32x24 սմ
- Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց*, 32x24 սմ

Քարտեզների ձևավորումը, հատկապես մայրցամաքները, շատ նման է Տատեանի 1849 թ. ատլասի քարտեզներին, որոնց փորագրողները նույն մասնագետներն են եղել:


Վերոնշյալ ցուցակի վերջին քարտեզը նույնն է, ինչ քարտեզ 4.14-ում վերատպվածը: Սա Մխիթարեանների՝ 1751 թ. Հայաստանի առաջին՝ 3.4 քարտեզի արդիականացված տարբերակն է, որտեղ Անատոլիայից արևելք և Կովկասից հարավ ընկած տարածաշրջանը ներկայացված է բավականին մանրակրկիտ: Առաջինի տիտղոսն է Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց, իսկ 1853-ի գրքինը կոչվում է Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց: Նոր քարտեզում կարևոր տեղանունները նշված են թավ տառերով, իսկ հայկական աշխարհներին տրված են հայկական այբբենական թվանշաններ: Քարտեզի ներքևի մասում տեղադրված աղյուսակում ցուցակագրված են հայոց աշխարհների անունները:

Քարտեզ 4.9-ի աշխարհացույցը ցուցադրված է մերկատորյան պրոյեկցիայով: Մեր այս հետազոտության մեջ առկա են մի քանի մերկատորյան աշխարհացույց քարտեզներ, որոնցից ամենահինը 1784 թ. քարտեզ 3.8-ն է, իսկ ամենավերջինը՝ քարտեզ 5.23-ը: Այս երկուսը համեմատելով՝ կարելի է տեսնել, թե ինչպես են համաշխարհային քարտեզագրական ու աշխարհագրական զարգացումները տեղ գտել նաև հայ քարտեզագրության մեջ: Հին տարբերակում Ամերիկայի հյուսիսային շրջանը և Ավստրալիան ներկայացված են ոչ ամբողջական, սակայն վերջինում սրանք արդեն լրացված են: 1695 և 1784 թվականների քարտեզներում Ավստրալիան անվանված է Նոր Հոլանդիա, իսկ 1853-ից հետո անվանումը փոխված է Ավստրալիայի (տե՛ս քարտեզներ 5.1 և 5.22):

4.9. Աշխարհագունտ մակարդակ. Վենետիկ, 1853 թ.







4.10. Մասն Ասիոյ ըստ գրոց սրբոց. Վենետիկ, 1853 թ.

Այս քարտեզը նույնպես վերցված է Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն, նկարագոյց պատկերօք» գրքից, «Մասն Ասիոյ ըստ գրոց սրբոց ըստ նախնի աշխարհագրաց» անվանված քարտեզն է, որը մանրամասն տեղեկություններ է տալիս Միջին Արևելքի շրջանից:


1850–ական թվականներին Վիեննայի Մխիթարեան ուխտը հրատարակել է մի քանի հայերեն քարտեզ, որոնք են.

Հեղուետիա	1847 թ.	Սեաստուպոլ	1856 թ.
Լոմպարտիա եւ Վենետիկ	1848 թ.	Երոպայի երկաթուղիներ	1864 թ.
Պաղեստին	1851 թ.	Պաղեստին, փոքրադիր	1883 թ.

Պետք է նաև նշել, որ այս քարտեզները հազվագյուտ են, և ցայսօր հեղինակին չի հաջողվել գտնել և քննարկել դրանց օրինակներից որևէ մեկը: Վերը նշված վերնագրերը և թվականները ցուցակագրված են ըստ Մխիթարեանների գրավաճառանոցների ընդհանուր ցանկի³⁰:

Տասնիններորդ դարի կեսին Վիեննայի Մխիթարեան ուխտում նոր զարգացումների ակիք բարձրացավ, որի արդյունքը եղավ հայկական առաջին գլոբուսների ծրագրելն ու պատրաստելը:

Պատկեր 4.11–ում բերված առաջին գլոբուսը համեմատաբար փոքր չափի է՝ 21 սմ տրամագծով, և ունի իր փայտե պատվանդանը: Գլոբուսը ցուցադրում է աշխարհի բոլոր մայրցամաքներն ու երկրները և դրանց աշխարհագրական դրվածքը ու լի է տեղանուններով՝ ունենալով պարզ կառուցվածք և կապույտով ու նարնջագույնով գծված սահմաններ: Ավստրալիայի վերը տեղադրված ցուցատախտակը պարունակում է հետևյալ գրությունը.



Երկրագունտ

Ըստ նոր

Աշխարհագրական

Ձևությամբ

Գծագրեալ

Ի Հ. Ա. Պ.

Մխիթարեան] միաբ[անություն]

Ի Վեննա

Ի վանս Պ Ս Ա ծածի

[Յուցատախտակի ներքևում]

18 – Joseph Czerny – 38

4.11. Փոքր Երկրագունտ. Վիեննա, 1838 թ.

Վիեննայում պատրաստված հաջորդ գլոբուսն ավելի մեծ էր՝ ունենալով 63 սմ տրամագիծ և փայտից ու մետաղից պատրաստված պատվանդան: Երկու երկրագնդերի կառուցվածքն ու գունավորումը շատ նման են, բուն տարբերությունը մեծի վրայի ծովի ափերի կապույտ գունավորման շեշտված լինելն է: Երկրագնդերի տեղանունների համար պատրաստվել և գործածվել են հատուկ տառատեսակներ: Հաջորդ տարիների ընթացքում պատրաստվել են երկրագնդի մի քանի տարբերակներ, և առանձին տպագրվել են դրա մակերեսի հատվածային շերտերը (*gores of the globe*) (տե՛ս պատկեր 4.12):



4.12. Մեծ երկրագունդը՝ իր պատվանդանով. Վիեննա, 18?? թ.

Վիեննայի Մխիթարեան միաբանութեան թանգարանում պահպանված երկու երկրագնդերն ունեն 1848 և 1850 տարեթիվ, բայց Երևանում պահպանված օրինակի տարեթիվն անհայտ է, քանի որ նշված է միայն 18.. : Ըստ երևույթին, երկրագնդերը պատրաստվել են 1848–ից մինչև 1858 թվականները, որոնց ցուցատախտակը կրում է դրանց պատրաստողի և պատվիրատուի անունները, սակայն տպագրությունը մեկ անգամ անելու նպատակով զարդատախտակի վրա տարեթվի վերջին երկու թվերի տեղը դատարկ է թողնված, որպեսզի վերջնական ժամկետը պատրաստվելուց հետո լրացվի: Ցուցատախտակին հետևյալ տեքստն է.

Նոր
Երկրագունդ
 Աշխատասիրութեամբ
 Հ. Աղեքս. Վ. Պալճեան
 ծրագրեալ
 Ըստ նոր զննութեան
 Ի Հ. Արսենի Այտընեան
 Ի Մխիթ. Ու խտէն
 Ի Խնդրոյ եւ Ծախիւք
 Մեծաշուք Իշխանի
 Յովհաննու Ամիրայի Տատեանի
 Ի Վիեննա
 Ի Վանս Պաշտպան Ս. Աստուածածնի
 18..



4.13. Մեծ երկրագնդի զարդատախտակը

Ինչպես տեսնում ենք, Վիեննայում պատրաստված երկու երկրագնդերն էլ Հայր Աղեքսանդր Պալճեանի աշխատասիրութեան արդյունքն են, որը նշված է մեծ տարբերակի վրա, մինչդեռ փոքր երկրագնդի վրա տեղի սղովիցան պատճառով միայն նրա անվան առաջին տառերն են նշված: Պատկեր 4.13–ում կարելի է տեսնել մեծ երկրագնդի ցուցատախտակը:

* * *

Հատուկ աշխարհագրության դասընթացների համար պատրաստված առաջին դասագրքերից է 1857 թ. Վենետիկում հրատարակված Հայր Մանուել Քաջունու դասագիրքը: Այն պարունակում է քարտեզ, որը 1853 թ. Ալիշանի Քաղաքական աշխարհագրություն գրքի վերջին՝ Հայաստանի քարտեզն է, որի ամբողջական տիտղոսն է՝ Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց: Փարիզում փորագրված նույն այս քարտեզն էլ զետեղված է Ալիշանի վերոնշյալ գրքի երկհատորանոց տարբերակի երկրորդ հատորի երրորդ մասում: Քարտեզի չափերն են 32x24 սմ:

Քարտեզը ցուցադրում է Փոքր Ասիայի և դրանից արևելք գտնվող Հայկական բարձավանդակի տարածքը մինչև Կովկաս և Միջին Արևելք ու Իրան: Այստեղ նշված ու ցուցակագրված են Հայաստանի 15 աշխարհները և այլ մանրամասներ: Հավանաբար այս քարտեզը 5.17 քարտեզը գծագրողի համար ծառայել է որպես հիմք (տե՛ս քարտեզ 4.14):



4.14. Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց քարտեզը Քաջունու դասագրքից. Վենետիկ, 1857 թ.

Վիեննայի Մխիթարեան միաբանությունից հաջորդ կարևոր աշխատանքը 1857 թ. հրատարակած դպրոցական ատլասն է, որը կոչվում է ԱՏԼԱՍ կամ Աշխարհացոյց Տախտակքի Պետս Ազգային Դպրոցաց՝ պատրաստված ու կազմված Մխիթարեան ուխտի Հայր Աստուածատուր Աազեանի ձեռքով, որը վերահրատարակվեց 1860 թվականին: Գրքի չափերն են՝ 22x29 սմ, իսկ քարտեզներինը՝ 33x25 սմ:

Ատլասն ունի 21 երկէջ քարտեզ, որոնց տիտղոսներն են.

- | | | |
|-----------------------|----------------------|----------------------------|
| • Երոպա | • Գաղղիա | • Ռուսիա |
| • Ասիա | • Անգղիա | • Յունաստան |
| • Ափրիկէ | • Իտալիա | • Օսմանեան պետութիւն Երոպա |
| • Հիւսիսային Ամերիկա | • Գերմանիա | • Օսմանեան պետութիւն Ասիա |
| • Հարաւային Ամերիկա | • Աւստրիա | • Հայաստան |
| • Աւստրալիա | • Բրուսիա | • Պարսկաստան |
| • Փորթուկալ եւ Սպանիա | • Բեղգիա եւ Հոլլանտա | • Հնդկաստան |

Ատլասը պատրաստված է Օսմանեան կայսրութեան մեջ գործող հայկական դպրոցների համար, այդ իսկ պատճառով էլ նրա մեջ տեղ են գտել Օսմանյան կայսրութեան երկու քարտեզ: Ատլասի քարտեզները նաև տպագրվել ու վաճառվել են որպես առանձին քարտեզներ (տե՛ս քարտեզ 4.15):



4.15. Հայաստան քարտեզը Աազեանի ատլասի Բ հրատարակությունից. Վիեննա, 1860 թ.

1862 թ. Վենետիկի Միաբանութիւնը հրատարակեց նաև Առլաւ Փոքրադիր, որն ուներ 12 տախտակ քարտեզ: Արա քարտեզները հետևյալն են³¹.

- Համառարած աշխարհացոյց
- Աշխարհագրւոնտ մակարդակ
- Աշխարհ ծանօթ առ նախնեօք
- Երրոպա
- Ասիա
- Ափրիկէ
- Հիսիսային Ամերիկա
- Հարաւային Ամերիկա
- Օվկիանիա
- Գաղղիա բաժանեալ ի նահանգս
- Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց
- Ասիա. մասն ըստ գրոց արքոց և նախնի աշխարհագրաց

Այս ատլասից ոչ մի օրինակ հանրութեանն ու մասնագետներին հասանելի չէ, և այն գտնելու համար ամեն ճիգ ու ջանք թափվեց, սակայն ապարդյուն: Ենելով այն տեղեկությունից, որ այս ատլասի քարտեզները ևս փորագրված էին Փարիզում և հատկապես այն, որ դրա 12 քարտեզները, բացառութեամբ Երկիր Անտեսաք–ի, նույն 13 տախտակներից են, որոնք տեղ էին գտել Ալիշանի՝ 1853 թվականին հրատարակված Քաղաքական աշխարհագրություն հատորների մեջ, նաև այն, որ սրանք նույնպես Փարիզում փորագրված քարտեզներ են, կարելի է եզրակացնել, որ այս ատլասն այլ բան չէր, ինչ Ալիշանի գրքի քարտեզներից տասներկուսի՝ մեկ հատորի մեջ տեղադրումն առանց պատկան տեքստերի:

1848 թվականին Վենետիկի Միսիթարեան միաբանութեան Հայր Ներսէս Սարգսեանը, գերմանացի հանրահայտ քարտեզագետ Հայնրիխ Կիպերտի (1818–1899) քարտեզների վրա հիմնվելով, պատրաստել էր Վանա լճի շրջակայքի քարտեզը: Քարտեզը Բեռլինում փորագրել էր Կ. Օմանը, այն ունի 35x19 սմ չափեր և 1:500 000 աստիճանաչափ: Երբ 1864 թվականին Վենետիկում հրատարակվեց Տեղագրութիւն Ի Փոքր և Ի Մեծ Հայս հատորը, Վանի քարտեզը գունավոր տպագրով թեյամբ տեղ գտավ դրանում (տես քարտեզ 4.16):




4.16. Ոլորտք ծովուն Վանայ. Բեռլին, 1864 թ.

Գրքում նաև տեղադրված են մի քանի փոքր տեղանքի քարտեզ և պլան: Դրանցից են.

- Վիճակ Սեբաստիոյ
- Մասն գաւառի Բարերդոյ
- Կարնոյ գալաւոբ, 1846
- Տեղագրութիւն Թորթոմայ
- Տեղագիծ Շիրակայ և Զարիշատայ
- Սեպագիր արձանագրությունների գծագրեր, եկեղեցիների պատկերներ, հատակագծեր և այլն

1876 թ. Պոյաճեան տպարանը Կոստանդնուպոլսում հրատարակեց մի յուրահատուկ աշխարհագրովմյան դասագիրք, որը պարունակում է համեմատաբար մանրակրկիտ քարտեզներ և ապա նույն քարտեզների վերաբերյալ հարցեր, որոնք աշակերտը պետք է սովորեր և քարտեզին նայելով՝ հարցերին պատասխաներ: Այս նոր ուսումնական մեթոդը ԱՄՆ-ում սկսեց կիրառվել տասնիններորդ դարի երկրորդ կեսից, որն ընդօրինակել է Պոյաճեան հրատարակչովմյունը:

Գիրքը կոչվում է Հանսոտ դասագիրք աշխարհագրութեան հարցմանց և պատասխանով ի պէտս դպրոցաց: Ըստ նախաբանի՝ գրքի համար որպես օրինակ է ծառայել Նյու Յորքում 1865 թ. Բարնզ և Բաթթի հրատարակած Ջեյմզ Մոնթիթի, ինչպես նաև Բոստոնում 1873 թ. Ջինն եղբայրների հրատարակած Մերի Հալլի դասագրքերը:



4.17. Միացեալ Նահանգք Ամերիկայի. Կոստանդնուպոլիս, 1881 թ.

Դասագրքում տեղադրված են հետևյալ 13 քարտեզները.

- Արեւելեան կիսագունտ
- Արեւնտեան կիսագունտ
- Ասիա
- Եւրոպա
- Բրիտանական կղզիք
- Արեւնտեան Եւրոպա
- Ափրիկէ
- Միացեալ Նահանգք Ամերիկայի
- Հիսիսային Ամերիկա
- Հարաւային Ամերիկա
- Ասիոյ Թուրքիա
- Եւրոպայի Տաճկաստան եւ Յունաստան
- Օվկիանիա

Գիրքը վերահրատարակվել է 1881 թ., որից վերցված են ներկա աշխատությանս մեջ վերատպված երկու քարտեզները: Գրքի չափերն են՝ 180 մմ x 275 մմ (տես քարտեզներ 4.17 և 4.18):

Դասագիրքը, հրատարակված լինելով Օսմանյան կայսրությունում, որն իր տարածքում Մեծ Հայքի երբեմնի գոյությունը չէր ընդունում, Հայաստանին նվիրված քարտեզ չունի, քանի որ նման քարտեզի առկայությունը կայսրության գրաքննիչների համար անպայման կլիներ անընդունելի: Բայց և այնպես Հայաստան անունը տեսանելի է Ասիական Թուրքիայի քարտեզում, որը վերատպված է սույն աշխատության վեցերորդ գլխի քարտեզ 6.21-ում:



4.18. Բրիտանական կղզիք. Կոստանդնուպոլիս, 1881 թ.

1887 թ. Կոստանդնուպոլսոմ Յ. Գ Փալազաշեանը հրատարակեց մի գրքույկ, որը կոչվում էր Տեղագրութիւն Կոստանդնուպոլսոյ եւ իւր շրջագայք, յատակագիծ պատկերով Վոսիորի: Սա 64-էջանոց մի գրքույկ է՝ 110x160 մմ չափերով, որի 6-րդ էջում առկա է Վոսիորի 48x72 մմ չափերի մի գծագիր: Գրքում այս գծագիրը հատակագիծ է անվանված, սակայն մեր գննովիշունը ցույց տվեց, որ այն մի էսքիզ է և քարտեզ չի կարող համարվել: Հետևաբար այստեղ քննարկված չէ:

Քարտեզ նախկին Հայաստանի կոչված՝ 45x32 սմ չափեր ունեցող քարտեզը պատրաստել է Աւետիք Տէր Յակոբեանցը՝ հիմքում ունենալով 1751 թ. քարտեզ 3.4-ում պատկերված Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց քարտեզը: Այս տարբերակը հրատարակվել է Թիֆլիսում 1882 թվականին:

Այս քարտեզը վերոնշյալ քարտեզի նախնական տեսակն է, առանց ճոխովիշան կամ մանրամասն տեղեկությունների: Քարտեզ 4.19-ի վերատպովիշան մեջ Հայաստանի աշխարհների սահմանները նշված են կարմիրով:



4.19. Քարտեզ նախկին Հայաստանի. Թիֆլիս, 1882 թ.

Նախքան տասնիններորդ դարի վերջը Վենետիկի Մխիթարեանները հրատարակեցին ևս մի քանի մեկ էջանոց քարտեզ, որոնք պատրաստված էին տեղագրվելու արբահայր Ղևոնդ Ալիշանի՝ Հայաստանի գավառներին հատկացված հրատարակվելիք չորս մեծադիր հատորներում: Սրանք պարունակում են մեծագույն գիտաշխատող Ալիշանի գրչին պատկանող մանրակրկիտ աշխարհագրական և տեղագրական նյութեր, պատկերներ, գծագրեր և պլաններ տվյալ գավառների վերաբերյալ: Յուրաքանչյուր հատորն ունի իր հատուկ քարտեզը, որը պատրաստված է Սբ Ղազարում՝ Միաբանովիեան մեջ, բայց բարձրագույն որակն ապահովելու նպատակով տպագրությունը հանձնարարվել է իտալական քարտեզներ հրատարակող տարբեր ընկերությունների, որոնցից է նաև Հռոմի Իտալիայի աշխարհագրական ինստիտուտի տպարգրատունը:

Այս չորս հատորները Ալիշանի աշխարհագրական ու պատմական աշխատությունների շարքի մասն են կազմում, որոնք նպաստել են մեր մշակութային ժառանգության պահպանմանը: Մատենաշարը բաղկացած է հետևյալ գրքերից.

- Շիրակ, 66x49 սմ, 1:200 000, Յ. Տամատեան, Կիրճմայեր և Սկոցցի տպագրատուն, 1881 (քարտեզ 4.20):
- Սիսուան, Կիլիկիա հին և նոր, Հայկական գաւառք ԺԲ-ԺԴ դարուց, 67x35 սմ, 1:1 000 000, Հռոմի Իտալական աշխարհագրական ինստիտուտի տպագրատուն, 1885 (քարտեզ 4.21):



4.20. Շիրակ. Վենետիկ, 1881 թ.

- Այրարատ, Աշխարհի հայոց մեծաց, 67x43 սմ, 1:500 000, Հռոմի իտալական աշխարհագրական ինստիտուտի տպագրատուն, 1890 (քարտեզ 4.22):
- Սիսական, 38x43 սմ, 1:500 000, Վենետիկի Ֆեռոարի տպագրատուն, 1893 (քարտեզ 4.23):



4.21. Միտումն Կիլիկիա հին և նոր, Հայկական գաւառք, ԺԲ-ԺԴ դդ. Վենետիկ, 1885 թ.



4.22. Այրարատ, Աշխարհի հայոց մեծագ. Վենետիկ, 1890 թ.

Այս մատենաշարի վերջին քարտեզը քարտեզ 4.23-ի Միսականը կամ Սյունիքն է: Սա ցուցադրում է Արևելյան Հայաստանի այն մասը, որն արևմուտքում ունի Այրարատը, արևելքում՝ Արցախի մի մասը, հյուսիսում՝ Ուտիքը, իսկ հարավում՝ Վասպուրականն ու Ատրպատականը: Սյունիքի ներքին գավառների բաժանումները նշված են կարմիրով:



4.23. Միսական. Վենետիկ, 1893 թ.



4.24. Աղուանից երկիր. Թիֆլիս, 1893 թ.

Աղուանից երկիր կոչված քարտեզ 4.24-ը վերցված է Աղուանից երկիր եւ դրացիք հատորից՝ հրատարակված Թիֆլիսում 1893 թվականին: Քարտեզը ծաղված ներդիր է հատորի վերջում, սակայն Երևանի գրադարաններում պահվող ավելի քան 15 հատորների միջից քարտեզը բացակայում է, և որոշ հատորներում առկա են դրա՝ փակցված լինելու հետքերը:

Սա Կասպից ծովից մինչև Սևանի արևելքն ընկած տարածքների մանրամասն քարտեզն է՝ սպազորված Բեռլինում, սակայն նշված չեն հեղինակի անունն ու տարեթիվը: Քարտեզի չափերն են՝ 58x42 սմ: Քարտեզում տեղադրված քաղաքների անունների վրա ցուցադրված են նաև կարևոր վանքերն ու մի քանի մզկիթ:

Վանից հարավ-արևմուտք ընկած Սասունի շրջանում հայ գյուղացիները ծանր հարկեր էին վճարում ցեղապետերին և հաճախ նաև թալանվում դրանց հրոսակների կողմից: Երբ օսմանյան պետությունը նույնպես սկսեց հարկեր պահանջել, գյուղացիները, ճար չունենալով, մերժեցին կրկնակի ու եռակի հարկ վճարել: Իշխանություններն ի պատասխան այնտեղ ուղարկեցին բանակ և հայկական գյուղերում հերթականությամբ կազմակերպեցին կոտորած ու ավերածություններ: Պոլսահայությունը, այս դեպքերին տեղեկանալով, սկսեց բողոքել, սակայն կենտրոնական իշխանությունները հայերին էլ ավելի խիստ պատժելու նպատակով կոտորածներ սկսեցին այլ շրջաններում ևս: Այնպես որ, 1894–1896 թթ. Օսմանյան կայսրության շուրջ 300 000 հայ քաղաքացիներ կոտորվեցին: Այս դեպքերի առնչությամբ բողոքեցին եվրոպական ու ամերիկյան պետությունները, իսկ այլ երկրներում ապրող հայ համայնքները սկսեցին ավելի հետաքրքրվել Պատմական Հայաստանի այս շրջաններով: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունից դուրս հայկական համայնքներում պատրաստվեցին Սասունի և Զեյթունի շրջանների քարտեզներ, ու հրատարակվեցին գրքեր:

Քարտեզ 4.25-ը առաջին հայերեն քարտեզն է, որը ցույց է տալիս աշխարհագրական մի փոքր շրջան՝ Սասունը: Քարտեզը պատրաստել էր Քալանթարը 1895 թ., իսկ փորագրիչն էր Կ. Լ. Մեսխիեր, չափերը՝ 27x29 սմ, աստիճանաչափը՝ 1:300 000: Աճող պահանջարկի պատճառով քարտեզը վերահրատարակվեց 1904 թ.:

Քարտեզը նաև տեղադրվեց այդ շրջանի տեղագրությանը վերաբերող մի գրքուկի մեջ, ինչպես նաև հրատարակվեց Թիֆլիսի «Մշակ» պարբերաթերթում:



4.25. Սասուն. Թիֆլիս, 1895 թ.

19-րդ դարավերջին պատրաստված մեկ այլ քարտեզ էլ Գանձակ գավառի մանրակրկիտ քարտեզն է (տե՛ս քարտեզ 4.26), որը ժամանակին հիմնականում բնակեցված էր հայերով, որոնք ունեին դպրոցներ, վանքեր, դպրատներ: Այդտեղ պատրաստված ձեռագրերը կարելի է գտնել Մատենադարանում, ինչպես նաև աշխարհի տարբեր գրադարաններում³²:

Պարսկական գերիշխանության ընթացքում քաղաքն անվանվում էր Գյանջա, իսկ ցարական Ռուսաստանի տարածքը մտնելով՝ քաղաքն անվանափոխվեց Ելիզավետպոլի: Խորհրդային ժամանակաշրջանում նույն քաղաքը կոչվեց Կիրովաբադ, մինչդեռ հայերենում գործածվում է դրա հնամենի՝ Գանձակ անվանումը: 60x45 սմ չափեր ունեցող քարտեզը գծել է Վարդան Միրզոյեանցը: Այն Թիֆլիսում հրատարակվել է 1899 թվականին:



4.26. Գանձակի գաւառը. Թիֆլիս, 1899 թ.

Բուլանդիս կամ Հարք կոչված քարտեզ 4.27-ը ներկայացնում է Վանա լճի հյուսիսարևմտյան շրջանը, որի կարևոր վայրերից է Մանազկերտի դաշտը, որտեղ 1071 թ. տեղի ունեցավ Բյուզանդիոնի և սելջուկ թուրքերի որոշիչ ճակատամարտը: Մյուսը եռագագաթ Միփան սարն է, որի բարձրագույն գագաթը հասնում է մինչև 4434 մետրի:

Քարտեզն ունի 19x11,5 սմ չափեր, այն գծել է Վարդան Միրզոյեանցը 1:500 000 աստիճանաչափով, տեղագրված է 1899 թ. Թիֆլիսում հրատարակված Ազգագրական հանդեսի հինգերորդ հատորում:



4.27. Բուլանդիս կամ Հարք. Թիֆլիս, 1899 թ.

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ 19-րդ դարի վերջի հայերեն քարտեզներից 4.28 քարտեզն է, որ պատկանում է Հյուսիսային Կիլիկիայի Ջեյթունի գավառին: 1:1 000 000 աստիճանաչափով գծված տեղագրական ու աշխարհագրական այս քարտեզն ունի 15x22 սմ չափեր և տպագրվել է Վիեննայի Մխիթարեանների մոտ 1900 թվականին և անվանված է Արեւելեան Կիլիկիա:

Քարտեզը տպագրված է գունավոր և տեղադրված է Ջեյթունի անցեալէն եւ ներկայէն խորագրով գրքի մեջ՝ հրատարակված Վիեննայում 1900 թ., որտեղ կարելի է գտնել նաև քաղաքի հատակագիծը պարունակող մեկ այլ քարտեզ՝ Քարտեզ Ջեյթունի կամ Ուլնիոյ:



4.28. Արեւելեան Կիլիկիա. Թիֆլիս, 1900 թ.

Գլուխ 5. 1901 թ–ից մինչև 1918 թ.

Հայերեն առաջին Գրպանի ատլասը հրատարակվել է Վենետիկում 1901 թ.՝ հայր Սուքիաս Էփրիկեանի հեղինակով՝ Մտլասի չափերն են 12x18,5 սմ, ունի 108 էջ տեքստ և 18 գունավոր քարտեզ, ինչպես նաև երկրների գունավոր դրոշների և այլ պատկերների հավելյալ էջեր: Քարտեզներից չորսը, որոնք նշված են աստղանիշով (*), մեկ էջի վրա են տպագրված, իսկ մյուսները կրկնակի բացված էջերի վրա են տպված: Առաջին՝ 5.1 քարտեզն ունի 1:200 000 000 աստիճանաչափ: Սա երկրագնդի ամբողջ տարածքն է՝ գծված մերկատորյան պրոյեկցիայով (մակարդակ), որի վրա ավելացված են աշխարհի նավահանգիստներն ու հաղորդակցող ծովային ուղիները: Ատլասը վերահրատարակվել է նույն տարվա ընթացքում:

Ատլասի քարտեզները, որոնցից 14–ը 20x16սմ են, իսկ 4–ը՝ նշված (*)՝ 9x16սմ, ունեն հետևյալ վերնագրերը.

- | | | |
|--------------------------------|-----------------------|-------------------------|
| • Աշխարհագունտ մակարդակ | • Գաղղիա, Զուիցերիա | • Աֆրիկե |
| • Եվրոպա | • Գերմանիա | • Ասիա |
| • Բրիտանական կղզիք | • Աւստրիա — Հունգարիա | • Փոքր Ասիա — Կովկաս * |
| • Ռուսիա | • Սպանիա — Փորթուկալ | • Ամերիկա — Հարաւային * |
| • Շուէտ, Նորվեկիա, Տանիմարքա * | • Իտալիա | • Ամերիկա — Հիւսիսային |
| • Պելճիքս, Հոլանտա * | • Պաքսանեան թերակղզի | • Ովկիանիա |



5.1. Մերկատորյան Աշխարհագունտ մակարդակը «Գրպանի ատլաս»–ից. Վենետիկ, Սք Ղազար, 1901 թ.

Հաջորդ քարտեզը Բորչալու գավառ է անվանված, որն Հայաստանի հյուսիսարևելյան՝ Վրաստանին հարևան գավառն է: Սա տեղագրական և մանրամասն մի քարտեզ է, որտեղ կարելի է տեսնել քաղաքներ և գյուղեր իրենց հին՝ պարսկական անվանումներով: Օրինակ՝ Ջալալօղլի (Ստեփանավան), Կարաքիլիսա (Վանաձոր), Ուզունլար (Օձուն) և Վորոնցովկա (Տաշիր): Քարտեզը պատրաստել է Վարդան Միրզոյեանցը և հրատարակել Թիֆլիսում 1902 թվականին 1:500 000 աստիճանաչափով, իսկ դրա չափերն են 60x57 սմ (տե՛ս քարտեզ 5.2):



5.2. Բորչալուի գավառ. Թիֆլիս, 1902 թ.

Նույն թվականին Կոստանդնուպոլսում Յ. Յ. Մանիսաճեանը հրատարակեց Ընդարձակ պատկերազարդ աշխարհագրություն հատորը, որը պարունակում էր 59 քարտեզ և 12 ճշգրիտ քարտեզ՝ տպագրված Յ. Մատթէոսեան տպարանում:

Քարտեզ 5.3-ը այս քարտեզներից Հյուսիսային Ամերիկայի քարտեզն է, որը քարտեզների որակյալ լինելու վկան է: Գրքի չափերն են 18x24 սմ, իսկ ներսում տեղադրված քարտեզներինը՝ 16x21 սմ: Այդ քարտեզներն են.

- Արևելեան կիսագունտ
- Արևմտեան կիսագունտ
- Երոպա
- Բալկանեան թերակղզի
- Արևմտեան Երոպա
- Բրիտանական կղզիք
- Ասիա
- Աֆրիկե
- Ովկիանիա
- Հյուսիսային Ամերիկա
- Հարաւային Ամերիկա
- Ասիոյ Թուրքիա
- Երոպայի Տաճկաստան



5.3. Հյուսիսային Ամերիկա, «Ընդարձակ պատկերազարդ աշխարհագրություն» գրքից. Կոստանդնուպոլիս, 1902 թ.



5.4. Սինտետիկ քարտեզ Հիմնարկութեանց Հայոց բարեգործ. ընկ. Թիֆլիս, 1903 թ.

5.4 քարտեզն անսովոր է նրանով, որ ներառում է Հայաստանից հյուսիս ընկած՝ Սև ծովից մինչև Կասպից ծով երկրամասերը՝ հասնելով մինչև Կովկասյան լեռնաշղթա, Մոզդոկ և Վլադիկավկազ քաղաքներ: Այս շրջանում էին ապաստանել 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից ճողոպրած փախստականները: Քարտեզը ցույց է տալիս 1881–ին ստեղծված Հայոց բարեգործական ընկերության այս շրջանի կարևոր քաղաքներում հիմնադրած դպրոցները, մանկատները, սնուցման վայրերը, պահեստները և գրասենյակները: Սրանք բոլորը ստեղծված էին՝ նպատակ ունենալով օժանդակել այս շրջաններում ապաստան գտած փախստականներին ու որբերին:

Քարտեզում առկա են հավելյալ տեղեկություններ և վիճակագրություն այս շրջանում ապաստան գտած փախստականների, դպրոցականների ու որբերի քանակի վերաբերյալ: Այս մեծ քարտեզը (97x73 սմ) տպագրվել է Թիֆլիսում 1903 թվականին:

Ժնևի Հայ ուսանողների միությունը մշակութային աշխույժ մի կազմակերպություն էր, որ 1904 թվականին ձեռնարկեց հրատարակելու Հայաստան և հարևան երկիրները կոչված քարտեզը, որն ուներ 1:3 500 000 աստիճանաչափ, և չափերն էին 64x51 սմ: Քարտեզը պատրաստել էր Յ. Պ. Մանիսաճեանը Բագելոմ: Քարտեզն ունի բարձր որակ և պատրաստված է մեծ խնամքով (տե՛ս քարտեզ 5.5):

Քարտեզն ունի երկու ներդիր, որոնք հայ ժողովրդի համար ունեն քաղաքական կարևորություն: Սրանցից մեկը 11-14-րդ դդ. 300 տարվա կյանք ունեցող Կիլիկիայի հայոց թագավորության քարտեզն է, իսկ մյուսը՝ Մեծ Հայքի Սասուն գավառի քարտեզը, գավառ, որտեղ տեղի էին ունեցել հայերի առաջին զանգվածային կոտորածները, և որի մասին խոսվեց քարտեզ 24-ի բացատրություններում:




5.5. Հայաստան և հարևան երկիրները. Ժնև, 1904 թ.

Նույն տարին Ժնևի Հայ յեղափոխական դաշնակցութեան գրասենյակը հրատարակեց Մեծ Հայքի Մուշ-Սասուն գավառի քարտեզը: Քարտեզը տպագրելու դրդապատճառը հավանաբար Օսմանյան կայսրութեան տարածքի հայկական համայնքին մի քանի տարի առաջ տեղի ունեցած կոտորածները վերհիշեցնելն էր: Այս պարզ քարտեզը, որի չափերը 43x31 սմ են, նշում է գավառի գյուղերի ու քաղաքների անունները, որոնցում տեղի ունեցան հայերի կոտորածները: Քարտեզի բնագիրը պահպանվում է ՀՅԴ-ի Երևանի գրասենյակի թանգարանում (տե՛ս քարտեզ 5.6):



5.6. Մուշ-Սասուն. Ժնև, 1904 թ.

1904 թվականին Կոստանդնուպոլսի «Պալենց» գրատունը հրատարակեց Դափթ Խաչկոնցի (1866–1918 թթ.) աշխարհագրության դասագրքերի շարքից մեկը, որն ուներ բազմաթիվ քարտեզներ: Դասագիրքը կոչվում է Նոր պատկերագրող աշխարհագրութիւն բազմաթիւ քարտեզներով, որն ունի 18x24 սմ չափսի 128 էջ: 1910 թվականին գիրքը վերահրատարակվեց միջին դասարանների համար և ուներ 136 էջ: 1912 թ. հրատարակվեց նրա դասագիրքը բարձր դասարանների համար, այս անգամ՝ 88 էջով, իսկ 1914 թ. վերահրատարակվեց 184 էջով: Սրանք բոլորը սովորական դասագրքեր չէին, այլ գրքեր էին, որոնք պարունակում էին ավելի քան 19 քարտեզ և գծագիր: Քարտեզների որակն այնպիսին էր, որ դրանք կարող էին համարվել լուրջ քարտեզագրական աշխատություններ, ինչը կարելի է տեսնել 5.7 քարտեզում: Այն ունի 1:1000000 աստիճանաչափ և 19x11 սմ չափեր և հրատարակվել է 1914 թ. (տե՛ս քարտեզ 5.7):



ՉԱԳԱՆԱԿ — Կ ԳՈՒԽ — ԳԱՃԱ ԷԼԻ

5.7. Չագալճա — Կ. Պոլիս — Գաճա էլի քարտեզը Խաչկոնցի «Աշխարհագրութիւն» դասագրքից.
Կոստանդնուպոլիս, 1904 թ.

Խաչկոնցի հրատարակած դասագրքերում աշակերտների համար ավելի գրավիչ լինելու նպատակով մայրցամաքների և Օսմանյան կայսրության քարտեզները տպագրված էին գունավոր: Խաչկոնցի այս նորաձև տպագրությունը կարելի է տեսնել 5.8 քարտեզների վերատպումներում: Սրանց էջաչափերն են 16x21 սմ:



a



c



d



b



e

5.8. Մայրցամաքների քարտեզները իսաչկոնցի դասազբերից. Կոստանդնուպոլիս, 1904, 1910, 1912, 1914 թթ.

Այստեղ պատկերված հինգ քարտեզները մայրցամաքների և Օսմանյան կայսրության գունավոր քարտեզներն են՝ Ասիա, Ամերիկաներ, Եվրոպա, Աֆրիկա և Օսմանյան կայսրություն:

5.9-ի քարտեզը Կահիրեում հայկական կազմակերպությունների հրատարակած սակավաթիվ քարտեզներից է, որը պարզապես կոչված է Հայաստան: Այստեղ ցույց են տրված Օսմանյան կայսրության գրաված՝ Մեծ Հայքի տարածքը, Փոքր Հայքը մինչև Սև ծով, Միջագետքն ու Պարսկաստանը: Բաժանումներն արված են ըստ օսմանյան վիլայեթների: Քարտեզը հավանաբար պատրաստվել է 1905–1906 թվականներին, և Կահիրեում հրատարակել է «Սֆինքս» կազմակերպությունը:

Քարտեզը գծագրված է 1:1250000 աստիճանաչափով, 72x51 սմ չափսի թղթի վրա, որտեղ նշված են Օսմանյան կայսրության տարածքում եղած Հայաստանի գյուղերն ու քաղաքները: Քարտեզում որպես ներդիր առկա է Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի (1820–1907) դիմանկարը, որը ներկայանում էր որպես մարդասեր ու հայրենանվեր, ժողովրդի կողմից սիրված ու հարգված մի ղեկավար:



5.9. Հայաստան. Գահիրե, 1905–1906 թթ.

Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը 1906 թ. տպագրեց մի մեծադիր քարտեզ՝ 120x100 սմ չափերով, որն անվանված է Արեւելք: Քարտեզը պատրաստված է օսմանյան պետութեան տարածքում վաճառքի համար, և «Արեւելք» անվանումը հավանաբար նշանակում է կայսրութեան գրաված արեւելյան տարածքները (տե՛ս քարտեզ 5.10):

Քարտեզում առկա են Օսմանյան կայսրութեան՝ Ռումինիայից մինչև Միջագետք ընկած տարածքները, ինչպէս նաև Իրանի արևմտյան մասը և Ռուսաստանի Կովկասյան լեռներին կից տարածաշրջանները, իսկ հարավում՝ մինչև Եգիպտոս ընկած տարածքները: Քարտեզը հավանաբար պատրաստված է Թուրքիայի հայ համայնքի պատվերով, քանի որ «Հայաստան» անվանման վերաբերյալ ունի իր պահպանողական և ամեն տեսակի հնարավոր առճակատումներից խոսափելու քաղաքական մոտեցումը:

Կոստանդնուպոլսի անունը գրված է ամենամեծ տառերով, սրան հետևում են երկրների և այլ կարևոր քաղաքների անունները: «Հայաստան» անվանումը քարտեզում առկա է Խարբերդից մինչև Արցախ տարածված շրջանի վրա, սակայն շատ ավելի փոքր ու աչքի չընկնող տառատեսակներով: Քարտեզը հպանցիկ դիտողը նույնիսկ չի անդրադառնա քարտեզի վրա այս անվան գոյությունը: «Ռուսաստան» անվանումը բացակայում է, իսկ փոքր ներդիրն անվանված է Շրջակայք Կոստանդնուպոլսի:




5.10. Արեւելք. Վենետիկ, Սր Ղազար, 1906 թ.

Ինչպես նշվեց, քարտեզում Հայաստան տեղանունը ցույց է տրված Մեծ Հայքի ամբողջական տարածքի վրա, այսինքն՝ Վանից արևմուտք՝ մինչև Արաքսի և Կուրի խառնարանը: Այս աշխարհամասում առկա են հայկական քաղաքների անվանումները, որոնց շարքում են Բիթլիսը, Վանը, Էրզրումը, Մանազկերտը, Սարտարապատը, Բայազետը, Էջմիածինը, Կարսը, Ալեքսանդրապոլ-Գյումրին, Նախիջևանը, Օրդուպատը և Երևանը:

Քարտեզը նաև ունի աղյուսակներ, որոնք պարունակում են տեղեկություններ Կովկասի և Օսմանյան կայսրության վիլայեթների ու նահանգների բնակչության, ինչպես նաև դրանց քաղաքների ու տեղում բնակվող հայերի քանակի մոտավոր տվյալների վերաբերյալ:

Նույն տարվա ընթացքում պատմաբան և արձակագիր Լէօն կազմեց Հին Հայաստանի քարտեզը, որը պատրաստել էր Ս. Երկաճեանը և հրատարակել էր Գ. Յ. Տէր Մարգարեանը Թիֆլիսում՝ տպագրված 50x40 սմ չափերով (տե՛ս քարտեզ 5.11):



5.11. Հին Հայաստան, Լեօ. Թիֆլիս, 1906 թ.



5.12. Երևանեան նահանգի Շարոր-Դարալագեազի եւ Նախիջեանի գաւառներ քարտեզը. Թիֆլիս, 1906 թ.

5.12 քարտեզը ներկայացնում է Երևանի Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառների մանրակրկիտ պատկերը: Քարտեզը պատրաստել է Երևանի Լալայեանը 62x66 սմ չափերով, որը պարունակում է մանրակրկիտ տեղագրական տեղեկություններ և հրատարակված է Հայոց ազգագրական-հրատարակչական ընկերության կողմից Թիֆլիսում 1906 թ.:

Հաջորդ` 5.13 քարտեզը Երևանեան նահանգի Նոր-Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք մանրակրկիտ քարտեզն է` կրկին պատրաստված Երևանի Լալայեանի ձեռքով, մեջտեղում ունենալով Սևանա լիճը և հրատարակված Թիֆլիսում 1908 թ.: Քարտեզի նկարիչն է Պ. Մարիմեանը, իսկ հրատարակիչն է Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունը և ունի 68x47 սմ չափեր:



5.13. Երևանեան նահանգի Նոր-Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք քարտեզը. Թիֆլիս, 1908 թ.

«Կոպտուրա» հրատարակչությունը Թիֆլիսում 1909 թ. հրատարակել է Կարապետ Միրիանեանի և Աշոտ Թումանյանի Քաղաքակրթության տարերքը եւ հայկական առասպելները կոչված գիրքը, որը պարունակում է 48 պատկեր, ինչպես նաև Հին Հայաստանը և հարևան երկրները կոչված փոքրադիր մի քարտեզ: Այս քարտեզը շատ պարզ է, բայց ցույց է տալիս Հայաստանի հնամենի մայրաքաղաքները, որոնցով սա տարբերվում է այլ քարտեզներից: Քարտեզի չափերն են 51 x 47 սմ (տե՛ս քարտեզ 5.14):




5.14. Հին Հայաստանը և հարևան երկրները. Թիֆլիս, 1909 թ.

Ըստ Հովհաննես Ս. Ստեփանյանի՝ 1912 թ. Բաքվում Հայ կոլտուրական միությունը հրատարակել է մի ազգագրական մեծադիր գունավոր քարտեզ, որն անվանված է Քարտեզ Անդրկովկասի: Ըստ նրա՝ քարտեզը նաև հրատարակվել է ոտաերենով: Երկար փնտրտուքներից հետո քարտեզի հայերեն օրինակը չգտնվեց, սակայն Գիտությունների ազգային ակադեմիայի պահուցում գտնվեց ոտաերեն Անդրկովկասի ազգագրական քարտեզը, որը հավանաբար Հ. Ստեփանյանի նշածն է³³:

Այս քարտեզը հրատարակել է Բաքվի Հայ կոլտուրական միությունը 1908 թ.՝ 1:850 000 աստիճանաչափով և 145x136 սմ չափերով: Քարտեզի անվանումն է՝ Կովկասյան երկրամասի քարտեզը: Հայերի բնակչության խտության չափանիշով: Անհավանական է, որ քարտեզը 4 տարի տարբերությունով երկու անգամ հրատարակված լիներ ոտաերենով, հետևաբար հավանական է, որ

Հ. Ստեփանյանի նշած հրատարակության տարեթիվը ճշգրիտ չլինի (տե՛ս քարտեզ 5.15):

Քանի որ հավանաբար քարտեզի հայերեն տարբերակը չի պահպանվել, աշխատասիրության մեջ մենք տեղադրել ենք դրա ոտաերեն տարբերակը, որը ներկայացնում է հայերի բնակչության խտությունը՝ ըստ գույների, իսկ գույների ցուցադրած տոկոսային տվյալները տրված են քարտեզում տեղադրված ցուցանակի մեջ³⁴ (տե՛ս պատկեր 5.15ա):




5.15ա. Հայերի վիճակագրությունը նշող գույների աղյուսակը



5.15. Հատված հայ բնակչության խտության քարտեզից. Բաքու, 1908 թ.

1910 թվականին Գ. Վարդանեանը Թիֆլիսում պատրաստեց Պատմական Հայաստան և հարեան երկիրները մեծադիր քարտեզը, որն ուներ 193x107 սմ չափեր: Քարտեզագիրը տեղաբնակ մասնագետ Գ. Դիանդինկն էր, որի անունն առկա է բազմաթիվ այլ քարտեզներում: Նրանք երկուսը միասնաբար հրատարակեցին 1:800 000 աստիճանաչափով այս մանրակրկիտ քարտեզը: Քարտեզի երկու ներդիրները ցուցադրում են հնում Փոքր Ասիայում և Իրանի տարածքում եղած երկրները (տես քարտեզ 5.16):

5.16. Պատմական Հայաստան և հարեան երկիրները. Թիֆլիս, 1910 թ.





5.17. Հին Հայաստան և շրջակայ երկիրները. Կոստանդնուպոլիս, 1910 թ.

Գեորգ Մետրոպի պատրաստած, Արամ Փիլիկեանի գծագրած և Ա. ձկնտէրէճեանի փորագրած Հին Հայաստան և շրջակայ երկիրները կոչված այս քարտեզը պատրաստվել է՝ հիմքում ունենալով Քաջունու՝ 1857 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված աշխարհագրովթյան դասագրքի 4.14 քարտեզը: Այս քարտեզը ևս հրատարակվել է 1910 թ. Կոստանդնուպոլսում՝ 31x25 սմ չափերով (տե՛ս քարտեզ 5.17):

Արդի այս քարտեզում միջնադարյան հայկական նահանգները ցուցադրված են բաժանարար կարմիր գծերով, որոնց սահմաններում նշված են նաև դրանց գավառների անվանումները: Իսկ հայոց նահանգների (աշխարհների) անունները ցուցակագրված են քարտեզի ներքևում տեղադրված աղյուսակում: Քարտեզը ցուցադրում է Կիպրոս կղզուց մինչև Կասպից ծովն ընկած տարածքները:

Պատմական տեղեկություն

1828 թվականին՝ 300 տարի պարսկական գերիշխանությունից հետո, Արևելյան Հայաստանի տարածքն անցավ ցարական Ռուսաստանի կազմի մեջ՝ որպես դրա անդրկովկասյան նահանգների մասը: Հավանաբար Հայաստանի առաջին քարտեզը Ռուսական կայսրությունում հրատարակվեց քսանհինգ տարի անց՝ 1853 թ., Թիֆլիսում՝ ռուսերենով: 1858 թ. դրան հետևեցին Հայաստանի տարածքին նվիրված ռուսերեն երկու այլ քարտեզներ՝ հրատարակված Սանկտ Պետերբուրգում: Քանի որ այդ քարտեզները ռուսերեն էին, ներկա գրքի բուն տեքստի մեջ դրանց չենք անդրադառնում, սակայն նկատի ունենալով դրանց կարևորությունը՝ կքննարկենք «Հետաքրքրաշարժ քարտեզների» շարքում՝ գրքի վերջին գլխում:

Ռուսաստանի տարածքում առաջին հայալեզու քարտեզները հրատարակվեցին 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին: Ապա սրանց ավելացան հիմնականում Թիֆլիսում պատրաստված ու հրատարակված քարտեզներ ու աշխարհագրության պատկերազարդ գրքեր:

Ինչպես նշվեց նախապես, ուշ միջնադարից սկսած մինչև 1918 թ. անդրկովկասյան անկախ հանրապետությունների հիմնադրումը Թիֆլիսը Արևելահայաստանի մշակութային կյանքի կենտրոնն էր, որտեղ ապրում և արարում էին հայ արվեստագետները, գրողներն ու մտավորականները: Վրաստանի պատմության վերջին 800 տարիների ընթացքում՝ մինչև 1917 թ., Թիֆլիսի 47 քաղաքագրուկներից 45-ը հայեր էին, որոնց գուծունեության արդյունք են քաղաքի կենտրոնում եվրոպական ճարտարապետության չափանիշներով կառուցված շինությունները, որոնք զարդարում են այսօրվա Թբիլիսին: Ներկայիս «Թբիլիսի» շքեղ հյուրանոցը կառուցել է Մ. Արակեանցը 1915 թ.³⁵, նույնիսկ Թիֆլիսի օպերային թատրոնի շենքը կառուցել է հայազգի մեծահարուստ առևտրական, որոնց անունները ներկայիս քաղաքային իշխանությունները աշխատում են մոռացության տալ:

1876 թ. Թիֆլիսի 104024 բնակչության 31,6 %-ը հայեր էին, 29,1 %-ը՝ ռուսներ, 21,3 %-ը՝ վրացիներ, իսկ մնացածը՝ թաթարներ և այլ ազգեր: Այնպես որ, զարմանալի չէ, որ արևելահայ քարտեզագրությունը նույնպես սկզբնական շրջանում հիմնադրվեց և ծաղկեց Թիֆլիսում³⁶:

Վենետիկի Մխիթարեան միաբանությունը 1910 թ. հրատարակեց մի փոքրիկ Առձեռն ատլաս՝ 11,5x18 սմ չափերով, որը պարունակում է պատկերներ և գունավոր քարտեզներ: Ատլասը կազմել է հայր Մեսրոպ Սահակեանը:

Սա 1901-ի ատլասի արդիականացված վերահրատարակությունն է, որն ունի 130 էջ տեքստ և 42 գունավոր քարտեզ ու տախտակ: Ատլասի քարտեզներն ամբողջովին նույնն են, ինչ 1901 թ. հրատարակությանը, որոնց միայն գույներն են որոշ չափով փոխված: Քարտեզ 5.18-ը, որպես օրինակ ատլասից, ներկայացնում է Փոքր Ասիա—Կովկաս անվանված քարտեզը, որտեղ ծովերը կանաչ են ներկված (տե՛ս քարտեզ 5.18):



5.18. Փոքր Ասիա—Կովկաս քարտեզը «Առձեռն ատլաս»-ից, Վենետիկ, 1901 թ.

Ռուբեն Խան-Ազատը (1862–1929 թթ.) և Գ. Վարդանեանը 1911 թ. Թիֆլիսում պատրաստեցին Հայաստանի պատմութիւն. չորրորդ դասարանի համար դասագիրք, որը հրատարակեց Ն. Աղանեանը: Գրքի մեջ տեղադրված է 45x34 սմ չափսի Հին Հայաստան և հարեւան երկիրներ անվանված մի գունավոր քարտեզ՝ գծված 1:4000 000 աստիճանաչափով:

Քարտեզը, որը գծել է Դիատերդիլը, ցուցադրում է Փոքր Ասիա թերակղզու արևելյան կեսը մինչև Կասպից ծով, որտեղ Մեծ Հայքի սահմաններն են, արևմուտքում՝ Եփրատը, իսկ արևելքում՝ Կուրի և Արաքսի խառնարանը: Մեծ Հայքի արևմուտքում Փոքր Հայքն է: Սրանց հարավում են Միջագետքը, Ասորեստանը, Մարաստանը (որն ապագայում դարձավ Իրանի Ատրպատական նահանգը) և Պարսկաստանը (տե՛ս քարտեզ 5.19):



5.19. Հին Հայաստան և հարեւան երկիրներ. Թիֆլիս, 1911 թ.

1913 թ. Կոստանդնուպոլսում և այլ քաղաքներում բազմաթիվ քարտեզներ հրատարակվեցին: Սրանցից մեկն էր Քսենոփոնի արշավանքի վերաբերյալ 5.20 քարտեզը: Քսենոփոնի արշավանքները Հայաստանի միջով հետազոտել ու դրանց մասին 1911 թվականին աշխատություն է գրել գերմանացի Է. ֆոն Հոֆմայսթերը, որը 1913 թ. հայերեն է թարգմանվել ու Կոստանդնուպոլսում հրատարակվել որպես Հ. Կոչկարեանի Կիլիկիայի մատենաշարի հատոր 17: Հատորը կոչվում է Հայաստանի մեջէն Քսենոփոնի արշավանքը մինչև Սև ծով:

Հատորն ունի երկու քարտեզ, որոնցից մեկը վերատպված է քարտեզ 5.20-ում: Քարտեզը գծագրված է 1:4000000 աստիճանաչափով 34x28 սմ չափի թղթի վրա և ցույց է տալիս հույների վերադարձի ուղին, որն անցնում է Հայաստանի տարածքով (տե՛ս քարտեզ 5.20):



5.20. Հայաստանի մեջէն Քսենոփոնի արշավանքը մինչև Սև ծով. Կոստանդնուպոլիս, 1913 թ.

Ա. Պիպեոճեանը 1913 թ. Կոստանդնուպոլսում երկու մեծադիր քարտեզ ծրագրեց, որոնցից առաջինը գծագրեց Յ. Փափազեանը, իսկ մյուսը՝ Ս. Ակինեանը: Սրանց հրատարակողն էր «Հայրենիք» կազմատունը:

Այս քարտեզներին կից հրատարակվել էին նաև ուղեցույց գրքուկներ, որոնք տալիս են տեղեկություններ և տվյալներ քարտեզում պատկերված երկրների վերաբերյալ:

Առաջին՝ 5.21 քարտեզը կոչվում է Ընդարձակ քարտեզ Օսմանեան պետութեան՝ գծված 1:2500000 աստիճանաչափով, 110x82 սմ չափի թերթի վրա: Սա ներկայացնում է օսմանյան պետությունը՝ սկսած Եգեյան ծովից մինչև Իրան և Կասպից ծով: Պետության տարածքը բաժանված է ժամանակակից վարչական վիլայեթների կամ նահանգ-աշխարհների: Ներդիրում ցուցադրված է Արաբիան: Քարտեզի վրա օսմանյան պետության տարածքում ցույց է տրված Հայաստանը, որը տարածված է կայսրության վեց վիլայեթների մեջ՝ սկսած Սեբաստիայից մինչև Իրանի սահմանը:

Հայաստանում նշված են Ամասիա, Եդոկիա-Թոկիաթ, Բաբերդ-Պայբուրթ, Սեբաստիա-Սիվաս, Երզնկա-Էրզնջան, Կարին-Էրզրում, Վան-Տոսպ, Նոր Խարբերդ, Մուշ, Բաղէշ-Բիթլիս, Մալաթիա և Տիարթեքիր քաղաքները: Արդվինը, Կարսը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ են տեղադրված:



5.21. Ընդարձակ քարտեզ Օսմանեան պետութեան. Կոստանդնուպոլիս, 1913 թ.



5.22. Նորագոյն ընդարձակ քարտէս Պայքանեան պետութեանց. Կոստանդնուպոլիս, 1913 թ.

Քարտեզ 5.22-ում վերատպված է երկրորդ մեծադիր քարտեզը, որը կոչվում է Նորագոյն ընդարձակ քարտէս Պայքանեան պետութեանց՝ գծագրված 1:864000 աստիճանաչափով և 120x75 սմ չափսի թերթի վրա: Քարտեզում ներկայացված են Եվրոպական Թուրքիան՝ Ռումելիին, Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան, Ալբանիան, Ռումինիան և Գարատաղ-Չերնոգորիան: Սա մանրակրկիտ մի քարտեզ է, որը պարունակում է բազմաթիվ տեղանուններ ու մանրամասներ:

Այս քարտեզն ընդհանրապես որևէ կապ չունի Հայաստանի տարածքների հետ, և դրա հրատարակման դրդապատճառը հավանաբար այն կարող է լինել, որ ինչպես հայ ժողովուրդը և Հայաստանը, այս երկրներն ու ժողովուրդները ևս երկար տարիներ եղել են Օսմանյան կայսրության լծի տակ: Հոգեբանական տեսանկյունից ելնելով՝ նման քարտեզի հրատարակումը կարող էր ինչ-որ կերպ կայսրության իշխանություններին ներկայանալ որպես հավատարմության մի տեսակի արտահայտություն:

Հաջորդ տարի՝ 1914 թ., Կոստանդնուպոլսում հրատարակվեց Ա. Պիպեռեանի մեծ կարևորություն ունեցող գրքանի ատլասը, որն անվանվում է Գրպանի նորագոյն ատլաս քաղաքական, վիճակագրական և առևտրական: Ատլասն ունի 80 էջ բացատրական տեքստ, 10,5x17,5 սմ չափեր, 23 կրկնակի էջի վրա տպագրված քարտեզներ, որոնցից երեքն ավելի մեծ են (39x17,5 սմ) ու ծաղված: Ատլասը միասնաբար հրատարակել են «Հայրենիք» կազմատունը և «Եփրատ» գործակալությունը, իսկ տպագրությունը կատարվել է Պոլսի «Սանճագճեան» տպարանում (տե՛ս քարտեզներ 5.23 և 5.24):

Ատլասի նպատակն է տեղեկություններ տրամադրել հայ առևտրականներին, որոնք այցելում ու երբեմն հաստատվում էին եվրոպական երկրներում: Այդ նպատակով ատլասը օժտված է 3 հավելյալ կրկնակի էջի վրա տպված երկրների դրոշների պատկերներով և 7 կրկնակի էջ աղյուսակներով, որտեղ ներկայացված է Եվրոպայում խոսվող լեզուների, դպրոցների, ազգագրության, պետական բյուջեների ու զանազան պետությունների արտահանած ու ներմուծած ապրանքների վիճակագրությունը: Այս բոլոր տեղեկությունները տրված են համառոտ և հանրամատչելի, որոնք կարող են իրապես օգտակար լինել առաջին անգամ արտերկիր այցելող ճամփորդների համար:

Ատլասը պարունակում է հետևյալ քարտեզները.

- Մոլդրակաց բաղրատական մեծությւն
- Երկրիս լեռանց բարձրութիւնը ու ծովերուն խորութիւնը բարձրէն դիտուած
- Քարտէս գաղթականութեան և հաղորդակցութեան մեծ ճամբաներու *
- Երոպա
- Ասիա
- Ափրիկէ
- Հիւսիսային Ամերիկա
- Ամերիկա Հարաւային և Կեդրոնական
- Աւստրալիա և Օվկիանիա
- Երոպական Թուրքիա և Տարտանէլ
- Ասիական Թուրքիա *
- Սուրիա և Միջագետք *
- Արաբիա
- Պալքանեան պետութիւններ
- Ռուսիա
- Ճրանաս
- Մեծ Բրիտանիա, Իրլանտա, Հոլլանտա և Պելճիքա
- Գերմանիա
- Աատրիօ-Հունգարիա
- Իտալիա
- Սպանիա և Փորթուկալ
- Զուիցերիա
- Շուէտ և Նորւեկիա

(*) Աստղանիշով նշված քարտեզները մեծ են ու ծավլած:



15.23. Հաղորդակցութեան մեծ ճամբաներու քարտեզը «Գրպանի ատլաս»-ից. Կոստանդնուպոլիս, 1914 թ.




5.24. Ասիա քարտեզը «Գրպանի ատլաս»-ից. Կոստանդնուպոլիս, 1914 թ.

Որպես օրինակ՝ ատլասի փոքրադիր, բայց բարձրորակ քարտեզներից մեկ ուրիշը՝ Ասիա քարտեզը, արտատպված է քարտեզ 5.24-ում: Այս երկէջանոց քարտեզի չափերն են 19x17 սմ, իսկ գծագրության աստիճանաչափն է 1:60 000 000:

Սա վերջին քարտեզագրական աշխատությունն էր, որը հրատարակվեց Կոստանդնուպոլսում: Օսմանյան իշխանությունների ծրագրած Մեծ եղեռնի իրականացումով բոլոր մշակութային հրատարակություններն ու ձեռնարկները կայսրության ամբողջ տարածքում միանգամից կասեցվեցին:

Թիֆլիսաբնակ Աւետիք Տէր-Յակոբեանը 1914 թ. հրատարակեց իր Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի դասագիրքը, որը տպագրվեց Թիֆլիսի «Էսպերանտո» տպարանում (տե՛ս քարտեզ 5.25):

Գրքի՝ Կիլիկիային վերաբերող գլխում տեղադրված է Հայկական Կիլիկիա անվանված մի քարտեզ, որի չափերն են 18 x 12 սմ: Սա Կիլիկիայի հայկական թագավորության տարածքի մանրամասն քարտեզն է, որը նշում է տարածաշրջանի ժամանակի հայկական տեղանունները: Չնայած քարտեզը պատրաստված է պարզ աշխարհագրական դասագրքի համար, սակայն քարտեզի որակն ընդունելի քարտեզագրական աշխատություն է:



Հայկական Կիլիկիա:

5.25. Հայկական Կիլիկիա քարտեզը Տէր-Յակոբեանի «Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն. ասլա Հայաստանի»-ից. Թիֆլիս, 1904 թ.

Յ. Էլիբեկեանը Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի աշխարհագրութեան ուսուցիչներէց էր, երբ 1914 թ. Թիֆլիսում հրատարակեց Կովկաս անվանված իր քարտեզը: Սա ներառում է Հարավային Ռուսաստանը, Հյուսիսային և Հարավային Կովկասը մինչև Պարսկաստան և Վանա լիճ: Քարտեզը պատրաստել էր հանրահայտ Հ. Դիատերգիլը, իսկ տպագրողն էր Ս. Բիխովը (տե՛ս քարտեզ 5.26):

Քարտեզը պարզ է, սակայն տարածաշրջանի վերաբերյալ ունի կարևոր բովանդակություն, հավանաբար այդ իսկ պատճառով էլ Էլիբեկեանը քարտեզը տեղադրել է իր Դասագիրք աշխարհագրութեան հատորում, որտեղ առկա է նաև նրա մեկ ուրիշ՝ երկրագնդերի գունավոր քարտեզը, որն այստեղ քննարկված չէ:



5.26. Կովկաս քարտեզը Էլիբեկեանի «Դասագիրք աշխարհագրութեան»-ից. Թիֆլիս, 1914 թ.

Բեռլինի և Մյունխենի համալսարանների պրոֆեսոր, մանկավարժ և պատմաբան Արտաշես Աբեղեանը (1878–1955) կազմել է մեծ թվով քարտեզներ և հատկապես աշխարհագրության դասագրքեր: Աբեղեանը, 1907–1917 թթ. բնակվելով Թիֆլիսում, հեղինակել ու թարգմանել է ավելի քան աշխարհագրության 14 դասագիրք և այլ աշխատություններ: Սրանք մեծ մասամբ ունեն որակյալ քարտեզներ՝ վերատպված 5.27, 5.28, 5.31, 5.35, 5.38 և 5.39 քարտեզներում:


5.27-ը Կովկասի քարտեզն է՝ Աբեղեանի՝ 1914 թ. Թիֆլիսում հրատարակված «Աշխարհագրության դասագիրք»-ի չորրորդ գրքից, որը կոչվում է Հայաստան և հարևան երկրամասեր: Սրա չափերն են 24x20 սմ, գծված է 1:4500000 աստիճանաչափով: Քարտեզում Կովկասից հարավ տարածքը բաժանված է ցարական Ռուսաստանի քսաներորդ դարասկզբի վարչական բաժանումներով:



5.27. Աբեղեանի Կովկաս քարտեզը «Աշխարհագրության դասագիրք»-ից. Թիֆլիս, 1914 թ.

Քարտեզ 5.28-ը կոչվում է *Տաճկա-Հայաստան և հարևան երկիրներ*, որի չափերն են 24x19 սմ, գծված է 1:4000 000 աստիճանաչափով: Սա հիմնականում ցուցադրում է Մեծ և Փոքր Հայքերի տարածքները, որոնք Օսմանյան կայսրության գերիշխանության ներքո էին, իսկ վարչական բաժանումները հիմնականում օսմանյան են:

Գրքում առկա է նաև մեկ այլ՝ Կիլիկիայի քարտեզը, որն այստեղ ցուցադրված չէ: Հաշվի առնելով, որ քարտեզները պատրաստված և հրատարակված են դպրոցականների համար, բոլոր քարտեզներն ունեն ընդունելի որակ:



5.28. Արեւեանի *Տաճկա-Հայաստան և հարևան երկիրներ քարտեզը* «Աշխարհագրութեան դասագիրք»-ից. Թիֆլիս, 1914 թ.

Կոստանդնուպոլսեցի պատմաբան Կարապետ Բասմաջեանը (1864–1942 թթ.) պատրաստել էր Հին Հայաստան կոչված մի քարտեզ, որը նաև տեղադրվել է Աւետիք Տէր-Յակոբեանի մինչև 1915 թ. Թիֆլիսում հրատարակած մի քանի աշխարհագրության դասագրքերում (տե՛ս քարտեզ 5.29):

Քարտեզն ունի 30x18 սմ չափեր և պատկերում է Հայաստանը՝ Արշակունիների թագավորության օրոք՝ 52–428 թթ.: Այստեղ ցուցադրված են Հայաստանի 15 նահանգ-աշխարհները, որոնց անունները տեղադրված են կից աղյուսակում: Այստեղ կարելի է նաև տեսնել Մեծ Հայքի նահանգների տարածքներն ու նրանց գավառների քանակը՝ ըստ դասագրքի տեքստի:

<u>Նահանգ-աշխարհ</u>	<u>Տարածք քառ. կմ</u>	<u>Գավառ</u>
1. Վերին Հայք	23,850	9
2. Ծովք, Չորրորդ Հայք	18,890	8
3. Աղձնիք	17,532	11
4. Տուրուբերան	25,008	17
5. Մոկք	2,962	8
6. Կորճայք	14,707	11
7. Պարսկահայք	11,010	9
8. Վասպուրական	40,870	35
9. Սինիք	15,237	12
10. Արցախ	11,528	12
11. Փայտակարան	21,000	10
12. Ուտիք	11,315	8
13. Գուգարք	16,795	9
14. Տայք	10,179	8
15. Այրարատ	40,105	22
Ընդհանուրը	280,998 քառ. կմ	189 գավառ




5.29. Հին Հայաստան, ըստ Կ. Յ. Բասմաջեանի. Թիֆլիս, 1914 թ.

Բրիտանացի ճանապարհորդ և անտրական չենրի Լինչը, ապրելով Բաղդադում, տարիներ շարունակ ճամփորդել է Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարածքով ու 1901-ին Լոնդոնում հրատարակել է իր Հայաստան. ճանկորդություններ և հետազոտություններ երկհատորյակը: Այս աշխատության առաջին հատորը վերաբերում է Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող նահանգներին, իսկ երկրորդը՝ Թուրքիայի կազմում գտնվող նահանգներին: Հատորները պարունակում են մանրակրկիտ տեղեկություններ շրջանի տեղագրության, աշխարհագրության ինչպես նաև հայ ժողովրդի մշակույթի, ապրելակերպի, կրոնի, եկեղեցու և կառուցած բերդերի, վանքերի ու հուշարձանների մասին, ինչպես նաև մեծ թվով լուսանկարներ ու հատակագծեր:

Գրքում որպես ներդիր առկա է 1:1000000 աստիճանաչափով գծված մեծադիր, գունավոր՝ Հայաստանը և հարևան երկրները անվանումով քարտեզ՝ գծված Լինչի և նրա գործընկեր Օսվալդի ձեռամբ 1901 թ.: Գիրքը և դրան կից քարտեզը նույնպես թարգմանվել են ռուսերեն և հրատարակվել Թիֆլիսում 1910 թ.: Երբ 1915 թ. Թիֆլիսում հրատարակվեց այս գրքի հայերեն համառոտ թարգմանությունը, դրան կից՝ կար նաև 1913 թ. հրատարակված՝ Լինչի 1901 թ. քարտեզի հայերեն թարգմանությունը: Քարտեզը կոչվում է Հայաստան և հարևան երկիրներ ըստ Լինչի և Օսվալդի, խմբ. և հրատ. Ա. Արեղեան: Քարտեզի ներքևի հատվածում առկա են ազգագրական աղյուսակներ, որոնք թվագրված են 1913 թվականով (տես քարտեզ 5.30):





5.30. Լիւնչի և Օձվալի Հայաստան եւ հարեան երկիրներ քարտեզը. Թիֆլիս, 1913 թ.

Նույն քարտեզը Սովետական Հայաստանում վերահրատարակվեց 1940 թ.՝ այս անգամ անվանված Հայաստան և իր հարեան երկրները. Լինչի և Օալթադի անուններին փոխարինել էր Արտաշես Աբեղեան անունը: Քարտեզի աջ կողմում տեղադրված վիճակագրական աղյուսակները թվագրված են 1939 թ.: Քարտեզը Գերմանիայի Շոտտգարտ քաղաքում հրատարակել է Կուրտ Մայերը, իսկ տպագրողն է «Հաուֆլեր և Վիստ» տպագրատունը: Տպագրությունը հավանաբար կատարվել է 1940 թվականին, այսինքն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, երբ Խորհրդային Միությունը դեռևս ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցն էր համարվում, և երկու երկրների միջև առկա էին մշակութային կապեր:

Հին Հայաստան և իր դրացի երկրները կոչված՝ Արտաշես Աբեղեանի այս քարտեզն ավելի պարզ է ու անպաճույճ և տեղադրված է նրա՝ 1915 թ. աշխարհագրության դասագրքում: Այստեղ, ինչպես միջնադարյան քարտեզներում, սահմանները գծված չեն, այլ տրված են Հայաստանի շուրջը նշված նրա հարևան երկրների անվանումները, որոնցից են Պոնտոսը, Ալանաց աշխարհը, Պարսկաստանը, Ասորեստանը, Միջագետքը և Մարաստանը՝ առանց քաղաքական սահմանների բաժանման:

Վերադառնալով հնագույն պատմությանը՝ այստեղ պետք է նշել, որ Մարաստանի զորավար Ատրոպատը, դիմադրելով Ալեքսանդր Մակեդոնացու հարձակումներին, նրան չթողեց գրավել իր երկիրը, որի պատճառով Ատրոպատի սերունդները տարիներ ի վեր իշխում էին Մարաստանում, և նրա պատվին ու հիշատակին երկիրը վերանվանվեց «Ատրոպատեն» կամ «Ատրպատական», որը Պարսկաստանի նահանգներից մեկն է³⁷:

Քարտեզ 5.31-ը Թիֆլիսում գծագրել է Հ. Դիատերդիկը, որն ունի 61x37 սմ չափեր, իսկ ոճով ու գույների համադրումով նման է նրա մյուս քարտեզներին, որոնցից են 5.16 և 5.19 քարտեզները:



5.31. Հին Հայաստան և իր դրացի երկրները քարտեզը. Թիֆլիս, 1914–1916 թթ.



5.32. Ռուս-թիւրքական սազմաբեւ, Տրասպիղոնի և Էրզրումի վիլայեթները. Թիֆլիս, 1916 թ.



5.33. Ռուս-թիւրքական սազմաբեւ, Արաշկերտի, Վանի և Ատրպատականի շրջանները. Թիֆլիս, 1916 թ.

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, քանի որ Ռուսաստանը պատերազմում էր Օսմանյան կայսրության դեմ, և նրանց ռազմաբեմն էր Արևմտահայաստանը, արևելահայրենիքի շրջանակում մեծ հետաքրքրություն առաջացավ ռազմաբեմների աշխարհագրությունից ու քաղաքական վիճակից տեղեկություններ ստանալու նկատմամբ: Այս նպատակով պատերազմի տարիներին Թիֆլիսում երեք հատուկ քարտեզներ պատրաստվեցին, որոնք ցուցադրում էին Մեծ Հայքի տարբեր նահանգների, ինչպես նաև ամբողջ Արևմտահայաստանի տարածքը՝ իր ռուսական, պարսկական և օսմանյան սահմաններով:


Առաջին երկու՝ 5.32 և 5.33 քարտեզները հրատարակվել են 1916 թ.: Առաջինը ներկայացնում է Տրապիզոնի և Էրզրումի օսմանյան վիլայեթները, իսկ երկրորդը՝ Ալաշկերտի, Վանի և Ատրպատականի (պարսկական Ադրբեջանի) շրջանները՝ տպագրված 32x22 սմ չափսի թղթի վրա:



5.34. Ռուս-թուրքական ռազմաբեմ. Հայաստան և հարևան երկիրներ. Թիֆլիս, 1917 թ.

Երրորդ քարտեզն ավելի մեծադիր է և ներառում է ավելի լայն տարածք: Այս մեկը կոչված է Ռուս-թուրքական ռազմաբեռն. Հայաստան և հարեան երկիրներ, որը տպագրված է 64x49 սմ չափսի թղթի վրա 1917 թվականին Թիֆլիսում: Վիմագրությունը պատրաստել է Ս. Բիխովը, իսկ հրատարակողն է Թիֆլիսի «Մշակ» օրաթերթը: Քարտեզի աղյուսակներում տրված է Օսմանյան վեց վիլայեթների (Վան, Բիթլիս, Էրզրում, Սարբերդ, Սիվաս, Դիարբեքիր) ազգագրական պատկերը, որտեղ բնակվում էին այդ պետության տարածքում ապրող հայերի մեծամասնությունը (տե՛ս քարտեզ 5.34):

Նույն տարիներին Ա. Աբեղեանը պատրաստել էր Վանա լճի շրջակայքը պատկերող մի քարտեզ, որը կոչել էր Վասպուրական: Այս քարտեզից նաև օգտվել է Ա. Դոն իր Մեծ դեպքերը Վասպուրականում աշխատության մեջ՝ հրատարակված Երևանում 1917 թ.: Քարտեզն ունի 24x19 սմ չափեր (տե՛ս քարտեզ 5.35):



5.35. Վասպուրականը քարտեզը Ա. Դոնի «Մեծ դեպքերը Վասպուրականում» գրքից, Երևան, 1917 թ.

1917 թ. Բոստոնում երկու նույնանման քարտեզներ հրատարակվեցին, որոնք ունեին միևնույն անվանումը՝ Հայաստան և դրացի երկիրները: Այդ երկու քարտեզներն ամբողջովին նույնն էին՝ բացի ցուցատախտակի վրա գրաված հրատարակչի անունից: Մեկը հրատարակել էր «Երան» գրատունը, իսկ մյուսը՝ Յ. Ն. Աշոտեանը՝ 58x46 սմ չափերով: Քարտեզներից ոչ մեկը թվագրված չէ: Իրականում այս քարտեզները ճշգրիտ ընդօրինակումներն են քարտեզ 5.5-ում վերատպված, 1904 թ. Բազելում Եվրոպայի Հայ ուսանողական միության հրատարակած Հայաստան և հարևան երկրներ անվանված քարտեզի, որը նույնպես ուներ 1:3 500 000 աստիճանաչափ: Քարտեզների տարբերությունը բնագրից նրանց ներդիրների բացակայությունն է:

Քարտեզները ներկայացնում են Արևմտահայաստանը, որն Օսմանյան կայսրության Ասիայի տարածքում է, և Արևելահայաստանը, որը Ռուսական կայսրության տարածքում է, ինչպես նաև հարակից Պարսկաստանի հյուսիսարևմտյան շրջանը: «Երանի» քարտեզը հրատարակվել է 1917 թ. և տեղադրվել իրենց իսկ կողմից Բոստոնում հրատարակված, Յարովիին Չագմագճեանի Ընդարձակ պատմութիւն հայոց: Սկիզբէն մինչև մեր օրերը գրքում (տե՛ս քարտեզ 5.36):



5.36. «Երան» գրատան Հայաստան և դրացի երկիրները քարտեզը. Պոսթըն, 1917 թ.

Ըստ երևույթին, որոշ ժամանակ անց «Երան» գրատունն անցնում է Աշոտեանի ձեռքը, և նրա քարտեզները վաճառվում են Երանի անունը կրող ցուցատախտակի վրա փակցված՝ «Հրատարակիչ Յ. Ն. Աշոտեան» վրադիր թերթիկով, իսկ շուտով ցուցատախտակի մակագրությունն էլ փոխվում է՝ «Երան»-ից դառնալով Յ. Ն. Աշոտեան:

Քարտեզի ընդօրինակումն այսքանով չի ավարտվում: Համաշխարհային պատերազմի օրերին, երբ Ռուսաստանը պատերազմում էր Օսմանյան կայսրության դեմ, 5.5 քարտեզը կրկին աղբյուր է դառնում մեկ ուրիշ քարտեզ պատրաստելու համար՝ այս անգամ հրատարակված Թիֆլիսում հավանաբար 1917 թ., որի ցուցատախտակի վերին մասը փոփոխված է և ոտաբերելով ու հայերենով գրված՝ Պատերազմի քարտեզ, հրատարակիչ Աբրահամ Աբրահամյան՝ այս մեկը ևս առանց թվականի:

Քարտեզի՝ Ժնևում պատրաստված բնօրինակի ցուցատախտակը վերատպված է պատկեր 5.37-ում, իսկ «Երանի», Թիֆլիսի և Աշոտեանի օրինակների ցուցատախտակները ներկայացված են 5.36ա, 5.38 և 5.39 պատկերներում:



5.36ա. «Երանի» հրատարակած քարտեզի ցուցատախտակը. Բոստոն, 1917 թ.



5.38. Թիֆլիսում տպագրված քարտեզի ցուցատախտակը. Թիֆլիս, 1917 թ.



5.37. Ժնևում պատրաստված քարտեզի բնօրինակի ցուցատախտակը. 1904 թ.



5.39. Աշոտեանի հրատարակած քարտեզի ցուցատախտակը. Բոստոն, 1917 թ.

Արտաշէս Աբեղեանը 1917 թ. Թիֆլիսում քաղաքի հայկական դպրոցների համար հրատարակեց մի Աշխարհագրական դպրոցական ատլաս, որի վիմագրովթյունը կատարել էր Կովկասի զինվորատեղագրական բաժանմունքը: Քարտեզները պատրաստված են խնամքով ու ճաշակով և տպագրված են գունավոր, սակայն 15x21,5 սմ չափսի ոչ որակյալ թղթի վրա: Քարտեզները տպագրված են կրկնակի էջերի վրա և ունեն մոտ 25x20 սմ չափեր: Ատլասն ունի հետևյալ երկէջանոց քարտեզները.

- Կիսագնդեր
- Երոպա
- Ասիա
- Աֆրիկա
- Հիւ. և Հար. Ամերիկա
- Աստրալիա
- Երոպական Ռուսաստան
- Կովկաս
- Տաճկա-Հայաստան


5.40 քարտեզը Կիսագնդեր քարտեզն է, որի վրա կա նաև աշխարհի քարտեզը՝ գծված մերկատորյան պրոյեկցիայով: Թերթը նույնպես պարունակում է եղանակային գոտիների քարտեզ և հողմացույց:



5.40. Աբեղեանի ատլասից Կիսագնդեր քարտեզը. Թիֆլիս, 1917 թ.

Այս գլխի վերջին պատկերը անգլերեն հատորի մեջ 1915 թվականին տեղադրված և հայերեն թարգմանված՝ Յակոբ Ա. Խարաճեանի՝ Հայաստանի շրջանի երկրաբանական քարտեզն է։ Սա ցուցադրում է ժամանակին օգտագործվող քարյուղի, քարածխի, ոսկու և այլ մետաղների հանքերը գծագրված 50x28 սմ չափսի բարակ թղթի վրա և տեղադրված որպես ներդիր (տե՛ս քարտեզ 5.42):

Հեղինակը գիրքը թարգմանել է հայերեն՝ որպես Հանքեր Հայաստանի, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ, և որը Նյու Յորքի «Հայկ» գրատունը հրատարակել է 1919 թ.: Գրքի ներդիրը 1915 թ. քարտեզն է՝ թարգմանված հայերեն: Այս քարտեզի ֆիզիկական սահմանները թելադրում են, որ դրանք գծված են մինչև 1915 թվականը, հետևաբար կարող են մինչև 1918 թ. քարտեզագրության մաս կազմել:



5.42. Խարաճեանի Հանքեր Հայաստանի քարտեզը. Նյու Յորք, 1915–1918 թթ.

Գլուխ 6. Հավելյալ հետաքրքրաշարժ և ձեռագիր քարտեզներ. 19-20-րդ դդ.

Աշխատության այս գլուխը նվիրված է անսովոր և ձեռագիր քարտեզների, որոնցից մի քանիսը պատրաստվել են 19-րդ դարում, բայց ճշող մեծամասնությունը գծագրված է 20-րդ դարում: Այստեղ ընդհանրապես տեղ են գտել հայերեն քարտեզներ, սակայն բացառություն են կազմում առաջին երեք քարտեզները, որոնք ոտաներ են: Սրանք առաջին քարտեզներն են, որոնք պատրաստվել են Ռուսական կայսրության տարածքում հայ և ոտա մասնագետների ձեռքով և տեղ են գտել 1853 և 1859 թվականներին ոտաներն հրատարակված՝ Հայաստանի պատմությանը վերաբերող երկու գրքում:

6.1 քարտեզը Հայաստանի և Պարսկաստանի քարտեզն է, որը ցույց է տալիս Հայաստանը, Պարսկաստանը, Մարաստանը, Ասորիքը, Միջագետքը և Բյուզանդիոնը 5-րդ դարում: Քարտեզն ունի 61x39 սմ չափեր և ցույց է տալիս Հայաստանի մի քանի կարևոր քաղաքները և:



6.1. Հայաստանի և Պարսկաստանի քարտեզը 5-րդ դ. Թիֆլիս, 1853 թ.


Քարտեզը ներդրված է Թիֆլիսում 1853 թ. ուսերեն հրատարակված Եղիշեի Վարդանանց պատերազմի վերաբերյալ գրքի՝ Պ. Շանշիևի թարգմանովից մեջ, որը կոչվում է Եղիշե Վարդապետի պատմությունը: Քրիստոնեության և զրադաշտական քարոզչության հինգերորդ դարի պատերազմը Հայաստանում: Հաջորդ երկու քարտեզները վերցված են Ա. Խոսրոբաշևի Հայաստանի աշխարհագրության, պատմության և գրականության քննարկումը գրքից՝ հրատարակված Սանկտ Պետերբուրգում 1859 թվականին: Գրքի քարտեզները պատրաստել է Թիֆլիսում Զինվորական շտաբի հրամանատար Ստրաուսը 1858 թ.:

Պատկեր 6.2-ի ուսերեն քարտեզը կոչվում է Հայաստանի և նրան կից այլ երկրների քարտեզը, ունի 1:2600000 աստիճանաչափ և 57x45 սմ չափեր: Այստեղ ներկայացված են Արևմտահայաստանը, ինչպես նաև Պարսկաստանի և Ռուսաստանի տարածքներում ընդգրկված հին Հայաստանի շրջանները քարտեզի պատրաստման ժամանակ: Հայաստան անունը գրված է Արաբկիրից ու Խարբերդից մինչև Սևանի արևելյան ափերն ընկած տարածքում: Իսկ Արցախի շրջանն ընկած է ցարական Ռուսաստանի Շամախի նահանգի տարածքում:



6.2. Հայաստանի և նրան կից այլ երկրների քարտեզը. Սանկտ Պետերբուրգ, 1858 թ.

Քարտեզ 6.3-ը կոչվում է Հնադարյան Հայաստանի քարտեզ՝ գծված 1858 թ., 1:4410000 աստիճանաչափով և 24x20 սմ չափերով: Այստեղ ցուցադրված են Փոքր Հայքը և Մեծ Հայքը՝ իրենց նահանգների բաժանումներով, նշված հայկական անվանումներով: Պարսկաստանի Ատրպատական-Ադրբեջան նահանգն անվանված է Ադրբայջան, որն այս նահանգի հայերենով պահպանված հնագույն անվանումն է, որը, սակայն, ուրիշ լեզուներում տրոհվել ու դարձել է Ադրբեջան-Ազերբայջան:




6.3. Հնագույն Հայաստանի քարտեզը ռուսերենով. Սանկտ Պետերբուրգ, 1858 թ.

1890-ական թվականներին Խաչատուր վարդապետ Դադեանը Էջմիածնում նշանակվում է որպես Իրանի հյուսիսարևմտյան նահանգի՝ Ատրպատականի հոգևոր կապի պատասխանատու, որն ուներ մի քանի տասնյակ հազարի հասնող հայ համայնք:

Դադեանը 1895 թվականին պատրաստել տվեց Մակու քաղաքի և գավառի քարտեզը, որի արդյունքն է քարտեզ 6.4-ում արտատպված 17x18 սմ չափերով ձեռագիր քարտեզը:

Երբ 1898 թ. Դադեանը նշանակվեց Թավրիզում Ատրպատականի թեմի օգնական առաջնորդ, նա ձեռնամուխ եղավ Սալմաստի գավառի հայկական և այլ գյուղերի քարտեզը պատրաստելուն: Դրա արդյունքը քարտեզ 6.5-ում արտատպված՝ Սալմաստ գավառի ձեռագիր քարտեզն էր³⁸: Վերոնշյալ երկու քարտեզներն էլ պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում:



6.5. Սալմաստ քարտեզը. Ատրպատական, 1898 թ.

ՀՅԴ-ի թանգարանում պահպանվում է Սալմաստի մեկ այլ ձեռագիր քարտեզ, որի մոտավոր չափերն են 25x35 սմ: Սա ավելի մանրակրկիտ ու ճշգրիտ քարտեզ է, որտեղ ցույց են տրված գավառի բոլոր գյուղերը, նշված են դրանց բնակչության ազգությունը՝ հայ, թուրք, ասորի և հրեա: Քարտեզը հավանաբար պատրաստված է 1905-1915 թթ. Ատրպատականում (տե՛ս քարտեզ 6.6):

19-րդ դարի վերջերից սկսած՝ Սիյուտքում և Հայաստանի տարածքում ապրող հայ մասնագետները սկսեցին տարատեսակ ձեռագիր քարտեզներ պատրաստել, որոնք նման չէին 6.4, 6.5, 6.6 և 6.8 վերատպված էքզիզանման քարտեզներին, այլ իրական և հավաստի քարտեզներ էին: Սրանցից մեծ մասը գծված էր պաստառի վրա, իսկ մնացածը՝ հասարակ կամ հատուկ գծագրական թղթի վրա, որոնցից կարևորները և հասանելիները քննարկված են այս աշխատության մեջ: Ձեռագիր քարտեզներ պատրաստելու ավանդույթը Արևելյան Հայաստանում շարունակվեց մինչև խորհրդայնացումը, իսկ Սիյուտքում նման աշխատանքներ դեռ շարունակվեցին ավելի քան տասը տարի:

Առաջին ձեռագիր քարտեզներից է 1899 թվականին Վանում Տ. Ե. Յ. Չիթճեանի պատրաստած քարտեզ 6.4-ը՝ կիսագնդերի պատկերը, որն անվանված է Հարթագունդ, բաժնուած երկու կիսագունդի, առնուած Մէսսսի ֆրանսերէն օրինակէն, ճշդագրուած ֆրանսերէն եւ գերմաներէն նորագոյն մասնաւորք քարտեզներէն: Ընդօրինակումն արված է ճաշակով և մանրակրկիտ՝ առանց խորանալու դետալների մեջ: Աշխարհը բաժանված է եղանակային գոտիների, որոնց վրա նշված են երկրների սահմանները: Բնօրինակը պահպանվում է Հայաստանի պատմության թանգարանում (տե՛ս քարտեզ 6.7):



6.7. Հարթագունդ, ըստ Չիթճեանի. Վան, 1899 թ.

20-րդ դարի առաջին տարիներին Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմեան Հայրիկը պատվիրել էր Հայաստանի որոշ շրջանների մանրամաս քարտեզներ պատրաստել, որոնցից Էջմիածնին վերաբերող մի քանիսն այժմ պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Սրանք, սակայն, պատրաստված են

ուսերենով: Սրանց շարքում Հայաստանի ազգային արխիվի Մեսրոպ Սմբատեանի ֆոնդում պահպանված է Նախիջևանի մանրամասն հայերեն մի քարտեզ (429.1.226.1): Քարտեզը գծագրված է 65x49 սմ չափսի թղթի վրա, սակայն, ցավոք, քարտեզագրի անվան մասը պատռված է: Սա մի մանրակրկիտ գծագրված ձեռագիր քարտեզ է, որտեղ տրված են մեծ թվով տեղանուններ՝ գյուղերում առկա նշանավոր եկեղեցիների մանրանկարներով ու անվանումներով: Քարտեզի ներքևի մասում կապույտով նշված է Արաքս գետը (տե՛ս քարտեզ 6.8):



6.8. Նախիջևանի շրջանի ձեռագիր քարտեզ. Էջմիածին, 1900–ական թվականներ

Երզնկայից Աղեքսանդրիա հասած մի տարագիր՝ Վ. Գ. Բրուտեանը, 1907 թվականին գծագրել է մեծադիր՝ 1,5x1 մ չափսի ձեռագիր մի քարտեզ, որը հավանաբար ընդօրինակված է այս աշխատության քարտեզ 5.5-ի ժնևի 1904 թ. Հայ ուսանողների միության հրատարակած քարտեզից: Քարտեզը գծված է պաստառի վրա և ներկայացնում է մանրակրկիտ մի աշխատանք՝ ցուցադրելով Օսմանյան կայսրության Ասիայի տարածքը մինչև Հյուսիսային Կովկաս ու Իրանի Ատրպատական նահանգ: Քարտեզի երկու ներդիրներն են Կիլիկիայի հայոց թագավորությունն ու Սասունի գավառը:

Քարտեզն այժմ շրջանակված ու ապակեպատված է և կախված է Վիեննայի Մխիթարեան միաբանության թանգարանում (տե՛ս քարտեզ 6.9):



6.9. Բրուտեանի Հայաստան ու հարեան երկիրները քարտեզը. Աղեքսանդրիա, 1907 թ.

1916 թ. Վանից տարագիր Մաղաք Շալճեան անունով մեկը նշանակվել էր Սանահինի Ամերիկյան որբանոցի տնօրեն: Լինելով Վանում և Կոստանդնուպոլսում կրթված մի անհատ՝ նա նաև զբաղվում էր քարտեզագրութեամբ ու իր ամերիկյան կապերի միջոցով ձեռք բերված հատուկ թանաքներով կտորի վրա գծել էր 190x105 սմ չափսի և 1:800000 չափանիշով մի քարտեզ, որն անվանել է Պատմական Հայաստան և դրացի երկիրներ: Սա խնամքով ու գեղեցիկ գծված մի քարտեզ է և պարունակում է մանրակրկիտ տեղագրովժոն, ինչպիսիք են Քսենոփոնի և Ալեքսանդր Մակեդոնացու՝ Հայաստանի տարածքով անցած ճանապարհները: Երկու ներդիրներն էլ ցույց են տալիս Փոքր Ասիան ու Արևմտյան Պարսկաստանը: Քարտեզ 6.10-ի՝ Վանի շրջանի մանրամասը կարելի է տեսնել քարտեզ 6.10ա-ում:

Քարտեզը պահպանվում է հեղինակի երևանաբնակ թոռնուհու՝ Անահիտ Բեգլարյանի մոտ: Ընտանիքի անդամների համար Շալճեանը պատրաստել է նաև ուրիշ փոքրադիր ձեռագիր քարտեզներ:

6.10ա. Շալճեանի քարտեզից Վանի շրջանի մանրամասը. Գիլագարակ, Լոռի, 1916 թ.





6.10. Շալճեանի Պատմական Հայաստան և Խարեան երկիրներ քարտեգը. Գիւլազարակ, Լոռի, 1916 թ.

Քարտեգը պատրաստելիս Շալճեանը հիմնվել է միայն Վարդանյանի Պատմական Հայաստան և Խարեան երկիրներ քարտեգի վրա, որը հրատարակվել էր Թիֆլիսում 1910 թվականին:

Իրեն վանեցի «տարագիր» կոչող Մարտիրոս Խերանեանը հեղինակ է բազմաթիվ ձեռագիր քարտեզների, որոնք հիմնականում վերաբերում էին Վանին ու Հայաստանի տարածաշրջանին: 1910-ից մինչև 1930 թթ. նա պաստառի վրա գծագրել է մեծ թվով քարտեզներ՝ մանրակրկիտ նշելով տեղանուններն ու այլ մանրամասնություններ:

Նրա առաջին աշխատանքներից մեկ է հասել 1913 թվականի Վանի շրջանի քարտեզը, որն արտատպված է քարտեզ 6.11-ում: Սա Վանի շրջանի մանրակրկիտ մի քարտեզ է՝ 80x100 սմ չափերով, որի վրա առկա է նաև Վանի հատակագծի ներդիրը: Քարտեզը պահպանվում է Հայաստանի պատմության թանգարանում:



6.11. Խերանեանի Վան ձեռագիր քարտեզը. Վան, 1913 թ.

Խերանեանը մասնակցել է 1915 թ. Վանի ապրիլյան ինքնապաշտպանութեանը և հետագայում գծագրել հայկական պաշտպանական դիրքերի ու թուրքական զորքերի տեղադրման քարտեզները (տես քարտեզ 6.12):

Խերանեանը Վան. Հայ ինքնապաշտպանութիւնը կոչված այս քարտեզը գծել է 1928 թ. Թավրիզում, որտեղ նա ապաստան էր գտել, և ստորագրել՝ Վանեցի տարագիր Մարտիրոս Խերանեան: Քարտեզը պաստառի վրա է գծված և ունի 1,50x0,98 սմ չափեր, որի վրա հայկական ինքնապաշտպանութեան դիրքերը նշված են կարմիրով: Այստեղ նա տեղադրել է երեք ներդիր՝ Վասպուրականի շրջանը, Շատախի շրջակայքը և Շատախի Թաղ քաղաքը³⁹:

Քարտեզը պահպանվում է ՀՅԴ-ի Երևանի գրասենյակի թանգարանում, որտեղ առկա է այդ քարտեզից նաև մեկ այլ օրինակ, իսկ Հայաստանի պատմության թանգարանում կան քարտեզի և երկու տարբեր օրինակներ, որոնք նա պատրաստել է Թավրիզում 1926 և 1927 թվականներին: Երևանաբնակ Ժիրայր Փիրիկյանն ունի այս քարտեզի մեկ այլ օրինակը և: Հավանաբար անձնական ուրիշ հավաքածուներում կարող են լինել նաև մեզ անծանոթ այլ օրինակներ: Այստեղ պետք է նշել, որ Խերանեանի քարտեզները ձեռագիր լինելու պատճառով միմյանցից տարբերվում էին դասավորությամբ, չափերով և գույներով:



6.12. Խերանեանի Վանի ինքնապաշտպանութիւնը քարտեզը. Թավրիզ, 1928 թ.

Խերանեանը Վանից հեռանում է ու հասնում Իրաք, որտեղ և ապաստանում է մինչև 1920-ական թվականները: Այստեղից էլ սկսած՝ նա զբաղվում է իր հայրենիքի տարածաշրջանի քարտեզների գծագրով՝ որոնք նա կոչում էր «Հայաստան եւ հարեան երկրներ», «Հայաստանը ըստ Ուիլսոնի գծած սահմանների» և այլ նման անվանումներով: Այս քարտեզները մեծադիր էին, ու նրանց չափերը հասնում էին մինչև 3-4 քառակուսի մետրի: Ինչպես նշվեց, բոլորն էլ մանրակրկիտ աշխատանքի ու ճաշակով գունավորման արդյունք են:


Սրանցից առաջինը գծագրված է 1919 թ. օգոստոսին, երբ Խերանեանը որպես փախստական ապրում էր Բաղդադի մոտակայքում տեղակայված Բաքուբայի ճամբարի վրաններում: Քարտեզը կոչված է Անկախ Հայաստան եւ հարեան երկրներ: Ջարմանայի է, թե ինչպես է նա կարողացել այս հսկա քարտեզը, որի չափերն են 229x154 սմ, պատրաստել և գծել նման պայմաններում: Աշխատավայրի ընձեռած հնարավորությունների մասին կարելի է կռահել, երբ այս քարտեզը համեմատում ենք նրա մյուս քարտեզների հետ, սրա մեջ նկատելի է վառ գույների և դրանց բազմազանությունը բացակայությունը: Հավանաբար տարագիրների այս ճամբարում ներկերի տեսականին սահմանափակված էր միայն մի քանիսով (տե՛ս քարտեզներ 6.13, 6.13 ա, 6.13 բ):



6.13. Խերանեանի Անկախ Հայաստան եւ հարեան երկրներ քարտեզը. Բաքուբա, Իրաք, 1919 թ.



6.13ա. Խերանեանի Անկախ Հայաստան եւ հարեան երկրներ, 1919 թ. քարտեզի ցուցատախտակը



6.13բ. Խերանեանի Անկախ Հայաստան եւ հարեան երկրներ, 1919 թ. քարտեզից հատված

Այստեղ պատկերված՝ Խերանեանի քարտեզից վերցված ցուցատախտակն ու մանրամասը նրա աշխատանքի մանրակրկիտ և բարձրորակ լինելու ապացույցներ են:

Ըստ ժամանակագրության՝ Խերանեանի հաջորդ քարտեզը պատրաստվել է 1922 թ. Իրաքի Բասրա քաղաքում, որն անվանված է Հայաստան, Ուիլսոնի որոշած սահմաններով: Սա հավանաբար նրա առաջին քարտեզն է, որտեղ նշվում են Ուիլսոնի մանրատի սահմանները (տե՛ս քարտեզ 6.14):

Քարտեզը ցուցադրում է Հայաստանի շրջակայքը՝ սկսած կենտրոնական Անատոլիայից մինչև Պարսկաստանի Արդաբիլ քաղաքը, հյուսիսում Սև ծովից մինչև հարավում Միջերկրականը: Հայաստանի սահմանները գծված են ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնի կողմից՝ հետևելով Սևրի դաշնագրի որոշումներին: Կենտրոնական թեման Հայաստանի և Օսմանյան կայսրության սահմաններն են, ըստ որի՝ Հայաստանն ունենում էր շուրջ 200 000 քառ. կմ տարածք և հասնում էր մինչև Սև ծով:

Քարտեզը մեծադիր է՝ 1,5 x 1,2 մետր չափերով, և պահվում է Բոստոնի Ուալթերթատոն արվարձանի ՀՅԴ-ի «Հայրենիք» միության գրասենյակում: Այս քարտեզի նման քարտեզներ Խերանեանը պատրաստել է նաև 1926 թվականին Թավրիզում:



6.14. Խերանեանի Հայաստան, Ուիլսոնի որոշած ասիմիլաններով քարտեզի ցուցատախտակը. Բասրա, 1922 թ.

1923–1924 թվականներից Խերանեանն արդեն հաստատվել էր Ատրպատականի Թավրիզ քաղաքում, որտեղ նա պատրաստել և ընդօրինակել է իր` Հայաստանի քարտեզների մեծ մասը: Փամանակին Թավրիզը համարվում էր Պարսկաստանում արևելահայ մշակույթի կարևոր կենտրոն, քանի որ Հայաստանում կոմունիստական կարգեր հաստատվելուց հետո մեծ թվով հայ մտավորականներ ապաստանեցին այստեղ: Թավրիզում Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանը (1866–1948 թթ.) հայրենասեր, առաջադեմ և զարգացած հոգևորական էր, որը հովանավորում էր համայնքի մշակութային կյանքի զարգացումը և վայելում համայնքի հարգանքն ու գնահատանքը: Քսաներորդ դարակազմին Թավրիզում գործում էին հայկական դպրոցներ, եկեղեցիներ, մշակութային ու մարզական միություններ, «Ռոստոմ» գրադարանը, թատերախումբ, երգչախումբ: Մշակութային կյանքն էլ ավելի զարգացավ 1920–1921 թթ. այստեղ ապաստանած հայ մտավորականության ներկայության և մասնակցության շնորհիվ:

Ինչպես վերը նշվեց, առնվազն նման երկու քարտեզ Խերանեանը պատրաստել է 1926 թ. Թավրիզում: Սրանք երկուսն էլ կոչված են Հայաստան, Ուիլսոնի գծած ասիմիլաններով: Սրանցից 6.15 քարտեզը 1,8x1,6 մ չափսի է և պահպանվում է Ամերիկայի հայկական թանգարանում (Բոստոն), իսկ 6.16 քարտեզը 191x166 սմ չափսի է և պահպանվում է Արցախի պետական երկրագիտական թանգարանում (Ստեփանակերտ):




6.15. Խերանեանի Հայաստան, Ռիչրանի զծած ասիճաններով քարտեզի ցուցատախտակը. Թավրիգ, օգոստոս, 1926 թ.



6.16. Խերանեանի Հայաստան, Ռիչրանի զծած ասիճաններով քարտեզի ցուցատախտակը. Թավրիգ, նոյեմբեր, 1926 թ.





6.17. Խերանեանի Հայաստան, Ռիլընի որոշած սահմաններով քարտեզի ցուցատախտակը, լուսանկարը՝ Հրայր Բազէ Խաչերեանի. Բասրա, 1922 թ.

Քարտեզ 6.17-ը Խերանեանի ամենամեծ քարտեզն է, որի չափերն են 252x166 սմ: Քարտեզն անվանված է Հայաստան Ռիլընի որոշած սահմաններով, որը նա պատրաստել է 1922 թվականին Բասրայի մոտակա Համրայում՝ օգտվելով 1916 թ. անգլիական զինվորական մի քարտեզից: Քարտեզը պահպանվում է Էջմիածնի Վեհարանի թանգարանում:



6.17ա. Քարտեզից Երևանի շրջանի մանրամասը



6.18. Խերանեանի Հայաստան եւ զրաջի երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, 1928 թ.


Ավելի ուշ՝ 1928 թվականին, Խերանեանը Թավրիզում պատրաստել է Հայաստան և դրացի երկիրներ անվանված մեկ այլ քարտեզ, որի չափերն են 145x99 սմ: Այս քարտեզը պահպանված է ԱՄՆ-ի Դետրոյտ քաղաքի Հայ դատի հանձնախմբի գրասենյակում: Քարտեզը պատճենահանված է, և դրա պատճենն այժմ գտնվում է Վաշինգտոնի Հայ դատի հանձնախմբի գրասենյակի համագումարների սրահը (տե՛ս քարտեզ 6.18):



Քարտեզ 6.19-ը Խերանեանի մեկ այլ՝ Հայաստան և հարևան երկիրներ քարտեզի ցուցատախտակն է՝ գծված Թավրիզում 1926 թվականին: Քարտեզը Մեծի Տանն Կիլիկիո Վեհարանին է նվիրել թեհրանահայ տիկին Սաթենիկ Ասիրեանը: Քարտեզն այժմ պահվում է Անթիլիասի Վեհարանի թանգարանում:

←6.19. Խերանեանի Հայաստան և հարևան երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, հունիս-օգոստոս, 1926 թ.

Մեր աշխատության մեջ Խերանեանի վերջին քարտեզը նույնպես Հայաստան և դրացի երկիրներ է անվանված, որի չափերն են 166 x 107 սմ, և նախկինի նման գծագրված է Թավրիզում 1928 թվականին: Քարտեզը ցուցադրում է Հայաստանի տարածաշրջանը՝ սկսած Միջերկրականի հյուսիսարևմտյան անկյունից մինչև Արաքսի և Կուրի խառնարանը և պարսկական Ատրպատական նահանգը: Քարտեզի ցուցատախտակը արտատպված է Խերանեանի ժառանգներից, ԱՄՆ-ի Փասադենա քաղաքում բնակվող Մաթյու Քարանյանի թույլտվությամբ, ում նաև պատկանում է քարտեզը, և ով նաև հրատարակել է «Պատմական Հայաստանը 100 տարի անց» գիրքը, որի մեջ զետեղված է նաև քարտեզի պատկերը⁴⁰ (տե՛ս քարտեզ 6.20):



←6.20. Խերանեանի Հայաստան և դրացի երկիրներ քարտեզի ցուցատախտակը. Թավրիզ, 1928 թ.

Փարիզաբնակ Զատիկ Խանզադեանը (1886–1980 թթ.) Ֆրանսիայի գինվորական բարձրաստիճան քարտեզագետ էր: Նա նաև հավաքում էր քարտեզներ, ունի նաև բազմաթիվ գծագրած քարտեզներ, որոնց ճնշող մեծամասնությունը պատրաստված է ֆրանսերենով: Նա ժամանակին պատրաստել է Հայաստանի քարտեզների երկու կարևոր գրքեր, որոնք, սակայն, ինչպես կտեսնենք, իրական արժեք չեն ներկայացնում, քանի որ չեն կարող ծառայել որպես էական նշանակություն ունեցող փաստաթղթեր:

1920 թ. Խանզադեանը Փարիզում ֆրանսերենով հրատարակել է քարտեզների գիրք, որն անվանված է *Տեղեկություն Հայաստանի միասնական աշխարհագրության: Պատմական ատլաս (Rapport sur l'unité géographique de l'Arménie. Atlas historique)*⁴¹: Գիրքը պարունակում է վաղ և ուշմիջնադարյան և այլ ժամանակների եվրոպական 28 քարտեզ: Սրանք ներկայացվելու էին Հայաստանի խնդիրը քննարկող Սևրի դաշնագրի բանակցող կողմերին՝ որպես Հայաստանի պատմությունը փաստող վավերագրական փաստաթղթեր:

Նրա երկրորդ՝ ավելի մեծ աշխատությունը, որը պարունակում է 36x50 սմ չափսի 100 թերթ, որոնց վրա տպագրված են ավելի քան 300 քարտեզ և տասնյակ ատլասների տիտղոսաթերթեր ու ցուցատախտակներ՝ բոլորը տեղադրված 39x54x4 սմ չափսի կաշվեպատ մի տուփի մեջ: Այս աշխատությունը հրատարակվել է Փարիզում 1960 թ.: Հատորը կոչվում է *Armenia–Atlas Historique (Հայաստան: Պատմական ատլաս)*: Այստեղ բոլոր ցուցատախտակները, տիտղոսաթերթերը և քարտեզներն ընդօրինակել ու վերագծել է Խանզադեանն իր քարտեզագիր խմբի օգնությամբ, և բոլորն էլ կրում են նրա՝ Z. Khanzadian ստորագրությունը⁴²:

Կարևոր է, որ քարտեզները ներկայացված լինեին իրենց բնագիր լեզուներով՝ առանց թարգմանություն, սակայն անհասկանալին այն է, որ Խանզադեանը որոշել է, որ ինքը կամ իր քարտեզագիրներն ընդօրինակեն բոլոր բնագիր քարտեզները և դրանք ստորագրեն Z. Khanzadian, Jaqueline–Andre Barguiradjian կամ Jacques Khanzadian ձևով: Այս հանգամանքն ընդհանրապես ոչնչացրել է քարտեզների արժեքը, քանի որ սրանք արդեն ոչ թե հնագույն կամ միջնադարյան քարտեզների պատճեններ են, այլ Խանզադեանի՝ վերջերս գծած քարտեզներ, որոնք որպես պաշտոնական փաստաթուղթ ամբողջովին անարժեք են:

Խանզադեանի այս աշխատության մեջ առկա են մի քանի հայերեն քարտեզներ, որոնցից մեկի մասին կխոսենք ստորև: Հայերեն տպագրված մյուս՝ 6.21 քարտեզը վերցված է Կոստանդնուպոլսում 1881 թ. հրատարակված աշխարհագրության դասագրքից, որը Խանզադեանն ընդօրինակել է (այս գրքի և դրա քարտեզների մասին տես 4.17 և 4.18 քարտեզների բացատրությունները):

6.22 քարտեզը 1950–ական թվականներին Խանզադեանի գծած և իր անունով ստորագրած քարտեզն է, որը նա տեղադրել է իր 1960 թ. աշխատության 177–րդ էջում: Համեմատելով այս քարտեզը 6.21 քարտեզի հետ՝ կարելի է տեսնել, որ Խանզադեանն ամբողջովին և մանրակրկիտ ընդօրինակել է քարտեզը՝ փոխելով միայն Բոսֆորը ներկայացնող ներդիրն իր պատրաստած՝ Հայաստանի նահանգների անունների ցանկով, և քարտեզի շուրջն ավելացրել է մի զարդարուն շրջանակ: Նա նույնիսկ ընդօրինակել է քարտեզի վրայի արաբատառ օսմաներն զրված տեքստը, որը վերաբերում է քարտեզի տպագրության իրավունք ստանալուն: Այս քարտեզի աղբյուրի մասին նա նշել է իր ատլասի առաջաբանի էջ 15–ում, իսկ քարտեզի տպագրած էջին աղբյուրի մասին ոչինչ չկա: Քարտեզների մեծամասնությունը չունի բնօրինակների աղբյուրների անվանման ու դրանց գտնվելու վայրի մասին որևէ տեղեկություն:




6.21. Ասիոյ Թուրքիա բարտեզը աշխարհագրության դասագրքից. Կոստանդնուպոլիս, 1881 թ.



6.22. Խանգաղեանի ընդօրինակած Ասիոյ Թուրքիա բարտեզը շրջանակով. Փարիզ, 1950-ական թթ.

Հաջորդ քարտեզը ցուցադրում է Էրզրոմի նահանգի Երզնկա գավառի շրջանը, որը կոչված է Երզնկայի կամ Եկեղեաց գաւառ: Քարտեզագիրն անհայտ է: Քարտեզում առկա է Երզնկա գավառի Ներքին Բազառիճ գյուղը, որտեղ ծնվել էր Թալեաթ փաշային գնդականարող Սողոմոն Թեհլիրեանը: Արտատպված քարտեզի չափերն են 52x36 սմ, որն ունի 1:100 000 աստիճանաչափ: Սրա օրինակը պահպանված է կանադաբնակ Հ. Նաոանյանի մոտ, որի արտատպով ժյունը տրված է քարտեզ 6.23-ում: Քարտեզի փոքրացված տարբերակը տեղադրված է 1947 թ. Կահիրեում Գ. Միլումէնեանի հրատարակած Երզնկա հատորում՝ 1:160 000 աստիճանաչափով և 35x23,5 սմ չափերով:


Սա մի մանրամասն քարտեզ է, որի վրա ցույց են տրված ավելի քան 120 գյուղ և քաղաք՝ իրենց անուններով, բնակչության ազգագրական բաժանումներով, ինչպես նաև 6 եկեղեցի, որոնցից 5-ը տեղադրված են Դերսիմի լեռների ստորոտներում: Քարտեզը պարունակում է նաև տեղագրական տեղեկություններ, լեռների անուններն ու նրանց բարձրությունները: Քարտեզի ձախ կողմում է նշված չարաբաստիկ Կամախի կիրճը, որի ուղղահայաց ժայռերի բարձունքներից թուրք ասկարները պարտադրված աքսորի ճանապարհը բռնած հազարավոր հայերի նետեցին Եփրատի արագահոս ավազանների մեջ:




6.23. Երզնկայի կամ Եկեղեաց գաւառ. Կահիրե, 1974 թ.


Թեհրանում Դերիկ Աբրահամեան անունով մի գծագրիչ 1968 թ. պատրաստեց Իրանի մեծաքանակ հայ բնակչություն ունեցող շրջանների քարտեզները, որոնք նա գծել էր գծագրական կիսաթափանցիկ թղթի վրա: Երկու քարտեզներն էլ մանրամասն ու տեղագրական աշխատանքներ են, որոնք պարունակում են նաև մանրակրկիտ ու ճշգրիտ տեղեկություններ գյուղերի ու նրանց անվանումների վերաբերյալ⁴³:

Առաջինը Իրանի հյուսիսարևմտյան շրջանի հայաբնակ շրջանների քարտեզն է, որոնք են Ուրմիան, Ղարադաղը և Ատրպատականը, որը ներառում է Թափրիզը, Սալմաստն ու Մակուն, քարտեզում՝ «Մարու» (տե՛ս քարտեզ 6.24):



6.24. Հյուսիսարևմտյան Իրանի հայաբնակ շրջանները. Թեհրան, 1968 թ.





6.25. Կենտրոնական Իրանի հայաբնակ շրջանները. Թեհրան, 1968 թ.

Դ. Աբրահամեանի հաջորդ քարտեզը ցույց է տալիս Կենտրոնական Իրանի՝ Սպահանի շրջաններից հատվածներ, որոնք պատկերում են Թեհրանը, Սպահանը, Արաղի չորս մահալները (գավառները)՝ Լարաղանը, Գորգանը, Չհար Մահալ Բախթիարի և Փերիալի շրջանները: 17-րդ դարասկզբին Նախիջևանից ու Սյունիքից պարսից Շահ Աբբասի կողմից բռնագաղթեցված հայ բնակչությունը հիմնականում ապաստանել էր այս շրջաններում, որտեղ նրանք մնացին մինչև 20-րդ դարի վերջին տասնամյակները: Քարտեզն ունի 100x90 սմ չափեր՝ գծված 1:250 000 աստիճանաչափով (տես քարտեզ 6.25):

Վերևում թվարկվածները մինչև 1946 թվականը հայաշատ շրջաններ էին, սակայն առաջին հերթին ներգաղթի և ապա ժողովրդի՝ աստիճանաբար դեպի մեծ քաղաքներ տեղափոխվելու պատճառով մինչև 1970-ական թվականները համարյա թե հայաթափվեցին՝ բացառությամբ Սպահանի և Ուրմիայի: Դրանից հետո էլ հայության մեծ մասն արտագաղթեց Ամերիկա և մասամբ էլ՝ Հայաստան: Հետևաբար այսօր Իրանի հայ բնակչության քանակը նվազել է ու մոտ 250 000–300 000-ից հասել է 50 000-ի:

* * *

Ինչպես վերը նշվել էր, խորհրդայնացումից հետո՝ սկսած 1923 թվականից, Հայաստանում հրատարակվեցին մեծ թվով քարտեզներ և ապա ատլասներ: Սակայն սրանց զգալի մասը ոտատեր են: Անկախությունից հետո քարտեզագրական կենտրոններ հիմնադրվեցին կամ վերականգնվեցին Երևանում, որոնք սկսեցին պատրաստել ու հրատարակել քարտեզներ: Սրանցից են պետական Գեոգեդիայի և քարտեզագրության կենտրոնը (պետական ոչ առևտրային կազմակերպություն), ինչպես նաև մասնավոր հրատարակչությունները, ինչպիսիք են «Կոլլաժը», «Փրինթինֆոն», «Զանգակը», «Տիգրան Մեծը» և անգլիական «Մաքսիլլանը»:

Հրատարակվել են Հայաստանի պատմական ու ներկա քարտեզների ատլասներ՝ Բաբկեն Հարությունյանի խմբագրությամբ, ինչպես նաև մեծադիր երկհատորանոց Հայաստանի ատլասը: Հրատարակվել են նաև տարածաշրջանի և աշխարհի վերաբերյալ բազմաթիվ քարտեզներ ու ատլասներ, որոնք հասանելի են Երևանի գրախանութներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԵՆ

- Աբեղեան Արտաշես, *Աշխարհագրական դպրոցական ստլաս*, Թիֆլիս, 1917:
- Ազոնց Հայր Ստեփանոս, *Հասարակախօսութիւն աշխարհագրութեան*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1817:
- Ալիշան Հայր Ղեւոնդ, *Քաղաքական աշխարհագրութիւն, նկարացոյց պատկերօք*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1853–1855:
- Այվազյան Հովհաննէս, գլխ. խմբագիր, *Հայ գրատպոյթուն և գրքարվեստ*, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2015:
- *Ատլաս աշխարհացոյց պատկերաց ըստ արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ և Ռուսաց*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1849:
- *Ատլաս փոքրադիր*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1862:
- Աւագեան Հայր Աստուածատուր, *Ատլաս կամ աշխարհացոյց տախտակք ի պէտս ազգային դպրոցաց*, Վիեննա, Մխիթարեան միաբանութիւն, 1860:
- Գալչյան Ռուբեն, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզագրութեան մեջ*, Երևան, Փրինթինֆո և Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2007:
- Գալչյան Ռուբեն, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրութեան մեջ*, Երևան, Փրինթինֆո, 2005:
- Գալչյան Ռուբեն, *Հորինված պատմություն*, Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2010, Երևան, Փրինթինֆո, 2010:
- Գրիգորեան Մեսրոպ, *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին*, Վիեննա, Մխիթարեան միաբանութիւն, 1969:
- Դավթյան Հայկ, *Հայ գիրքը 1801–1850 թվականներին*, Երևան, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1967:
- Զարբհանալեան Գարեգին, *Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագրութեան գիտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեան*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1883:
- Էփրիկեան Հայր Սուքիաս, *Գրպանի ստլաս*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1901:
- *Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի Թրիեստ, Վիեննա, Պլովդի (Ֆիլիպէ), Գահիրէ եւ Պեյրոս*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1972:
- Ինճիճեան Ղուկաս, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի*, հատոր 4, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1804:
- Խաչատրյան Մկրտիչ, «Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզը», *Բնագիտութեան և տեխնիկայի պատմությունը Հայաստանում*, հատոր 6, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1976:
- Խաչկունց Դաիթ, *Նոր պատկերագարդ աշխարհագրութիւն բազմաթիւ քարտեզներով*, Կոստանդնուպոլիս, Պալենց գրատուն, 1904:
- Կարապետյան Սամվել, *Թիֆլիսի քաղաքագրութիւնները*, Երևան, ՀՃՈՒԿ, հատոր Ե, 2003:
- Հոֆմայսթեր Ֆոն, *Հայաստանի մէջէն Քսենտոփոնի արշաւանքը մինչեւ Սեւ ծով*, Կոստանդնուպոլիս, Հ. Կոշկարեանի Կիւբեմպերկ մատենաշարի հատոր 17, 1913:

- Ճեմձեմեան Սահակ, *Քարտիզագրութեան դպրոց մը Ս. Ղազարոս մէջ, ԺԸ Դարուն*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1981:
- Մանիսաձեան Յ. Յ., *Ընդարձակ պատկերագարդ աշխարհագրութիւն: Կոստանդնուպոլիս, Յ. Մատթէոսեան, 1902:*
- Մարտիայան Հարություն, *Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1, Յեղասպանության հիշողությունները և Ղարաբաղյան շարժումը*, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009:
- Միքայելյան Վարդգես, *Հայ-իտալական առնչությունները. ջենովական փաստաթղթերը և արխիվները դրինսահայության մասին*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
- Ոսկանյան Նինել և ուրիշներ, *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1988:
- Ոսկանյան Նինել և ուրիշներ, *Հայ գիրքը 1851-1900 թվականներին*, Երևան, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն, 1999:
- Չամչեանց Հայր Միքայել, *Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տ. 1784*, Երեք հատորով, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1784, 1785, 1786:
- Պիպեռձեան Ա., *Գրպանի նորագոյն ատլաս, քաղաքական, վիճակագրական եւ առեւտրական*, Կոստանդնուպոլիս, Հայրենիք կազմատուն և Եփրատ, 1914:
- Պոյաձեան, *Համառօտ դասագիրք աշխարհագրութեան հարցմանց եւ պատահանով ի պետո դպրոցաց*, Կոստանդնուպոլիս, 1876:
- Սահակեան Հայր Մեսրոպ, *Առձեռն ատլաս*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1910:
- Սարգսյան Դ. և ուրիշներ, *Հայ գիրքը 1901-1920 թվականներին*, Երևան, ՀՀ մշակույթի և երիտասարդության ու սպորտի հարցերի նախարարություն, 2007:
- Սարգսեան Հայր Ներսէս, *Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1864:
- Սեբաստացի Հայր Մխիթար, *Բառգիրք հայկազեան լեզուի*, հատոր 2, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1769:
- Ստեփանյան Հովհաննէս Ս., *Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ, 1957:
- Տէր-Յակոբեան Աւետիք, *Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի*, Թիֆլիս, Էսպերանտո տպ., 1914:
- Փալազաշեան Յ. Գ., *Տեղագրութիւն Կոստանդնուպոլսոյ եւ իւր շրջակայք, յատկազգիժ պատկերով Վուսիորի*, Կոստանդնուպոլիս, 1887:
- Քաջունի Հայր Մանուել, *Աշխարհագրութեան դասագիրք*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1857:

ԱՆԳԼԵՐԵՆ

- Galichian, Rouben. *Clash of Histories in the South Caucasus*. London: Bennett and Bloom, 2012.
- Galichian, Rouben. *A Glance into the History of Armenia through Cartographic Records*. London: Bennett & Bloom, 2015.
- Ibn-Battuta: *Rehle*, 2 volumes. Translation into Farsi and annotated by Muhammad-Ali Movahhed. Tehran: Sepehr-Naghsh, 1990.

- Karanian, Matthew. *Historic Armenia after 100 Years*. Karanian: Pasadena, 2015.
- Khanzadian, Zadig. *Rapport sur l'unité géographique de l'Arménie. Atlas historique*. Paris: G. Rey Robert, 1920.
- Khanzadian, Zadig. *Armenia– Atlas Historique*. Paris: 1960.
- Lynch, H.F.B. *Armenia. Travels and Studies*. London: Longmans, Green & Co., 1901. Volumes 1 and 2.
- Marco Polo, *The Travels of Marco Polo*, Translated and edited Willaim Marsden. NY: Doubleday & Co., 1948.
- Nersessian, Vrej. *Catalogue of Early Armenian Books: 1512–1850*. London: British Library, 1980.
- Petrus Apianus. *Cosmographia*. Antwerpiae: 1524–1544:
- Shirley, Rodney W. *The Mapping of the World: Early Printed World Maps 1472–1799*. London: Holland Press, 1984.
- Suny, Ronald. *The Making of the Georgian Nation*. Bloomington: Univercity of Indiana Press, 1988.
- Uluhogian, Gabriella: *Un'antica mappa dell'Armenia*. Ravenna: Longo Editore, 2000 .
- Whiston, George and William. *Moses Chorenensis Historiae Armenicae Libri III, Epitome Geographiae*. London: Whiston publications, 1736.

ՌՌՒՍԵՐԵՆ

- Егише Вартапет: *Борьба христианства учением Зороастровым в пятом столетии, в Армении*. Пер. с арм. П. Шамшиева. Тифлис: 1853 г.
- Худабашев, Александр. *Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях*. Санкт–Петербург: Тип. II–го Отделения С.Е.И.В. Канцелярии, 1859 г.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տե՛ս Ռուբեն Գալչյանի կայքը՝ www.roubengalihcian.com.
- ² Հովհաննես Ստեփանյան, *Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ, 1957: Հ. Սահակ Ճեմճեմեան, *Քարտիզագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ, ԺԸ դարուն*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1981: Նինել Ոսկանյան և ուրիշներ, *Հայ գիրքը 1512–1800 թվականներին*, Երևան, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1988: Հայկ Դավթյան, *Հայ գիրքը 1801–1850 թվականներին*, Երևան, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1967: Գարեգին Զարբեհանալեան, *Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագրութեան գիտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեան*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1883: Ն. Ոսկանյան և ուրիշներ, *Հայ գիրքը 1851–1900 թվականներին*, Երևան, ՀՀ մշակույթի, երտասարդության հարցերի և սպորտի նախարարություն, 1999: Vrej Nersessian՝ *Catalogue of Early Armenian Books: 1512–1850*. London, British Library, 1980:
- ³ Երևանի ՀՅԳ–ի թանգարանում պահպանվում են 1920 թվականի Հայաստանի Հանրապետության ու 11–րդ կարմիր բանակի ռազմական դիրքերի մեծ թվով քարտեզներ:
- ⁴ Տե՛ս Յարութիւն Մարութեան, «Քարտեզը որպէս ինքնութեան խորհրդանիշ», *Հանդէս Անսորեայ հայագիտական ուսումնասիրութեթ*, Վիեննա, 2006, էջ 443: Տե՛ս նաև Հարություն Մարության, *Հայ ինքնութեան պատկերագրությունը: Հատոր 1. Յեղասպանութեան հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը*, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 42:
- ⁵ Ռուբեն Գալչյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզագրության մեջ*, Երևան, Փրինթինֆո և Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2007, էջ 60–65:
- ⁶ George and William Whiston. *Moses Chorenensis Historiae Armenicae Libri III, Epitome Geographiae*. London: 1736. Ռուբեն Գալչյան, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ*, Երևան, Փրինթինֆո, 2005, էջեր 20, 202, 203:
- ⁷ Ռուբեն Գալչյան, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ*, Երևան, Փրինթինֆո, 2005, էջ 20:
- ⁸ Rouben Galichian. “A Medieval Armenian T–O Map”. *Imago Mundi*, 2008, Vol. 60:1
- ⁹ Կաֆան ներկայիս Ղրիմի թերակղզում Թեոդոսիա քաղաքն է: Սարայը մոնղոլների հիմնած մայրաքաղաքներից մեկն է: Սրանք էին հին Սարայ–Բաթուն (1240 թ.) և կամ Սարայ–Բերքեն (1260 թ.), որոնք Կասպից ծովի հյուսիս–արևմուտքում էին՝ ներկա Աստրախանի մոտակայքում:
- ¹⁰ Զայթոն անվանումը արաբները տալիս էին Չինաստանի Քուանժու կամ Ցեու–Թոնգ քաղաքին, որը նրանց և պարսիկների համար կարևոր առևտրական կենտրոն էր՝ տեղակայված Ֆորմոզայի հակադիր ափին: 14–րդ դ. Արաբ ճանապարհորդ Իբն–Բաթուն (1304–1368/9) պատմում է, որ Զայթոնի նավահանգիստը կարող էր տեղ ապահովել 100 չինական առևտրանավերի համար: Իսկ Կանսայը նա ներկայացնում է որպես Զայթոնից ոչ հեռու մեկ այլ հսկա նավահանգիստ: 13–րդ դարում Մարկո Պոլոն պատմել է Զայթոնի և Կանսայի կարևորության մասին:
- ¹¹ Չինական երկու քաղաքների անունները հիշատակվում են քիչ ավելի ուշ՝ 1375 թ., պատրաստված Աբրահամ Կրեւկի *Կաստալան ատլասի* մեջ՝ որպես *Ciutat de Zaytun* և *Ciutat de Cansay*, ինչպես նաև 1460 թ. Ֆոա Մաուրոյի աշխարհացոյց քարտեզում: Սակայն սրանք երկուսն էլ T–O քարտեզներ չէին, այլ ծովային պորտոլաններ:
- ¹² Մկրտիչ Խաչատրյան, «Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզ», *Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1976, հատոր 6, էջ 213–239:
- ¹³ *Հայկական սովետական հանրագիտարան*, Երևան, 1978, հատոր 4, էջ 170:
- ¹⁴ Վարդգես Միքայելյան, *Հայ–իտալական առնչությունները. ջենովական փաստաթղթերը և արխիվները դրինսահայության մասին*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 21–32:
- ¹⁵ Ռուբեն Գալչյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզագրության մեջ*, Երևան, Փրինթինֆո և Լոնդոն, Կոմիտաս հրատարակչություն, 2007, էջ 146–152: Նաև Petrus Apianus, *Cosmographia*, Antwerpiae: 1524–1544:
- ¹⁶ Ռուբեն Գալչյան, *Կովկասից հարավ երկրները....*, 2007, էջեր 22, 23: Նաև Ambrosius Aurelius Theodosius Macrobius. *Commentary on the Dream of Scipio*. Translated with an Introduction and Notes by William Harris Stahl, New York, 1952.
- ¹⁷ Gabriella Uluhogian, *Un’antica mappa dell’Armenia*, Ravenna, Longo Editore, 2000.

- 18 Մեսրոպ Գրիգորեան, *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին*, Վիեննա, Մխիթարեան միաբանութիւն, 969, էջ 14:
- 19 Անդ, էջ 21:
- 20 Անդ, էջ 22, 23:
- 21 Rodney W. Shirley. *The Mapping of the World: Early Printed World Maps 1472–1799*, London, Holland Press, 1984, 560–593.
- 22 Նինել Ոսկանյան և ուրիշներ, *Հայ գիրքը 1512–1800 թվականներին*, էջ 122:
- 23 Հ. Սահակ Ճեմճեմեան, *Քարտիզագրութեան դպրոց մը Ս. Ղազարոս մէջ, ԺԸ դարուն*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1981, էջ 76–80:
- 24 Հովհաննես Այվազյան, գլխ. խմբագիր, *Հայ գրատպոյթուն և գրքարվեստ*, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2015 թ., էջեր 752–753, 1018–1019:
- 25 Մխիթար Սեբաստացի, *Բառգիրք հայկազեան լեզուի*, հատոր 2, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1769:
- 26 Ստեփանոս Ազոնց, *Հասարակախօսութիւն աշխարհագրութեան*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1817:
- 27 Միքայել Չամչեանց, *Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տ. 1784*, Երեք հատորով, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1784, 1785, 1786:
- 28 Ղուկաս Ինճիճեան, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի*, հատոր 4, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1804:
- 28 Գարեգին Զարբհանալեան, *Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագրութեան գիտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեան*, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, 1883, էջ 39:
- 30 *Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի Թրիեստ, Վիեննա, Պլովդի (Ֆիլիպէ), Գահիրէ եւ Պեյրոս*, Վիեննա. Մխիթարեան տպարան, 1972:
- 31 Գարեգին Զարբհանալեան, նշված աշխ., էջ 62:
- 32 Ռուբեն Գալչյան, *Հորինված պատմություն*, Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2010 և Երևան, Փրինթինֆո, 2010, էջեր 177, 178.
- 33 Հովհաննես Ստեփանյան, նշված աշխ., էջ 49:
- 34 Բաքվի հայության պատմության մասնագետ Գևորգ Ա. Ստեփանյանը հաստատում է, որ ինքն էլ անկարող է եղել գտնելու Հովհաննես Ս. Ստեփանյանի նշած՝ Բաքվում 1912 թ. հրատարակված հայերեն կամ ռուսերեն քարտեզները:
- 35 Սամվել Կարապետյան, *Թիֆլիսի քաղաքագրությունը*, Երևան, ՀՃՈՒԿ, 2003:
- 36 Ronald Suny, *The Making of the Georgian Nation*, Bloomington, Indiana University Press, 1988. 350.
- 37 Rouben Galichian, *Clash of Histories in the South Caucasus*, London, Bennett and Bloom, 2012. 77, 106:
- 38 Վերը նշված երկու ձեռագիր քարտեզները պահպանվում են Հայաստանի պետական արխիվում՝ Դադեանի անձնական թղթերի մեջ, թիվ 319.1.79, էջեր 19, 84:
- 39 Հեղինակի մեծ հայրը և նրա քրոջ ամուսինը (Լևոն Գալճեան և Հայկ Կօսոյեան) Վանի գաղաքամեջի ինքնապաշտպանության խորհրդի անդամներից են եղել: Դիմադրությունն անհրաժեշտ էր, քանի որ օսմանյան բանակը քաղաքը գրավելուց հետո իրագործելու էր համատարած կոտորած: Ինքնապաշտպանության շնորհիվ էր, որ մեծ թվով վանեցիներ ցեղասպանությունից փրկվեցին: Ամերիկացի հայ գեղանկարիչ Արշիլ Գորկին, ում իրական անունն էր Ոստանիկ Ադոյան (1904–1948 թթ.) այն պատանիներից մեկն էր, որը դիրքերում կռվող մարդկանց ուտելիք ու փամփուշտներ էր մատակարարում:
- 40 Matthew Karanian, *Historic Armenia After 100 Years*, Karanian, Pasadena, 2015.
- 41 Zadig Khanzadian, *Rapport sur l'unité géographique de l'Arménie. Atlas historique*, Paris, G. Rey Robert, 1920.
- 42 Այս քարտեզը ընդգրկված է Խանզադյանի *Armania. Atlas Historique* (1960) աշխատության մեջ:
- 43 Վերջին երկու քարտեզները հեղինակը պատահմամբ գտել և գնել է մի գրավաճառից 1990–ականներին Երևանի Վերնիսաժից:

ԱՆՎԱՆԱՅԱՆԿ

- Ա. Դո (Մարտիրոսեան Յովհաննէս) — 9, 121
Աբեղեան Արտաշէս — 9, 113, 114, 116, 118, 121, 124, 125, 155
Աբրահամեան Աբրահամ — 123
Աբրահամեան Դերիկ — 150, 152
Ագաթանգեղոս — 24
Ադրբեջան / Ազերբայջան — 120, 129
Ազոնց, չ. Ստեփաննոս Գիսկէր — 40, 155, 159
Ազով / Ազախ — 17, 49
Ազերբայջան, տէն նաև Ադրբեջան — 129
Աթենք — 52
Աճեմի տերովթին / Իրան — 51
Ալանաց աշխարհ — 118
Ալաշկերտ — 119
Ալբանիա, տէն նաև Ալբանիք — 58, 108
Ալեսսանդրի Մ. — 52, 53
Ալեքսանդր Մեծ — 118, 136
Ալեքսանդրապոլ / Գյումրի — 95
Ալեքսանդրիա / Ալեքսանդրիա — 9, 16, 21, 135
Ալէքսանեան Զաքարիա — 34,
Ալիշան չ. Ղևոնդ — 38 63, 69, 72, 76, 155
Ալլասկա — 29, 39, 45, 46
Ալիսեան Ս. — 106
Աղանեան հրատ. — 104
Աղեքսանդրացի Պապոս — 14
Աղձնիք — 115
Աղուանք / Աղվանք — 8, 79
Ամասիա — 106
Ամենայն հայոց կաթողիկոս — 23, 24, 38, 93, 133
Ամերիկա / Ամերիկայի Միացյալ Նահանգներ — 5, 50, 73, 74, 92, 141, 146, 153
Ամատերգամ — 5, 7, 26—28, 30, 34, 35 38
Այտընեան չ. Արսէն — 69
Այրարատ — 8, 76—78, 104, 115
Անանիա Շիրակացի — 11, 14, 26, 41, 62
Անատոլիա / Անադոլու — 43, 49, 53, 64, 141
Անգլիա — 71
Անդրկովկաս — 99, 103
Անթիլիաս — 10, 146
Անի — 45
Աշոտեան Ն. — 9, 122, 123, 146
Ապիանոս Պետրոս — 7, 18—20, 22
Ասիա — 9, 48, 57, 61, 63, 71, 72, 85, 87, 92, 109, 110, 124, 127
Ասիական Թուրքիա — 10, 59, 109, 148
Ասիրեան Սաթենիկ — 146
Ասորեստան — 104, 118
Ասորախան — 158
Աստան — 21
Ավստրալիա / Աւստրալիա — 27, 29, 39, 46, 64, 67, 71, 109, 124
Ավստրիա — 71, 85,
Ավստրո—Հունգարիա — 85, 109
Ատրոպատեն — 118
Ատրպատական — 9, 41, 78, 104, 118—120, 129—132, 135, 142, 150, 156, 172
Արաբական անապատ — 45
Արաբիա — 38, 59, 106, 109
Արաբկիր — 128
Արագած — 25
Արակեանց Մ. — 103
Արամ — 44
Արարատ — 24, 46, 62
Արաք — 152
Արաքս — 41, 95, 104, 134, 146, 164
Արղաբիլ — 141
Արճէշ / Արջէշ — 33
Արտեմիա — 29
Արցախ / Ղարաբաղ — 23, 78, 94, 115, 128, 142, 155, 158
Արուսեակ — 29
Արևելեան Կիլիկիա — 83
Արևելյան Հայաստան — 78, 103, 106, 116, 133
Արևմտահայաստան — 12, 45, 120, 122, 128
Աագեան չ. Աստուածատուր — 8, 70, 71, 155
Ափրիկէ / Աֆրիկա — 7, 16, 47, 48, 51, 61, 63, 71, 72, 74, 85, 87, 92, 109, 124
Բաբերդ / Բայբուրթ — 73, 106
Բագել — 89, 122
Բալկանյան / Պաքանեան երկրներ — 9, 85, 87, 108, 109
Բաղբաղ — 116, 140

Բաղէշ / Բիթլիս — 106
 Բայազետ — 95
 Բասմաջ[ճ]եան Կարապետ — 9, 115
 Բասրա — 10, 141, 142, 145
 Բարակոսայ — 50
 Բելգիա / Բեղգիա — 71
 Բաքոս — 29
 Բաքու — 8, 10, 33, 99
 Բաքուքա — 10, 140
 Բեգլարյան Անահիտ — 9, 136
 Բեդոն — 29
 Բեյրութ / Պեյրութ — 10, 155, 159
 Բեռլին — 8, 72, 79, 113
 Բերկրի — 33
 Բեչու — 50
 Բիթլիս — 52, 95, 106, 121
 Բիխով Ա. Ի. — 112, 121
 Բլաու Ուիլլեմ — 30
 Բյուզանդիոն — 16, 82, 127
 Բոզնիա — 58
 Բորեա — 29
 Բորչալու — 8, 86
 Բոլոնիա — 23, 25
 Բոստոն — 9, 10, 73, 122, 123, 141, 142
 Բոսփոր / Բոսֆոր — 17, 117, 147
 Բրիտանական գրադարան — 10
 Բրիտանական կղզիք — 8, 74, 75, 87
 Բրիտանիա — 33
 Բրուտեան Վ. Գ. — 9, 135
 Բրուսիա — 71
 Բուաստ Ժան — 30
 Բուլանըիս — 8, 82
 Բուլղարիա — 16, 49, 53, 58, 108
 Բօրեաս — 29

 Գահիրէ / Կահիրե — 93
 Գալիլե — 38
 Գալչյան (Գալիչյան) Ռուբեն — 6, 10, 13, 155, 158, 159
 Գաղղիա — 49, 71, 72, 85
 Գանձակ / Գյանջա — 8, 81,
 Գեղարքունիք — 8, 97
 Գերմանիա — 16, 25, 49, 71, 85, 109, 118
 Գիւմրի — 95
 Գոլթն — 33
 Գորգան — 152
 Գորի — 33
 Գրիգոր Լուսավորիչ — 24, 25
 Գրիգորեան Մեսրոպ — 155, 159
 Գրինուիչ — 33
 Գուգարք — 115
 Գյանջա, տես Գանձակ — 81

 Դաղեան Խաչատուր Վարդապետ — 129, 131, 159
 Դաւմատիա — 58
 Դանիա — 21
 Դարդանել — 17
 Դե Ֆեր Նիկոլաս — 28
 Դեսարոյտ — 10, 146
 Դերսիմ — 149
 Դիարբեքիր — 121
 Դիատերզիկ Գ. — 104, 112, 118
 Դոն / Տանայիս — 17

 Եգեան ծով — 106
 Եգիպտոս — 16, 38, 47, 51, 59, 94
 Եթովպիա / Հաբաշ — 16, 47
 Ելիզավետպոլ — 81
 Եղիշէ — 128
 «Երան» հրատ. — 9, 122, 123
 Երանելի կղզիներ — 33
 Երզնկա — 10, 106, 135, 149
 Երկայնեան, Ա. — 95
 Երկիր Աւետեաց — 38, 39
 Եվրոպա / Երոպա — 12, 16, 49, 57, 58, 72, 85, 87, 92, 109, 124, 125
 Եվրոպական Թուրքիա — 109
 Եվրոպական Ռուսաստան — 124
 Երուսաղեմ — 16, 17, 33, 34
 Երեւակ / Սաստուն — 76
 Երևան — 6, 9—11, 13, 26, 52, 69, 79, 90, 95—97, 121, 136, 139, 145, 153, 155, 156, 158, 159
 Եփրատ — 104, 149
 Եւրոկիա / Թոկլաթ — 106

- «Ջանգակ» հրատ. — 153
 Զայթոն — 17, 158
 Զարբհանալեան Գարեգին — 11, 155
 Զարիշատ — 73
 Զաքարի չ. — 38
 Զեյթոն — 83
 Զուպերիա — 85, 109
 Զուքքի Ջիուզեպպե — 41
- Էգեյան ծով — 15, 17, 45
 Էոլոս — 29
 Էնտագեան չ. Եդիա — 45, 46, 51
 Էջմիածին — 9, 26, 52, 95, 134
 Էրզրում — 9, 52, 95, 106, 119—121, 149
 Էփրիկեան, չ. Սուքիաս — 85, 155
- Թաթարստան — 49, 53, 103
 Թալիաթ փաշա — 149
 Թաղ — 139
 Թավրիզ — 10, 33, 131, 139—143, 145, 150
 Թեհլիրեան Սողոմոն — 149
 Թեհրան — 10, 46, 150, 152 146, 150, 152
 Թէտիս — 29
 Թիֆլիս — 8, 9, 12, 75, 79, 80—83, 86, 88,
 95—98, 100, 103, 104, 111—116, 110,
 121, 123—125, 127, 128, 155, 156, 159
 Թրակիա — 53
 Թումանեան Աշոտ — 98
- Ժնև — 9, 89, 90, 123, 135
- Իբն Բաթուտա — 158
 Ինճիճեան Ղուկաս — 51
 Իսլանդիա — 49
 Իդանտա — 49, 109
 Իսպանիա — 48, 49, 71
 Իտալիա — 23, 26, 49, 71, 76, 85, 109
 Իրան — 10, 26, 45, 51, 70, 94, 96, 100, 104,
 106, 129, 135, 150, 152, 153
 Իրաք — 140, 141
- Լալ չ. Դ. — 61
 Լալայեան Երանդ — 97
 Լայդեն — 34
- Լեհաստան — 49, 53
 Լէօ (Առաքել Բաբախանեան) — 8, 95
 Լիբիա — 47
 Լինչ չ. Ֆ. Բ. — 9, 116, 118
 Լոմպարտիա — 67
 Լոնդոն — 7, 8, 10, 14, 28, 30, 33, 34, 116,
 155, 158, 159
 Լոռի — 136
 Լուիսիա — 50
 Լուսաբեր / Վեներա — 31
 Լուանթագ / Յուպիտեր — 18, 31
- Խան-Ազատ Ռ. — 104
 Խանզադեան Զատիկ — 10, 34, 147, 148, 159
 Խանսայ / Կանսայ՝ — 17, 158
 Խաչատուրեան չ. Իգնատոս — 28
 Խաչատրյան Մկրտիչ — 17, 155, 158
 Խաչերեան Հրայր Բագէ — 145
 Խաչկոնց Դաիթ — 8, 9, 91, 92, 155
 Խարաճեան Յակոբ — 9, 126
 Խարբերդ / Խարպուտ — 33, 41, 94, 106, 121,
 128
 Խերանեան Մարտիրոս — 9, 10, 13, 138—146
 Խլորիա — 29
 Խորազմ — 17
 Խորհրդային Հայաստան — 12
 Խորհրդային միութիւն — 118
 Խրիմ / Ղրիմ — 8, 57
 Խրիմեան Հայրիկ — 93, 133
 Խուզաբաշև Ա. — 128
- Մովսէս — 115
- Կահիրե — 93, 149
 Կալիֆոռնիա — 50
 Կամախ — 41, 149
 Կանադա — 10, 45, 50, 149
 Կայդեր Ֆրանց Ա. — 55
 Կանարյան կղզիներ — 33
 Կանսայ՝, տե՛ս Խանսայ — 17, 158
 Կառոլինա — 50
 Կասպից ծով — 34, 36, 38, 39, 45, 79, 88, 102,
 104, 106, 158
 Կարապետյան Սամվել — 155, 159

- Կարաբիլիսա — 86
 Կարին — 106
 Կարմիր ծով — 16
 Կարս — 95, 106
 Կաֆա, Թեոդոսիա / Ֆեոդոսիա — 7, 14, 15, 17, 158
 Կենտրոնական Իրան — 10, 152
 Կիկերոն — 21
 Կիլիկիա — 7, 8, 9, 19, 20, 22, 76, 77, 83, 89, 111, 114, 135
 Կիլիկիայի հայկական թագավորություն — 62, 111, 135
 Կիպերոս Հայնրիխ — 72
 Կիպրոս — 15, 16, 102
 Կիրովաբադ / Գյանջա — 81
 Կոզմա Հնդկաշու — 14
 «Կոլլաժ» հրատ. — 153
 Կոյանա — 50
 Կոժկարեան չ. — 105
 Կոստանդնուպոլիս — 6—10, 23, 24, 34, 38, 43, 46, 52, 53, 73—75, 87, 91, 92, 94, 102, 105, 16, 108—110, 115, 136, 147, 148, 155, 156
 Կովկաս — 85, 103, 112, 124
 Կովկասյան լեռներ — 88, 94
 Կորճալք — 115
 Կրետե կղզի — 45
 Կուր — 41, 95, 104, 146

 Հաբաշ / Եթովպիա — 16, 47
 Հայաստան — 5—14, 23, 33, 41, 45, 52, 61—64, 69—72, 74—76, 78, 80, 86, 88, 89, 93—95, 98, 100—108, 111, 113—118, 120—122, 126—129, 133—147, 153, 155, 1058, 159
 Հայաստանի ազգային արխիվ — 10, 131, 133, 134
 Հայաստանի ազգային գրադարան — 5, 10, 34, 36
 Հայաստանի աշխարհները / նահանգները — 75, 128, 147
 Հայաստանի պատմության թանգարան — 5, 10, 104, 127, 133, 138, 139, 147
 Հայկ նահապետ — 44
 Հայկական լեռնաշխարհ — 12, 41

 Հայկական թանգարան — 5, 10, 142
 Հարավային Ամերիկա — 12, 50, 61, 63, 71, 72, 74, 85, 87, 109, 124
 Հարավային բևեռ — 30
 Հարավային Կովկաս — 112
 Հարրիս Ջոն — 28
 Հարթ — 8, 82
 Հարովիտյան Բաբգեն — 153
 Հայրենիք կազմատուն — 106, 109, 156
 Հելուեաիա — 56, 67
 Հերա — 29
 Հին Հայաստան — 102, 104, 115, 118, 128
 Հյուսիսային / Հիսիսային Ամերիկա — 8, 27, 50, 61, 63, 71, 72, 74, 85, 87, 109
 Հյուսիսային Աֆրիկա — 47
 Հյուսիսային Կովկաս — 135
 Հնդկաստան — 17, 43, 71
 Հոլանդիա — 26, 49, 64, 85. 109
 Հոնդուրա Յակոբոս — 28
 Հոֆմայսթեր Է. — 105
 Հոտմ — 21, 76
 Հրատ / Մարա — 76
 Հունաստան / Յունաստան — 42, 52, 58, 71, 74, 108
 Հունգարիա — 53, 85, 109

 Ղարաբադ — 155, 158
 Ղարաբադ — 150
 Ղարաղան — 152
 Ղրիմ / Խրիմ — 8, 14, 45, 57, 155, 158

 Ճազայիր / Ալժիր — 47
 Ճէնտէրէճեան Ա. — 102

 Մաճարք — 49
 Մալաթիա — 4, 106
 Մակրոբիոս, Ամբրոզիոս — 18, 21
 Մակու / Մաքու — 9, 129, 130, 150
 Մայեր Կուրտ — 118
 Մանազկերտ / Մալազկերտ — 82, 95
 Մանիսաճեան չ. Պ.— 87, 89, 155
 Մարաթոն — 52
 Մարաղա — 33
 Մարաստան — 108, 118, 127

- Մարիանեան Կարապէտ — 98
 Մարիմեան Պ. — 90, 97
 Մարկո Պոլո — 158
 Մարմարա ծով — 8, 17, 23, 43, 55
 Մարս / չրատ — 18, 31
 Մարսիլի, կոմս Լորովիկո — 23, 26
 Մատենդարան — 5, 7, 10, 15, 18, 34, 81
 «Մաքմիլլան» հրատ. — 153
 Մելիք-Թանգեան արք. — 142
 Մեծ Բրիտանիա — 109
 Մեծ չայք — 12, 14, 33, 41, 49, 59, 62, 74, 84, 90, 93, 95, 104, 115, 120, 129
 Մեսիսիև Կ. Ի.— 80
 Մեսրոպ Գէորգ — 102
 Մերիլընտ — 50
 Մերկատոր Ռոմոլդ — 30
 Մերկուրի / Փայլածու — 18, 31
 Մեքսիկո — 50
 Մէրէոս — 21
 Միջագետք — 93, 94, 104, 109, 118, 127
 Միջերկրական ծով — 16, 141, 146
 Միրզոյեանց Վարդան — 81, 86
 Միքայելյան Վարդգէս — 155, 158
 Մխիթար Սեբաստացի — 38, 39, 159
 Մխիթարեան միաբանութիւն — 34, 55,
 Մխիթարեաններ, Վենետիկ — 34, 38, 46, 52, 55, 94, 103, 155, 159,
 Մխիթարեաններ, Վիեննա — 5, 10, 12, 60, 64, 69, 70, 72, 135, 155, 159,
 Մխիթարեանների փողոց — 55
 Մշակ — 80
 Մոզոլկ — 88
 Մոկք / Մոկս — 115
 Մոլդովա — 49, 58
 Մոնթիթ Ջելմզ — 73
 Մոնտենեգրո / Չեռնոգորիա — 108
 Մոսկովյան Ռուսաստան — 49, 53
 Մովսէս Խորենացի — 11
 Մորդեն Ռոբերտ — 28
 Մսր / Եգիպտոս — 16
 Մովթաֆեան Արմէն Գլոտ — 10
 Մուշ — 8, 90, 106
 Յովհաննիսեան Մատթէոս — 26, 28
 Յունաստան, տէն նաև Հունաստան — 71, 74
 Յուպիտեր / Լուանթագ — 18, 31
 Նախագահ Ուիլսոն — 140, 141
 Նախիջևան — 45, 95—97, 134, 152
 Նառանյան չ. — 149
 Նեղոս / Նիլ — 16, 17, 47
 Ներսեայան Վրեժ — 156
 Ներսիսեան դպրոց — 112
 Ներքին Բագառիճ — 149
 Նյու Յորք — 5, 9, 73, 126
 Նոյյան տապան — 24, 45
 Նոր Բայազեդ — 97
 Նոր Գլինեա — 48
 Նոր Եորկ — 50
 Նոր Ինկիլտեոա — 50
 Նոր Հոլանդիա — 64
 Նոր Զուղա — 26, 32, 34, 45
 Նոր Սապնիա — 50
 Նորուելիա — 49, 85, 109
 Նուպիա — 47
 Նուրիջանեան Թովմա, տէն Վանանդեցի — 26
 Նուրիջանեան Ղուկաս — 26
 Նուրիջանեան Միքայէլ — 26
 Շահ Աբբաս — 152
 Շալճեան Մաղաք — 9, 136, 137
 Շամախ — 128
 Շամիրեան Շամիր / Շահամիրեան Շահամիր — 43, 45
 Շանչիև Պ. — 128
 Շատախ — 139
 Շարուր Դարալագյազ — 8, 96, 97
 Շիրակ — 8, 14, 73, 76
 Շիրակացի Անանիա — 11, 14, 26, 41, 62
 Շորաոա — 128
 Շուէտ — 49, 85, 109
 Ոսկան Երեանցի — 26
 Ոսկանյան Նինել — 156, 158, 159
 Չագմագճեան Յարովթիւն — 122
 Չամչեան[ց] Միքայէլ — 7, 42, 45, 158, 159
 Չերնի Յոզեֆ — 67

- Չեռնոգորիա — 108
 Չիլի — 50
 Չինական ծով — 48
 Չինաստան — 17, 158
 Չհար մահալ — 152
 Չորրորդ Հայք — 115
- Պալենց — 91
 Պալճեան Հ. Աղեքսանդր — 60, 69
 Պալքանեան երկրներ — 9, 85, 108, 109
 Պաղեստին — 16, 38, 67
 Պոլաճեան հրատ. — 91, 155
 Պարսից ծոց — 45
 Պարսկական կայսրութիւն — 52
 Պարսկահայք — 115
 Պարսկաստան — 9, 17, 71, 93, 104, 112, 118, 122, 127—129, 136, 141, 142
 Պեճիք — 85, 109
 Պելլոփ / Բելլոփ — 10, 155, 159
 Պիպեոճեան Ա. — 106, 156
 Պլատեա — 52
 Պլովդիւ — 52, 155, 159
 Պոլաճեան հրատ. — 73
 Պոնտոս — 8, 21, 56, 118
 Պոսիդոն — 29
 Պորթալէնէս / Դնեպր — 21
 Պտղոմեոս — 14, 18
 Պոմոնայ — 29
- Զալալօղլի — 86
 Զինն եղբ. — 73
- Ռավեննա — 156
 Ռեշտ — 33
 Ռոբին Յակոբ — 28
 Ռոմելիա — 51, 58, 108
 Ռոմինիա — 58, 94, 108
 Ռուսական կայսրութիւն — 49, 103, 127
 Ռուսաստան — 17, 49, 71, 81, 85, 94, 103, 106, 109, 112, 116, 120, 123, 124
- Սահակեան Հ. Մեսրոպ — 103, 156
 Սալամիս — 52
- Սալմաստ — 131, 132, 149
 Սանահին — 136
 Սանկտ Պետերբուրգ — 9, 33, 34, 103, 128, 129
 Սաղմոսավանք — 7, 24, 25
 Սամարա — 38
 Սասուն — 8, 80, 89, 90, 135
 Սատտուն / Երևակ — 18
 Սարայ — 17, 158
 Սարգսեան Ներսէս — 73, 156
 Սբ Գրիգոր — 24, 25
 Սբ Էջմիածին — 26
 Սբ Հակոբ / Յակոբ — 25
 Սբ Ղազար — 5, 34, 38, 41, 43, 45, 46, 47, 50—53, 55, 77, 85, 94, 158, 159, 160
 Սբ Նշան — 25
 Սբ Յակոբ Մծբնայ — 25
 Սեբաստիա — 73, 106
 Սելլեր Զոն — 7, 28
 Սերբիա — 52, 102
 Սեաստոպոլ — 67
 Սիէնէս / Աստան) — 21,
 Սիսական / Սիւնիք — 8, 76, 77, 79, 115, 152
 Սիստան — 76, 77
 Սիվաս — 121
 Սիրիա / Սուրիա — 109
 Սիփան — 83
 Սիւնիք — 115
 Սիւրմենեան Գ. — 149
 Սիւրեբեկ Աղբիւնոս և Պետրոս — 26, 32
 Սլովենիա — 58
 Սմբատեան Մեսրոպ — 134
 Սյուտտ Հենրի — 61, 63
 Սպահան — 26, 45, 152, 153
 Սպանիա — 71, 85, 109
 Սպիդ Զոն — 30
 Ստեփանակերտ — 10, 142
 Ստեփանավան — 86
 Ստեփանյան Ա. Հովհաննես — 5, 99, 156, 158, 159
 Ստրաբոս — 128
 Սունդա — 48
 Սև / Սեւ ծով — 9, 15—17, 52, 53, 56, 88, 93, 105, 141, 155
 Սևան — 79, 97, 128

- Սևր — 141, 147
«Սֆինքս» հրատ. — 93
- Վալախիա — 58
Վաղարշապատ — 45
Վան — 95, 106, 119, 133, 136, 138—140
Վանա լիճ — 8, 21, 23, 72, 82, 112, 121
Վանանդ — 32
Վանանդեցի Թովմա — 7, 26—28, 32—34, 155, 159
Վանաձոր — 86
Վաշինգտոն — 33, 146
Վարդանեան Գ. — 100, 104, 137
Վասպուրական — 9, 78, 115, 121, 139
Վենետիկ — 5, 7—9, 11, 12, 16, 17, 34, 36, 38—53, 55—59, 60—62, 65—67, 70—73, 77—79, 85, 94, 103, 155, 156, 158, 159
Վենետիկի ավազան — 39
Վենոա / Վեներա — 8, 31
Վերին Հայք — 115
Վիեննա — 5, 8, 10—12, 34, 38, 60, 67—72, 83, 135, 155, 158, 159
Վիսչեր Յանսոն — 30
Վլադիկավկազ — 88
Վոսփոր / Բոսփոր — 53, 75
Վորոնցովկա — 86
Վրաստան — 33, 51, 59, 86, 103
- Տաճկահայաստան — 124, 114
Տաճկաստան — 57—59
Տայք — 115
Տանայիս / Դոն — 17
Տաշիր — 86
Տավրիդա — 57
Տատեան Յովհաննէս Ամիրա — 61, 63, 64
Տերմոպիլա — 52
Տէր Յակոբեան Աւետիք — 75, 111, 115
Տէր Մարգարեան հրատ. — 95
Տիարպեքիր — 106
«Տիգրան Մեծ» հրատ. — 153
Տիգրան Մեծ — 45
Տիգրանակերտ — 46
Տրապիզոն — 9, 119, 120
Տրդատ Երրորդ — 44
- Տրիեստ — 38, 55
Տումանի ծով — 16
Տուրուբերան — 115
- Բեֆեսոս — 21
Բոտոս / Ռոդոս — 21
- Յարական Ռուսաստան — 81, 113, 128
- Ուաթերթաուն — 5, 10, 141
Ուզունլար / Օձոն — 86
Ուիլսոն նախագահ — 140, 141
Ուիստոն Ջորջ և Ուիլլիամ — 14
Ունիա — 83
Ուլուհոջյան Գաբրիելա — 23
Ուկրաինա — 49
Ուտիք — 49, 78, 115
Ուրմիա — 150, 153
Ուրուկուայ — 50
- Փալաբաշեան Յ. Գ. — 75
Փայլածու / Մերկուրի — 29, 31
Փայտակարան — 115
Փանամա — 50
Փարիզ — 5, 10, 28, 30, 33, 34, 61—63, 70, 73, 147, 148
Փասադենա — 5, 10, 146
Փափազեան Հ. — 106
Փերիա — 152
Փիլիկեան Արամ — 102
Փխրիկյան Ժիրայր — 13, 139
Փլորիտա — 50
Փորթուկալ — 49, 71, 85, 109
Փոքր Ասիա — 9, 85, 100, 103, 104, 110, 136
Փոքր Թաթարք — 49, 59
Փոքր Հայք — 33, 45, 49, 62, 93, 104, 114, 129
«Փրինտինֆո» հրատ. — 153
- Քալանթարեան Ալեքսան (Քալանթար) — 8, 80
Քաճունի — 102, 156
Քարանյան Մաթյու — 5, 146
Քէյմուրճեան Երեմիա Չելեբի — 7, 22—24
Քլորիա — 29

Քսենոփոն — 9, 105, 136, 155
Քուանժու — 158
Քիլրտիստան — 59
Օձուն — 71
Օման Կ. — 73
Օսլո — 33
Օսմանյան կայսրություն — 12, 23, 25, 43, 49,
51, 58, 59, 61, 71, 72, 75, 80, 90—95, 108,
114, 120, 122, 123, 135, 141
Օսլալդ Ֆ. — 9, 116, 118
Օվիդիոս — 18
Օվկիանիա — 63, 72, 75, 85, 87, 109
Օրդուպատ — 95

Ֆայտոն — 29
Ֆեբոս — 29
Ֆիատրա — 49
Ֆինլանդիա — 49
Ֆրանսիա — 16, 109, 147

ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 1918 ԹՎԱԿԱՆԸ

*Հայ քարտեզագրության ծնունդը
և զարգացումը*

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային էջադրումը՝ Ռուբեն Գալչյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60×90 1/8: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 21 տպ. մամուլ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+374 10) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

**ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ծավել է Թավրիզում Մեծ եղեռնին Վանից տարագիր գաղթականների ընտանիքում, որոնք Թավրիզ էին հասել Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհով: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կրթաթոշակ է ստացել՝ սովորելու Մեծ Բրիտանիայի Բիրմինգհամ քաղաքի Աստոն համալսարանում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն:

Քարտեզագրական առաջին աշխատանքը եղել է 2004 թ. անգլերենով հրատարակված «**Հայաստանի պատմական քարտեզներ**» մեծադիր գիրքը, որտեղ պատկերված է Հայաստանը՝ սկսած Ք.ա. 6-րդ դարից մինչև ներկայումս: 2005 թվականին Երևանում հրատարակվել է աշխատության հայերեն և ռուսերեն տարբերակը, որը կոչվում է «**Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ**»: Վերոհիշյալ երկու հատորները միատեղված վերահրատարակվել են 2015 թ. Սբ Էջմիածնի պատվերով ու հովանավարությամբ՝ Մեծ եղեռնի 100-ամյակի ձեռնարկների կապակցությամբ:

Հաջորդ աշխատությունը անգլերեն և հայերեն է ու կոչվում է «**Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Հայաստան, Վրաստան և Ադրբեջան**»: Այս հատորի նպատակն է միջին դարերի պատմական աշխարհագրության միջոցով ցույց տալ, թե որ երկրներն են ժամանակին գոյություն ունեցել, և որոնք են նորեկները:

2009 թ. հրատարակվել է նրա «**Հորինված պատմություն**» գիրքն անգլերենով, իսկ 2010-ին՝ նույնը՝ հայերեն և ռուսերեն տարբերակները: «**Պատմությունների բախումը Հարավային Կովկասում. Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի քարտեզների վերագծումը**» հրատարակվել է 2012-ի հոկտեմբերին, որի ռուսերեն տարբերակը կոչվում է «**Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները**» (Մոսկվա, 2013): 2015-ի ապրիլին գիրքը Թեհրանում հրատարակվել է պարսկերենով:

2015-ին լույս է տեսել նրա «**Հայացք Հայոց պատմությանը՝ քարտեզագրական փաստաթղթերով**» անգլերեն հատորը՝ կից նույն նյութի նրա պատրաստած քարտեզների ցուցադրությանը:

«**Հայ քարտեզագրության պատմություն**» գրքի անգլերեն տարբերակը լույս է տեսել 2017-ի մարտին Երևանում: 2008 թ. Հայաստանի քարտեզագրությանը նվիրված իր ծառայությունների համար Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհել է պատվո դոկտորի կոչում: Իսկ 2013-ին նա պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով:



Հայ քարտեզագրության պատմությանը նվիրված միակ աշխատությունը հրատարակել է Հովհաննես Ստեփանյանը 1957 թ. Երևանում: Սահմանափակված լինելով Խորհրդային Միության սահմաններով և հնարավորություն ու կապեր չունենալով սփյուռքահայ և օտար մասնագետների ու համայնքների հետ՝ նրա ուսումնասիրություններն ամբողջական չեն և նույնիսկ պարունակում են սխալ տեղեկություններ: Սակայն քարտեզների հետազոտման համար հնարավորություններ և միջոցներ են անհրաժեշտ՝ դրանք մոտիկից ուսումնասիրելու համար: Նշված հատորը պարունակում է միայն մեկ անորակ և անընթեռնելի քարտեզ, որն Ամստերդամում հրատարակված *Համառարած Աշխարհացոյցն* է:

Ներկա աշխատությունը պարունակում է բոլոր հայերեն քարտեզների արտատպումները, որոնք գծագրվել կամ հրատարակվել են մինչև 1918 թվականը, իսկ տպագրված ատլասներից ներկայացված են մեկ կամ երկու քարտեզ, որպեսզի դրանցով հետաքրքրվողները հնարավորություն ունենան քարտեզի մասին ձեռք բերելու տեղեկություններ, նաև տեսնելու դրանց պատկերները: Աշխատությունը պարունակում է ավելի քան 140 քարտեզ, որոնցից մի մասը հեղինակը գտել է անհատների տներում և մասնավոր հավաքածուներում: Քարտեզների մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ: Գրքի առաջին գլուխը վերաբերում է հին ձեռագիր քարտեզներին, իսկ վերջինը պարունակում է մեծ մասամբ հետաքրքրաշարժ ձեռագիր քարտեզներ, որոնք պահպանվել են տարբեր կազմակերպությունների ու անհատների արխիվներում: Այսօր այս բոլոր քարտեզները միասնաբար ներկայացնում են հայ քարտեզագրության ժառանգությունը, որը ստեղծվել և զարգացել է պետականություն չունեցող և աշխարհով մեկ ցրված հայ համայնքներում ապրող անհատների ու կազմակերպությունների ձեռքով:



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am
www.book.am